Վ. Ն. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐՈՒՄ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

В. Н. КАЗАХЕЦЯН

СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОД ВЕЛИКОГО ПЕРЕЛОМА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1962

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47).325
Ղ-

Վ. Ն. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻՈՒՄ

A II 15129

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1962

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Տպագրվում է
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

Աշխատությունը նվիրված է Հայաստանում սոցիալիստական շինարարության կարևոր էտապներից մեկի՝ մեծ բեկման տարվա պատմությանը։ Գրքում լուսաբանվում են ռևսպուբլիկայի տվյալ էտապի պատմության հիմնական հարցերը՝ աշխատավոր մասսաների քաղաքական ակտիվության բարձրացումը, սոցիալիստական մրցության և հարվածայնության ծագումը և տարածումը, չքավոր և միջակ գյուղացիության շրջադարձը դեպի կոլտնտեսությունները, դասակարգային պայքարի սրումը, աշխատավորների նյութական դրության բարելավումը և կուլտուրական ռևոլյուցիայի համար ծավալված շարժումը։

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1929 թվականը Սովետական Միության պատմության մեջ մտավ որպես մեծ բեկման տարի՝ սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում։

Առաջին հնգամյակի առաջին տարին (1928—1929 տնտեսական տարի)[1] ավարտվեց սոցիալիստական շինարարության բնագավառում սովետական ժողովրդի ձեռք բերած խոշորագույն նվաճումներով։ Ամփոփելով այդ տարվա արդյունքները, Համ(ա)Պ Կենտրոնական Կոմիտեի 1929 թ. Նոյեմբերյան պլենումը արձանագրեց, որ այդ հաջողությունները արդյունք են բանվոր դասակարգի քաղաքական և արտադրական ակտիվության հուժկու վերելքի, որն արտահայտվեց սոցիալիստական մրցության և հարվածայնության լայն ծավալմամբ։ Հաջողությամբ լուծվում էր ծանր ինդուստրիայի համար կապիտալ ներդրումների պրոբլեմը, ծավալվեց խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը։ Արմատական տեղաշարժ կատարվեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում, որը արտահայտվեց կոլտնտեսությունների նկատմամբ չքավոր և միջակ տնտեսությունների վճռական շրջադարձով։ Պլենումը այդ շրջադարձը գնահատեց որպես «նոր պատմական էտապ մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործում»[2]։

---

1 Մինչև 1931 թ. տնտեսական տարին հաշվում էր հոկտեմբերի 1-ից մինչև մյուս տարվա սեպտեմբերի 30-ը։

2 ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 2-րդ մաս, Հայպետհրատ, 1955, էջ 786։

Այդ բոլորը վկայում էր այն մասին, որ մեր երկրի բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը հաջողությամբ իրականացնում էին սոցիալիզմի հիմքերի կառուցման առաջին հնգամյակը։

Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին Սովետական Հայաստանի աշխատավորները քաղաքական և արտադրական բարձր խանդավառությամբ ձեռնամուխ եղան առաջին հնգամյա պլանի կենսագործմանը։

Սույն աշխատության նպատակն է տալ առաջին հնգամյա պլանը կենսագործելու համար Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական Հայաստանի աշխատավորների մղած պայքարի կարևոր էտապներից մեկի՝ մեծ բեկման տարվա պատմությունը։

Պատմական այդ ժամանակաշրջանին նվիրված հատուկ ուսումնասիրություն մինչև այժմ գոյություն չունի։ Միայն առանձին գրքերում հեղինակները այս կամ այն չափով անդրադարձել են այդ շրջանի պատմությանը, նրա որոշ հարցերին[1]։ Մեր կողմից հրատարակվել են առանձին հոդվածներ, որոնք լուսաբանում են այդ պատմական էտապի տարբեր հարցերը[2]։

---

1 Տե՛ս Բ. Օհանջանյան, Հայաստանի Կոմունիստական պարտիան գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղվող պայքարի տարիներին (1930—1931), Հայպետհրատ, 1955։ Վ. Մելիքսեթյան, Սովետական Հայաստանը երկրի ինդուստրացման համար մղվող պայքարում (Վ. Մելիքսեթյան, Հ. Կարապետյան, Սովետական Հայաստանի պատմության ուրվագծեր, պրակ 2-րդ, Երևան, 1957)։ Ա. Մ. Հակոբյան, Հայաստանի Կոմունիստական պարտիան երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղված պայքարում։ Սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտի կառուցումը (1926—1932)։ (Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Հայպետհրատ, 1958)։ Կ. Խուդավերդյան, Հայաստանի Սովետների VI համագումարը (ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1957, № 3)։ Հ. Ա. Ավետիսյան, Հայաստանի Կոմերիտմիությունը սոցիալիստական ինդուստրացման համար մղված պայքարում, Երևան, 1960։

2 Տե՛ս Վ. Ն. Ղազախեցյան, Հայկական ՍՍՌ առաջին հնգամյա պլանը և սոցիալիստական մրցումը արդյունաբերության մեջ (Երևանի պոլիտեխ-

Սույն ուսումնասիրությունը գրելու համար օգտվել ենք ՍՄԿՊ և ՀԿՊ համագումարների ու կոնֆերանսների, Կենտկոմների պլենումների, միութենական և ռեսպուբլիկական Սովետների համագումարների որոշումներից և պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ու կառավարության դիրեկտիվներից։ Օգտագործել ենք կառավարական, պրոֆմիութենական, տնտեսական, արդյունաբերական և այլ օրգանների ու կազմակերպությունների հաշվետվությունները, վիճակագրական ու փաստաթղթերի ժողովածուները, մամուլը, հրատարակված գրականությունը։ Օգտագործած նյութերի զգալի մասը, որը հրատարակված չէ, ժողովել ենք ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի, ՍՍՌՄ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և Սոցիալիստական շինարարության Պետական Կենտրոնական, ինչպես նաև ՀՍՍՌ ՀՌՍՇ Պետական Կենտրոնական արխիվների տարբեր ֆոնդերից։

Այս գիրքը 1953 թ. մեր կողմից պաշտպանած թեկնածուական դիսերտացիայի վերամշակված վարիանտն է։

* * *

Առաջին հնգամյակին նախորդող ժամանակաշրջանում, Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում Հայաստանի աշխատավորները մեծ նվաճումներ էին ձեռք բերել ժողովրդական տնտեսության զարգացման բնագավառում։ Ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1928 թ. արդեն զգալի չափով գերազանցել էր նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակը։ Սոցիալիստական ինդուստրացման քաղաքականության կենսագործման շնորհիվ ռեսպուբլիկայում կառուցվել և կառուցվում էին արդյունաբերական օբյեկտներ,

---

նիկական ինստիտուտի «Դիտաշխատությունների ժողովածու», № 15, 1957)։ Նույնի՝ Կոլեկտիվացման նախապատրաստումը Հայաստանում 1928—1929 թթ. (ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1959, № 5)։

գյուղատնտեսության մեջ արմատավորվել էր արտադրական կոոպերացիան, մեծ թափով ծավալվում էր կուլտուրական շինարարությունը։

Ինդուստրացման առաջին տարում՝ 1926 թ. մայիսի 16-ին շահագործման հանձնվեց ռեսպուբլիկայի ինդուստրիալ ձեռնարկությունների առաջնեկը՝ Երևանի հիդրոէլեկտրակայանի առաջին հերթը։ 1927 թ. հուլիսի 24-ին սկսվեցին այն ժամանակ Հայաստանում ամենահզոր հիդրոէլեկտրակայանի՝ Զորագեսի շինարարական աշխատանքները։ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի 8-րդ տարեդարձի օրը՝ 1928 թ. նոյեմբերի 29-ին սկսեց էլեկտրական էներգիա տալ Լենինականի կայանը։

1927/28 տնտեսական տարում Հայաստանում գործող քսան էլեկտրակայանները 1913 թ. համեմատությամբ արտադրեցին չորս անգամ ավելի էլեկտրաէներգիա[1]։ Արդյունաբերության կապիտալ ներդրումների զգալի մասը հատկացվում էր էլեկտրիֆիկացիային։ Էներգետիկայի զարգացումը մեծ հեռանկարներ էր բացում ռեսպուբլիկայի բնական հարստությունները շահագործելու, արտադրողական ուժերի վերելքը ապահովելու համար։

Մեծ աշխատանքներ էին կատարվել պղնձարդյունաբերության բնագավառում։ Սակայն պղնձի արտադրության նախապատերազմյան մակարդակը դեռևս չէր վերականգնվել, որովհետև դրա համար պահանջվում էին մեծ կապիտալ ներդրումներ։

1925 թ. հունիսին Սովետական Միության Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի որոշմամբ ֆինանսական ու տեխնիկական միջոցներ հատկացվեցին Հայաստանի պղնձարդյունաբերության վերականգնման համար[2]։ 1924—1925 թթ.

---

[1] Социалистическое строительство Армянской ССР, Ереван, 1940, стр. 24. „Советская Армения за 40 лет. Статистический сборник", Армгосиздат, Ереван, 1960, стр. 67.

[2] ՀՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության Պետական Կենտրոնական արխիվ (այնուհետև՝ Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ ՊԿԱ), ֆ. 40/113, ց. 3, գ. 401, թ. 47։

սկսվեց Ալավերդու և Ղափանի պղնձի հանքահորերի, ձուլարանների վերականգնումը և հանքապաշարների հետախուզումը։ Աշխատանքները սկսելուց երկու տարի անց՝ 1926/27 թ. արդյունահանվեց մոտավորապես 20 հազար, իսկ 1927/28 թ.՝ ավելի քան 47 հազար տոննա հարստացված հանքաքար։ Իսկ կարմիր պղնձի ձուլումը համապատասխանաբար կազմեց 1600 և 3000 տոննա[1]։

Էժան էլեկտրաէներգիայի և հումքի առկայությունը հնարավորություն էին տալիս Հայաստանում զարգացնելու քիմիական արդյունաբերությունը։ 1927 թ. ապրիլին գործարկվեց Երևանի կարբիդի գործարանը։

Բնական հարուստ հումքի պաշարների բազայի վրա սկզբնավորվեց շինանյութերի արդյունաբերությունը։ Մասնավորապես պեմզայի և տուֆի արտադրությունն ուներ միութենական նշանակություն, որի համար «Անի-Պեմզա»-ն և «Արթիկ-տուֆ»-ը մտցվեցին այդ կարգի ձեռնարկությունների շարքը։ 1928 թ. հուլիսի 27-ին, ապա՝ օգոստոսի 31-ին ԽՍՀՄ Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը ընդունեց երկու կարևոր որոշում՝ Արթիկի տուֆը շինարարության մեջ օգտագործելու և տուֆի արդյունաբերությունը զարգացնելու մասին[2]։ Այդ որոշումների համաձայն 1928 թ. վերջերին սկսվեց Լենինական—Արթիկ երկաթուղագծի (28,6 կիլոմետր երկարությամբ) կառուցումը և ծավալվեցին տուֆի հանքերի հետախուզական աշխատանքները։ Իսկ պեմզայի արտադրությունն ավելի ընդարձակվեց Անի կայարանից դեպի հանքերը տանող երկաթուղագծի կառուցումից հետո (1929 թ.)։

Երևանում և Լենինականում կառուցվեցին մեխանիկական գործարաններ, որոնց բազայի վրա հետագայում ռեսպուբլիկայում զարգացավ մեքենաշինությունը։

---

[1] Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода, Эривань, 1928, стр. 33.

[2] Տե՛ս ЦГАОР и СС СССР, ф. 5446, оп. 10, д. 1130, л. 4, 5.

Հայաստանում զարգանում էր նաև թեթև ու սննդի արդյունաբերությունը, ինչպես գինու-կոնյակի, կոնսերվի արտադրությունը, տեքստիլ արդյունաբերությունը և այլն։

1923—1924 թթ. «Արարատ» տրեստը Մոսկվայում, Լենինգրադում և Դոնի-Ռոստովում կազմակերպեց իր գործարան-ֆիլիալները և առևտրական բազաները, որը մեծ չափով խթանեց Հայաստանում գինու ու կոնյակի արդյունաբերության զարգացմանը։

Հայաստանում աշխատում էին մի քանի խոշոր բամբակազատիչ գործարաններ, երկու պահածոների գործարան (Երևանում և Մեղրիում), իսկ 1926 թ. Երևանում շահագործման հանձնվեց ձեթ-օճառ գործարանը։

Տեքստիլ արդյունաբերությունը հիմնականում կենտրոնանում էր Լենինականում, որտեղ 1924 թ. աշխատում էր մանարան գործարանը, որն ուներ 16 հազար իլիկ։ Հետո նա համալրվեց Գերմանիայից ստացված 24 հազար իլիկով։ Աշխատում էին գործվածքային և տրիկոտաժի գործարանները։

Սովետական իշխանության առաջին ութ տարիների ընթացքում Հայաստանի արդյունաբերության մեջ, էներգետիկայի և տրանսպորտի հետ միասին, ներդրվեց 31,4 միլիոն ռուբլի՝ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ ներդրված 73,1 միլիոն ռուբլուց[1]։

Նոր գործարանների կառուցման շնորհիվ կարճ ժամանակամիջոցում զգալի չափով ավելացավ արդյունաբերության համախառն արտադրանքը, որը 1927/28 թ. հասավ 28,2 միլիոն ռուբլու։ Ամբողջ արդյունաբերության արտադրանքի մեջ խոշոր արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում էր 68,8 տոկոս։ 1913 թ. համեմատությամբ արդյունաբերության արտադրանքը աճել էր 36,0 տոկոսով, իսկ 1919 թ. համեմատությամբ՝ 17 անգամ[2]։

---

[1] Социалистическое строительство Армянской ССР (1920—1940), стр. 19.

[2] Նույն տեղում, էջ 23։

Խոշոր փոփոխություններ էին տեղի ունեցել աշխատավոր գյուղացիության կյանքում։ Սովետական իշխանությունը ազատեց գյուղացուն կալվածատերերի ու կապիտալիստների շահագործումից, նրան դարձրեց իր հողի տերը։ Պրոլետարական ռևոլյուցիայի հետևանքով աշխատավոր գյուղացիությունը լրացուցիչ ստացավ կալվածատիրական, վանքատիրական և արքունական 200 հազար դեսյատին ազգայնացված հող[1]։

1928 թ. ամբողջ ռեսպուբլիկայում ցանքատարածությունները կազմում էին 332 հազ. հեկտար, ընդհանուր մոտենալով 1913 թ. չափերին (345,7 հազ. հեկտար)[2]։ Վերականգնվել և մաքրվել էին ավերված հին ջրանցքները և կառուցվել էին մի քանի նոր ջրանցքներ (Շիրակի, Փոքր Սարդարապատի, Կարճևանի, Այղրի լճի ջրհան կայանը և այլն), որի հետևանքով զգալի չափով ավելացել էին ոռոգվող հողատարածությունները։

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1913 թ. 65,8 միլիոն ռուբլու դիմաց 1928 թ. կազմում էր 72,4 միլիոն ռուբլի (1926/27 թ. անփոփոխ գներով)[3], որը նշանակում է նախապատերազմյան դրության համեմատությամբ 10,0 տոկոսով աճ։

Չնայած այդ հաջողություններին գյուղատնտեսության, մանավանդ նրա ապրանքային մասի զարգացման տեմպերը խիստ ետ էին մնում սոցիալիստական ինդուստրիայի զարգացման տեմպերից։ Այդպես էր դրությունը ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ մեր ռեսպուբլիկայում։ Գյուղատնտեսության ետ մնալու պատճառը նրա մանրատվածությունն էր, տեխնիկական և կուլտուրական ցածր մակարդակը։ Այդ դրությունից կարելի էր դուրս գալ գյուղատնտեսությունը սոցիալիստական ուղիով խոշորացնելու միջոցով։

---

[1] ՀԿ(բ)Կ VI համագումարի բանաձևերն ու որոշումները, 1929, էջ 24։

[2] Народное хозяйство Армянской ССР, Статистический сборник, Госстатиздат, Ереван, 1957, стр. 60.

[3] Социалистическое строительство Армянской ССР, стр. 47.

1927 թ. Կոմունիստական պարտիայի XV համագումարը որոշում ընդունեց կոլեկտիվացումը զարգացնելու և կուլակության դեմ պայքարը ուժեղացնելու մասին, որից հետո, ինչպես բոլոր սովետական ռեսպուբլիկաներում, այնպես էլ Սովետական Հայաստանում ծավալվեց գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների և կոլտնտեսությունների կազմակերպումը։

Սոցիալիստական ինդուստրացման հետ մեկտեղ, ժողովրդական տնտեսության նվաճումների հետևանքով զգալի չափով բարելավվեց Հայաստանի աշխատավորների նյութական և կուլտուրական դրությունը։ Աշխատավորների դրության բարելավման մասին է վկայում աղքային եկամտի աճը, ռեալ աշխատավարձի բարձրացումը, առևտրի ծավալումը և այլն։

1923/24—1927/28 թթ.՝ հինգ տարվա ընթացքում Հայկական ՍՍՌ պետական բյուջեի ծախսային մասը կազմում էր 52,0 միլիոն ռուբլի, որի մոտավորապես կեսը՝ 22,2 միլիոն ռուբլին ծախսվել է սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար։ Նույն ժամանակամիջոցում ռեսպուբլիկական բյուջեի 34,0 միլիոն ռուբլուց նույն նպատակի համար ֆինանսավորվել է 11,0 միլիոն ռուբլի, իսկ տեղական բյուջեների՝ 29,9 միլիոն ռուբլուց՝ 11,2 միլիոն ռուբլին[1]։

Հատավաճառ ապրանքաշրջանառության գումարը (հասարակական սննդի ձեռնարկությունների շրջանառության հետ միասին) 1928 թ. կազմում էր ավելի քան 62 միլիոն ռուբլի[2]։ Առևտրի մեջ իշխող դեր էր խաղում պետական-կոոպերատիվ սեկտորը, իսկ մասնավորը դուրս էր մղվում սոցիալիստական շինարարության հաջողություններին զուգընթաց։

---

[1] Народное хозяйство Армянской ССР, Статистический сборник, стр. 171, 173 и 175.

[2] Социалистическое строительство Армянской ССР (1920—1940), стр. 97.

Գյուղատնտեսության վերականգնման, Սովետական պետության օգնության շնորհիվ գյուղում մեծ չափով կրճատվեց ցանք, անասուն և գյուղատնտեսական ինվենտար չունեցող տնտեսությունների թիվը։

Ըստ Հայաստանի Կենտրոնական Վիճակագրական վարչության ընտրովի՝ տասը տոկոսային վիճակագրության տվյալների 1922 թ. մինչև 1929 թ. ցանք չունեցող տնտեսությունների տեսակարար կշիռը գյուղացիական տնտեսությունների մեջ 32,9-ից իջել էր 10,8 տոկոսի, իսկ բանող անասուն չունեցող տնտեսություններինը՝ 66,0-ից 35,5 տոկոսի[1]։ Զբաղվող գյուղացիների զգալի մասը դարձել էր միջակ տնտեսատեր։ Այնուհանդերձ միայն գյուղատնտեսության կոլեկտիվացումը աշխատավոր գյուղացիության համար կրստեղծեր ունևոր և կուլտուրական կյանքի հնարավորություն։

Անցած ութ տարիների ընթացքում խոշոր հաջողություններ էին ձեռք բերվել կուլտուրական շինարարության բնագավառում։ Չնայած տնտեսական շինարարության հսկայական ֆինանսական պահանջներին, պետությունը զգալի միջոցներ էր տրամադրում նաև այդ նպատակին։ Կառուցվել և գործում էին բազմաթիվ դպրոցներ, ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ և կինո-թատրոններ։

Հանրակրթական դպրոցների թիվը 1927/28 ուսումնական տարում հասավ 823-ի, 1914/15 թ. 459-ի դիմաց, սովորողների թիվը ավելացավ մոտ երկու և կես անգամ[2]։ Հայ ժողովրդի կուլտուրական խոշոր նվաճումներից էր Երևանի Պետական համալսարանի կազմակերպումը (1921 թ.)։ Երևանում գործում էին նաև Պետական կոնսերվատորիան (1924 թվականից) և Անդրկովկասյան Անասնաբուժական ինստիտուտը (1928/29 ուս. տարվանից)։ 1927/1928 ուսումնական

---

[1] Տվյալները վերցրել ենք Ար. Մարուխյանի «Սոցիալ-տնտեսական փոփոխությունները հայկական գյուղում» հոդվածից (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1948, № 5, էջ 10, 15)։

[2] Советская Армения за 40 лет. Статистический сборник, тр. 181.

տարում գործում էին 12 տեխնիկում և այլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ։

Կուլտուրական ռևոլյուցիայի իրականացման և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ստեղծման համար մղվող պայքարը սոցիալիստական շինարարության կարևոր բնագավառներից մեկն էր։

Այսպիսով, Սովետական իշխանության ութ տարիների ընթացքում Հայկական ՍՍՌ աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ վճռական հաջողություններ էին հասել ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացման բնագավառներում։

Հաջողությամբ կենսագործվում էին Վ. Ի. Լենինի ցուցումները՝ էլեկտրիֆիկացիան և ռոդգումը զարգացնելու մասին։ Սովետական ժողովուրդների հետ միասին ռեսպուբլիկայի աշխատավորները, հաղթանակի նկատմամբ վստահությամբ և հավատով ներշնչված, իրականացնում էին սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը, որի բաղկացուցիչ մասերն են՝ սոցիալիստական ինդուստրացումը, կոոպերացումը և կուլտուրական ռևոլյուցիան։

Հայաստանի աշխատավորները երկրում սովետական կարգերի հաստատման 9-րդ տարին դիմավորում էին Սովետական Միությունում սոցիալիստական շինարարության նոր, աննախընթաց հաղթանակի պայմաններում։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ: ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՍՈՎԵՏՆԵՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ժողովրդական տնտեսության վերականգնումը ավարտելուց հետո, երբ Սովետական Միությունում առաջին պլանի վրա դրվեց երկրի սոցիալիստական շինարարության գլխավոր հարցը՝ ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման, գյուղում տնտեսության սոցիալիստական ձևերի ամրապնդման ու ծավալման նյութական-տեխնիկական բազայի ստեղծումը, անհրաժեշտ դարձավ հնգամյա պլանի մշակումը։

Առաջին հնգամյա պլանի կազմումը հնարավոր դարձավ Սովետական Միության ժողովրդական տնտեսության հաջողությունների և տնտեսության զարգացումը պլանավորելու ուղղությամբ անցած տարիներին ձեռք բերած փորձի շնորհիվ։

Ժողովրդա-տնտեսական ընթացիկ և հեռանկարային պլանները (տարեկան, հնգամյա, յոթնամյա և այլն) ելնում են ժողովրդական տնտեսության պլանաչափ, պրոպորցիոնալ զարգացման և սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքներից, արտահայտում են նրանց պահանջները։

Տնտեսության պլանաչափ զարգացման օրենքը հատուկ է սոցիալիստական սիստեմին, որտեղ գոյություն ունի արտադրության միջոցների հանրային, սոցիալիստական սե-

փականություն, որով և պայմանավորվում է պլանաչափ զարգացման հնարավորությունն ու անհրաժեշտությունը։

Բացատրելով պլանաչափ զարգացման անհրաժեշտությունը, Վ. Ի. Լենինը նշել է, որ սոցիալիստական ռևոլյուցիայի վիթխարի խնդիրն է «ամբողջ պետական տնտեսական մեխանիզմի վերածումը մի միասնական խոշոր մեքենայի, մի տնտեսական օրգանիզմի, որն աշխատի այնպես, որպեսզի հարյուր-միլիոնավոր մարդիկ ղեկավարվեն մի պլանով»[1]։

Կապիտալիստական հասարակարգին հատուկ է արտադրության անարխիայի և կոնկուրենցիայի օրենքը, որը կապված է արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականության հետ։ Դրա արդյունքն է արտադրության զարգացման ցիկլային բնույթը և պարբերաբար տեղի ունեցող գերարտադրության ճգնաժամերը, որպես կապիտալիզմի մշտական ուղեկիցներ։

Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացումը սոցիալիզմի մեծագույն առավելությունն է կապիտալիզմի հանդեպ։ Սոցիալիզմը ազատ է արտադրության զարգացումը ետ մղող ճգնաժամից ու կապիտալիզմին հատուկ մյուս արատներից։ Սոցիալիստական էկոնոմիկան զարգանում է վերընթաց գծով, արագ տեմպերով։

Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի պահանջները կենսագործվում են Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության կողմից՝ պլանների միջոցով, որոնք կազմակերպում և ուղղություն են տալիս աշխատավոր մասսաների ստեղծագործական գործունեությանը, նրանց ջանքերը կենտրոնացնում մեկ միասնական, ընդհանուր նպատակի ուղղությամբ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից անմիջապես հետո Սովետական Միության Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ամենայն վճռականությամբ դրեցին համաժողովրդական հաշվառում կազ-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 92։

մակերպելու և մթերքների արտադրության ու բաշխման վրա վերահսկողության հաստատելու խնդիրը։ Դրանք առաջին քայլերն էին ժողովրդական տնտեսության մեջ պլանավորման սկզբունքը իրականացնելու գործում։

ԳՕԷԼՌՕ-ի պլանը, որը Սովետական Միության զարգացման առաջին հեռանկարային պլանն էր, և Սովետական պետության 20-ական թվականների տարեկան օրինենտիր ստուգիչ թվերը կարևոր նշանակություն ունեցան մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման գործում։

Սոցիալիստական ինդուստրացմանն անցնելու կապակցությամբ տնտեսությունը պլանաչափորեն վարելու տարեկան ստուգիչ թվերը դարձել էին անբավարար։ Ֆաբրիկաների, գործարանների, երկաթուղիների շինարարությունը, որը երկար ժամանակ էր պահանջում, ինչպես և երկրի սոցիալիստական խոշոր վերափոխումների նախատեսումը մի տարվա պլաններում չէր կարող պարփակվել։ Բազմամյա պլանների մշակումը դարձել էր օբյեկտիվ անհրաժեշտություն։

Բացատրելով բազմամյա պլանների մշակման նշանակությունը և անհրաժեշտությունը, Վ. Ի. Լենինը գրել է, որ պատմության մեջ առաջին անգամ Սովետական պետությունը հազվադեպ առիթ է ստացել «արմատական սոցիալական փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ ժամկետներ սահմանելու.., և մենք այժմ պարզ տեսնում ենք, թե ի՞նչ կարելի է անել հինգ տարվա մեջ և ի՞նչ բանի համար հարկավոր են ավելի մեծ ժամկետներ»[1]։

Վերականգնման շրջանի վերջում հինգ տարվա ժողովրդա-տնտեսական պլան կազմելու առաջին փորձն արվեց։ Սակայն այդ վարիանտը հեռու էր կատարյալ լինելուց։ 1927 թ. փետրվարին Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի պլենումը պարտավորեցրեց Քաղբյուրոյին՝ արագացնել ժողովրդական տնտեսության զարգացման օրինե-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 574։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2
Ա 15149

տիր հնգամյա պլանի մշակումը[1]։ Իսկ ՍՍՌՄ Սովետների IV համագումարը (1927 թ. ապրիլ) պարտավորեցրեց կառավարությանը՝ շատ կարճ ժամանակամիջոցում կազմել Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը[2]։ Նույն թվականի դեկտեմբերին կայացած պարտիայի XV համագումարը ընդունեց դիրեկտիվներ այդ պլանը կազմելու վերաբերյալ։ Համագումարը որպես հնգամյակի հիմնական տնտեսական խնդիր ծանր ինդուստրիայի զարգացման համար նշեց առավել արագ տեմպեր, որով ապահովվելու էր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերակառուցումը, վերելքը, ինչպես և սոցիալիստական սեկտորի կողմից կապիտալիստական տարրերի վճռականորեն դուրս մղումը էկոնոմիկայից, և մանր արտադրողների աստիճանաբար կոոպերացումը։

Սովետական Միության Պետպլանը և Ժողովրդական Տնտեսության Գերագույն խորհուրդը (ԺՏԳԽ) պլանի մշակմանը ձեռնամուխ եղան համագումարից անմիջապես հետո։ Հաղթահարելով հեռանկարային պլանավորման բավարար փորձի բացակայության, դասակարգային թշնամիների և հակապարտիական տարրերի դիմադրության հետ կապված դժվարությունները, 1928 թ. վերջին այն հիմնականում ավարտեցին։ Դեկտեմբերին արդյունաբերության պլանի ստուգիչ թվերը հրապարակվեցին մամուլում։ Պլանի քննարկումը դրվեց սովետական հասարակության ուշադրության կենտրոնում։ Նրա քննարկմանը մասնակցեցին աշխատավորական լայն մասսաները՝ բանվորությունը, մասնագետները, գիտնականները, ինտելիգենցիան և մյուս աշխատավորները։ Արտադրական խորհրդակցությունները, բանվորական ժողովները, ինժեներա-տեխնիկական սեկցիաները մանրամասն ուսումնասիրում էին հնգամյակի հիմնական պրոբլեմները։

---

[1] Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», 2-րդ մաս, էջ 435։

[2] Տե՛ս „Съезды Советов в документах. Сборник документов в трех томах", том III, Москва, 1960, стр. 126.

Պետությունը Մոսկվայում անցկացրեց 16 համամիութենական կոնֆերենցիա՝ հնգամյա պլանի տարբեր խնդիրների վերաբերյալ։ Պրոֆմիությունների VIII համագումարում (1928 թ. դեկտեմբեր) լսվեց հատուկ զեկուցում և այլն[1]։

Պետությունը պատրաստել էր հնգամյա պլանի երկու վարիանտ՝ մինիմալ և օպտիմալ։ Մինիմալ վարիանտը օպտիմալից, ըստ նախատեսված զարգացման տեմպերի, հետ էր մնում 20 տոկոսով։ Այն պաշտպանվում էր պարտիայի մեջ աջ օպորտունիստների կողմից։ Աջ կապիտուլյանտների խումբը, որը գլուխ բարձրացրեց 1928 թ., երբ սոցիալիզմի հարձակման հետևանքով կուլակներն ու մյուս կապիտալիստական տարրերը ուժեղացրել էին իրենց դիմադրությունը և երկրում սրվել էր դասակարգային պայքարը, հանդես էր գալիս երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականության դեմ։ Գատաճառաբանելով սոցիալիստական շինարարության դժվարությունները, օպորտունիստները փորձում էին ետ պահել պարտիային և կառավարությանը ծանր ինդուստրիայի զարգացման արագ տեմպերի կուրսից, առաջարկում էին պակասեցնել կապիտալ ներդրումների գումարը, հավասարվել «ենթ տեղերին»։ Նրանք հանդես էին գալիս գյուղի սոցիալիստական վերակառուցման և կապիտալիստական տարրերի՝ կուլակների վրա ուժեղացվող հարձակման դեմ։ Տրոցկիստները և զինովիևականները նույնպես ժխտում էին մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության լենինյան ծրագիրը և քաղաքականությունը։

Կոմունիստական պարտիան մերկացրեց հակալենինյան խմբերի կապիտուլյանտական վարքագիծը, դրանով իսկ ապահովեց Կենտկոմի լենինյան գծի կիրառման հիման վրա սոցիալիզմի հետագա հաղթանակները։

1929 թ. մարտի վերջին Ժողկոմխորհի և Աշխատանքի ու Պաշտպանության խորհրդի համատեղ նիստը, սովետական

---

1 ՍՍՌՄ Պատմություն։ Սոցիալիզմի դարաշրջան, Հայպետհրատ, 1959, էջ 502։

բոլոր ռեսպուբլիկաների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոշեց պաշտպանել հնգամյա պլանի օպտիմալ վարիանտը։ Սովետական կառավարության ապրիլի 23-ի «1928/29—1932/33 թթ. ժամանակաշրջանի ժողովրդատնտեսական հնգամյա պլանի մասին» ընդունած որոշումով հաստատվեց այդ վարիանտը։ Կոմունիստական պարտիայի XVI կոնֆերենցիան (1929 թ. ապրիլի 23—29) և Սովետների V համագումարը (մայիսի 20—28) վերջնականապես հաստատեցին առաջին հնգամյա պլանը։

Առաջին հնգամյա պլանը, ըստ պարտիայի XVI կոնֆերենցիայի բնորոշման, հանդիսանում էր ժողովրդական տնտեսության ամբողջ ճակատով «սոցիալիստական ծավալուն հարձակման ծրագիր»[1]։ Այն նախատեսված էր սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցման և քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի հետագա դուրս մղման համար, որի նպատակը նրանց լիակատար վերացումն էր[2]։ Այդ պլանը երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ծրագիրն էր։ Առաջին հնգամյակի հիմնական խնդիրն էր ստեղծել տեխնիկական բազա, որը ընդունակ լիներ տեխնիկապես վերազինելու ամբողջ ժողովրդական տնտեսությունը։

Պլանը ապահովում էր երկրի ինդուստրացման հիմքի՝ արտադրության միջոցների արտադրության առավելագույն զարգացումը, ժողովրդական տնտեսության սոցիալիստական սեկտորի վճռական ուժեղացումը, երկրի պաշտպանունակության բարձրացումը, պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումը և բանվորա-գյուղացիական դաշինքի ուժեղացումը, մասսաների նյութական-կուլտուրական զգալի վերելքը։ Առաջին հնգամյա պլանը խոշոր քայլ էր Սովետական Միության տեխնիկա-տնտեսական հետամնացությունը վերացնելու ճանապարհին[3]։

---

1 ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 2-րդ մաս, էջ 725։

2 Տե՛ս «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմություն», Հայպետհրատ, 1959, էջ 501—505։

3 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», 2-րդ մաս, էջ 724։

Պետական կապիտալ ներդրումների մեծ մասը հատկացվում էր ծանր ինդուստրիայի զարգացմանը։ Միջոցների այդպիսի բաշխումը բխում էր մեր՝ հետամնաց, ագրարային երկիրը առաջավոր, բարձր զարգացած ինդուստրիալ տերություն դարձնելու քաղաքականությունից։

Առաջին հնգամյա պլանում կարևոր տեղ էր գրավում ազգային ռեսպուբլիկաների զարգացումը։ Խոսելով հնգամյա պլանի հիմնական ուղղության մասին, այնուհետև Սովետների Համամիութենական V համագումարն իր որոշման մեջ արձանագրեց. «Միաժամանակ համագումարը գոհունակությամբ նշում է հնգամյա պլանով նախատեսված ՍՍՌ Միության հետամնաց շրջանների և ազգությունների տնտեսական ու կուլտուրական վճռական վերելքը»[1]։

Պլանաչափ, պրոպորցիոնալ զարգացումը ենթադրում է արտադրության նոր, սոցիալիստական տեղաբաշխում։ Նա ապահովում է արտադրությունը հումքի աղբյուրներին մոտենալը և ժողովուրդների միջև փաստական անհավասարության լիկվիդացումը, նախկինում հետամնաց ժողովուրդների և ազգերի տնտեսական ու կուլտուրական արագ վերելքը։ Ղեկավարվելով այդ սկզբունքներով, պարտիայի XV համագումարը իր որոշումներում ընդգծեց, որ «հնգամյա պլանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի ազգային հետամնաց ծայրամասերի և հետամնաց շրջանների էկոնոմիկայի և կուլտուրայի վերելքի հարցերին, ելնելով նրանց տնտեսական և կուլտուրական հետամնացությունն ամբողջապես լիկվիդացնելու անհրաժեշտությունից, համապատասխանաբար նախատեսելով նրանց էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման ավելի արագ տեմպ, ելնելով այդ շրջանների կարիքներն ու պահանջները Միության կարիքների ու պահանջների հետ շաղկապելուց»[2]։

Ելնելով պարտիայի XV համագումարի մշակած դիրքորոշումներից, Հայաստանի պարտիական, պետական և տնտե-

---

[1] Съезды Советов в документах, Сборник документов в трех томах. том III, Москва, 1960, стр. 156

[2] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 2-րդ մաս, էջ 586։

սական մարմինները անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք ծավալեցին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը մշակելու ուղղությամբ։

* * *

Ռեսպուբլիկայի առաջին հնգամյա պլանի հարցը քննվեց դեռևս 1928 թ. սկզբին։

1928 թ. հունվարի 28-ից մինչև փետրվարի 2-ը կայացած Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի 2-րդ պլենումը լսեց և քննարկեց ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանի զեկուցումը «Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարների մասին»։ Պլենումում լսվեցին նաև զեկուցումներ Հայգյուղկոոպի գործունեության, Հողաշինարարության և էքսպորտի խնդիրների մասին, որոնց առթիվ ընդունվեցին համապատասխան բանաձևեր։ Պլենումը ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում դրեց կոլեկտիվացումը և կոոպերացումը ծավալելու աշխատանքը, նշելով, որ սկզբում պետք է զարգացնել պարզ տիպի արտադրական կոոպերատիվները, ստուգանաբար անցնելով ավելի զարգացած ձևերին։ Պլենումը դիրեկտիվ տվեց առաջիկայում կոոպերացնել բոլոր չքավորներին և միջակ տնտեսությունների մեծ մասը։ Անհրաժեշտ համարվեց ուժեղացնել քաղաքական-բացատրական աշխատանքը գյուղում, ավելացնել կոլտնտեսություններին, չքավորներին և միջակներին հատկացվող վարկերը, գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումը, արագացնել հողաշինարարական աշխատանքների տեմպերը և այլն։

Պլենումի հանձնարարությամբ Հայաստանի Պետպլանը ԱԽՖՍՀ Պետպլանի հետ միասին մշակեցին ռեսպուբլիկայի հնգամյա պլանի ստուգիչ թվերը։ Այդ թվերի հիման վրա ռեսպուբլիկայի ԺՏԽ-ի տրեստներն ու ձեռնարկությունները և մյուս համապատասխան կազմակերպություններն ու օրգանները պատրաստեցին իրենց պլանները, այդ գործին մասնակից դարձնելով աշխատավորական լայն շրջանները։

Այդ աշխատանքները կատարվեցին ամբողջ 1928 թ. և 1929 թ. առաջին ամիսների ընթացքում։

Ռեսպուբլիկայի հնգամյա պլանի նախագիծը նախ քննարկվեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի VI համագումարում (1929 թ. հունվար)։ Լսվեցին ՀԿ(բ)Պ ԿԿ-ի հաշվետվությունը (զեկուցող Կենտկոմի քարտուղար Հ. Կոստանյան), «Արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման հնգամյա հեռանկարների մասին» և «Գյուղական աշխատանքների հիմնական խնդիրները» զեկուցումները (զեկուցողներ՝ Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյան և ՀԿ(բ)Պ Կենտկոմի երկրորդ քարտուղար Ա. Խանջյան)։

Պայքարելով պարտիայի XV համագումարի որոշումների կենսագործման համար, Հայաստանի Կոմունիստական պարտիան, ռեսպուբլիկայի կառավարությունը և աշխատավորները անհախընթաց հաջողություններ էին ձեռք բերել սոցիալիստական ինդուստրիան զարգացնելու, գյուղատնտեսության կոլեկտիվացումը նախապատրաստելու, ժողովրդական տնտեսությունից կապիտալիստական տարրերին դուրս մղելու և մյուս առաջադիմություններում։

Ամրապնդվել էր պարտիայի ղեկավար դերը ռեսպուբլիկայի տնտեսական և քաղաքական կյանքում։ Բարձրացել էր նրա հեղինակությունը ժողովրդական մասսաների մեջ։ Աճել և ամրապնդվել էին պարտիական բջիջները, հատկապես գյուղական վայրերում կազմակերպվել էին բազմաթիվ նոր բջիջներ, որը վկայում էր գյուղացիական բնակչության նկատմամբ պարտիայի ղեկավար դերի էլ ավելի բարձրացման մասին։

1929 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Կոմունիստական պարտիայի շարքերում հաշվում էր 10.600 անդամ և թեկնածու, իսկ մեկ տարի անց այդ թիվը հասավ 12.280-ի։ Նույն ժամանակամիջոցում պարտիականների թիվը գյուղում 3200-ից բարձրացավ 4640-ի[1]։ Բարելավվել էր

[1] «Խորհրդային Հայաստան», 28 մայիսի 1930 (ՀԿ(բ)Պ VII համագումարի նյութերից)։

կոմերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունների մասնակցությունը տնտեսական և հասարակական աշխատանքներում։

Համագումարը առանձնակի սրությամբ գրեց տրոցկիստների և աջերի, ինչպես նաև նրանց հայացքների հետ միահյուսվող նացիոնալիստական տրամադրությունների դեմ մղվող պայքարը ավելի ուժեղացնելու հարցը։

Գյուղում կատարվող աշխատանքների բնագավառում պարտիական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրվում էր պարտիայի XV համագումարի որոշումներից բխող կոնկրետ միջոցառումների վրա, որոնց նպատակն էր ապահովել գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը, կոոպերացիայի բոլոր ձևերի զարգացումով հանդերձ։ «Այդ տեսակետից,—գրված է համագումարի վերոհիշյալ հարցի վերաբերյալ ընդունած բանաձևում,— կոլտնտեսությունների գաղափարի մասսայականացումը, ցանցի (այսինքն կոլտնտեսությունների—Վ. Գ.) ամրացումը և հետագա լայն ծավալումը ներկա ժամանակաշրջանի ամենահիմնական խնդիրն է, մի խնդիր, որի պատմական նշանակությունը հասկանալի և ընդունելի պիտի դարձնել գյուղական ամենալայն մասսաների համար»[1]։

Հնգամյա պլանի վերաբերյալ համագումարը մատնանշում էր, որ այն հիմնականում ենթակա է ինդուստրիայի զարգացման, ռեսպուբլիկայի հանքային հարստությունների և ջրային ռեսուրսների մաքսիմալ օգտագործման, գյուղատնտեսության վերելքի անհրաժեշտությունից[2]։ Համագումարը հավանություն տվեց Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի նախագծին և հանձնարարեց Կենտկոմին՝ ապահովելու պարտիական և բանվորա-

---

1 ՀԿ(բ)Կ VI համագումարի բանաձևերն ու որոշումները, էջ 28։

2 Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ (այնուհետև՝ ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ), ֆ. 1, ց. 13, գ. 1, թ. 213։

կան լայն մասսաների մասնակցությունը նրա համաժողովրդական քննարկմանը։

ՀԿ(բ)Պ VI համագումարը մոբիլիզացրեց Հայաստանի Կոմունիստական պարտիային՝ պայքարելու հնգամյա պլանի կենսագործման, սոցիալիզմի հաղթական կառուցման համար։ Համագումարը, ռեսպուբլիկայի բոլոր կոմունիստների, բոլոր աշխատավորների անունից հավատիացրեց ՀամԿ(բ)Պ Կենտկոմին, որ նրանք կգործադրեն բոլոր ջանքերը՝ հանուն հաղթական սոցիալիստական շինարարության, հանուն պարտիայի հիմնական գծի՝ ինդուստրացման արագ տեմպի և գյուղի սոցիալիստական վերակառուցման։

Համագումարը մի անգամ ևս ապացուցեց Հայաստանի Կոմպարտիայի նվիրվածությունը ՍՄԿՊ գլխավոր գծին, ռեսպուբլիկայի կոմունիստներին էլ ավելի համախմբեց նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի շուրջը։

Փետրվար և մարտ ամիսներին շարունակվում էր պլանի առաջիկա թվերի և նրա առանձին բաժինների քննարկումը տարբեր ինստանցիաներում։ 1929 թ. ապրիլի սկզբին Հայաստանի ժողկոմխորհը և ժողտնտխորհը հավանություն տվեցին հնգամյա պլանին և ներկայացրին ռեսպուբլիկայի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների Սովետների VI համագումարին։

* * *

Սովետների ռեսպուբլիկական համագումարը և նրան նախորդած սովետների վերընտրական կամպանիան քաղաքական խոշոր նշանակություն ունեցան Հայաստանի բանվորների, գյուղացիների և բոլոր աշխատավորների կյանքում։ Աղատագրված հայ ժողովուրդը վերջնորդ անգամն էր ընտրում իր պետական իշխանության տեղական և բարձրագույն օրգանները։

Վերընտրական կամպանիայի առթիվ Հայաստանի բանվորներին և գյուղացիներին ուղղված կոչում ՀԽՍՀ Կենտրո-

նական Գործադիր Կոմիտեն նշում էր, որ բարձրացել է աշխատավոր մասսաների քաղաքական գիտակցությունը և նրանց մասնակցությունը սոցիալիստական շինարարության գործին։ Մատնանշելով լայն մասսաների ակտիվ մասնակցությունը ընտրություններին և սովետների աշխատանքներում, Կենտգործկոմը դիմում էր բանվորներին և գյուղացիներին, բոլոր ընտրողներին՝ ավելի ակտիվորեն մասնակցելու հաշվետու-ընտրական ժողովներին, բարձրացնելու սովետների աշխատանքի մակարդակը, առանց որի անհնարին է նրանց առաջ ծառացած խնդիրների հաջող լուծումը։ «Այդ են մեզ թելադրում,—ասվում էր կոչում,—մեր առաջ դրված տնտեսական ու կուլտուրական շինարարության մեծ ծրագրերը, ...գաստակարգային կռվի ուժեղացումը և միջազգային կապիտալի կողմից մեզ սպառնացող վտանգը»[1]։

Հայաստանի Կենտգործկոմը կոչ էր անում սովետներում ընտրել այն բանվորներին ու գյուղացիներին, ովքեր սոցիալիզմի համոզված կողմնակիցներ ու պաշտպաններ են, ովքեր ընդունակ են նպաստելու երկրի ինդուստրացման գործին, գյուղատնտեսության կոոպերացմանը, կուլտուրական ռևոլյուցիայի ծավալմանը, պրոլետարիատի դիկտատուրայի ներքին ու արտաքին թշնամիների ջախջախման գործին։

Սովետական Կոնստիտուցիայի համաձայն ընտրությունները կատարվում էին բաց, բաղմատիճան և անհավասար սկզբունքով։ Ընտրական այդպիսի սկզբունքը թելադրվում էր անցման ժամանակաշրջանի սովետական հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքով և վիճակով։ Սովետական իշխանությունը հարկադրված էր ձայնի իրավունքից զրկել շահագործողներին, որոնք կատաղի կերպով դիմադրում էին սոցիալիստական շինարարության գործին, պետության ու պարտիայի քաղաքականությանը։

Հաշվետու-ընտրական կամպանիայի նախապատրաստությունը սկսվեց 1928 թ. վերջերից։ 1929 թ. հունվարին տեղի ունեցան սովետների (գյուղական, քաղաքային, գավառային

---

1 «Խորհրդային Հայաստան», 6 դեկտեմբերի 1928։

և գավառակային) հաշվեհավությունները, իսկ փետրվար և մարտ ամիսներին՝ նրանց ընտրությունները։

Հաշվեառու-ընտրական կամպանիայի ժամանակ քաղաքական առաջատար դերը պատկանում էր բանվոր դասակարգին։ Անդրկովկասի քաղաքների մեջ կատարվեցին բանվորական պատվիրակությունների փոխայցելություններ։ Բաքվի և Բաթումիի բանվոր-պատգամավորների պատվիրակությունները ծանոթացան Երևանի քաղսովետի աշխատանքներին, ներկա եղան քաղսովետի հաշվեառու զեկուցումներին՝ մի շարք արտադրական օբյեկտներում, ինչպես նաև ընտրական ժողովներին։ Իսկ Երևանի և Լենինականի մի խումբ բանվոր-պատգամավորներ մասնակցեցին Թիֆլիսի քաղսովետի վերընտրական բազմաթիվ ժողովների։ Բանվորական շատ բրիգադներ մեկնեցին գյուղերը՝ այնտեղ տեսական աշխատանք կատարելու։

Ամփոփելով ընտրական կամպանիայի արդյունքները, Անդրկովկասյան Կենտգործկոմի Նախագահությունը ընդունեց բանաձև, որտեղ ասվում էր. «Այս ընտրական կամպանիայում քաղաքական և կազմակերպական մեծ դեր խաղաց բանվորական կենտրոններից բանվորական բրիգադների՝ գյուղ ուղարկելու պրակտիկան։ Նա հանդիսացավ աշխատավոր գյուղացիների մասսայի մեջ պրոլետարիատի զեկավար դերը կենտգործելու նոր ձև»[1]։

Գյուղամեջների նախագահները և նրանց առանձին անդամները զեկուցում էին շքավորա-բատրակային, կանանց և երիտասարդական ժողովներում։ Հատկապես աշխույժ էին անցնում շքավորական ժողովները, որտեղ քննարկվում էին սոցիալական, կուլակության դեմ պայքարի, գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման, կոլտնտեսություններ ստեղծելու, միջակների հետ դաշինքը ամրապնդելու, գյուղի բարեկարգման և այլ հարցեր։ Այդպիսի ժողովների թիվը հասնում էր մոտ հինգ հարյուրի, որտեղ ելույթ է ունեցել

---

1 Հայկական ՍՍՌ ՀՌՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 519, թ. 4։

յուրաքանչյուր հինգ մասնակցից մեկը[1]։ Զբաղվորական ժողովներին մասնակցում էին նաև միջակ գյուղացիները։ Համեմատաբար մեծ գյուղերում ինֆորմացիայով հանդես էին գալիս գավառակային գործադիր կոմիտեների ներկայացուցիչները։

ՀԽՍՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով գյուղական սովետների 1195 ընդհանուր հաշվետու ժողովներին մասնակցել էին 185.618 մարդ (որից կանայք մոտ 35 հազար) կամ ընտրական ձայն ունեցողների 49,2 տոկոսը (հաշվետու, ինչպես և ընտրական ժողովների մասնակիցների համեմատաբար ցածր տոկոսը մասնավորապես բացատրվում է հավաքվելու համար համապատասխան շենքերի բացակայությամբ)։ Հաշվետվությունների քննարկմանը մասնակցել էին 15.222 մարդ կամ բոլոր ներկաների 8,2 տոկոսը[2]։

Քաղաքային սովետների (Երևան, Լենինական, Դարաբիլիսա) հաշվետու ժողովներին, որ տեղի էին ունենում արտադրական, պրոֆեսիոնալ և տերիտորիալ սկզբունքով, ներկա են եղել ընտրական ձայն ունեցողների 47,8 տոկոսը[3]։

Հաշվետու ժողովների կողմից ընտրված հանձնաժողովները ելույթների հիման վրա կազմում էին նակազներ, որոնց նախագիծը ընտրական ժողովներում քննարկելուց հետո նորընտիր սովետների համար դառնում էր գործողության ծրագիր։

Սովետների կազմի համար թեկնածությունները առաջադրվում էին պարտիական և կոմերիտական բջիջների, զբաղվորական խորհրդակցությունների ու կին դելեգատների ժողովների և հասարակական մյուս կազմակերպությունների կողմից։ Պարտիական և կոմերիտական բջիջները առաջադրված թեկնածուների ցուցակը հասարակական կազմակեր-

---

1 Հայկական ՍՍՌ ՀՈՍԾ ՊԿԱ., ֆ. 112, ց. 1, գ. 1887, թ. 52։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, թ. 54։

պայմանների հետ համաձայնեցնելուց հետո, ընտրություն-ներից մի քանի օր առաջ դրանք հրապարակում էին պատի թերթում կամ այլ ձևով՝ ընդհանուր քննարկման համար։

Ընտրությունների արդյունքը հետևյալն է. 832 գյուղսովետների ընտրական ժողովներին մասնակցեցին ձայնի իրավունք ունեցողների 60,2 տոկոսը, նախորդ՝ 1927 թ. ընտրությունների 46,6 տոկոսի դիմաց, իսկ քաղաքային սովետների ընտրություններին՝ համապատասխանաբար 57,5 տոկոս, 54,9 տոկոսի դիմաց։ Գյուղական սովետների նորընտիր 16։817 անդամների 14,7 տոկոսը կանայք էին (նախորդ ընտրություններում 9,6 տոկոս)։ Զգալի չափով ավելացել էր շքավորների և բատրակների թիվը։ Քաղաքային սովետներում բանվորների տեսակարար կշիռը կազմում էր 47,4 տոկոս, կանայք՝ 16,2 (1927 թ. 44,4 և 10,4 տոկոսի դիմաց)։ Սովետների կազմում զգալի չափով ավելացել էր պարտիականների ու կոմերիտականների, ինչպես և նախկին կարմիրբանակայինների թիվը[1]։

Սովետների վերընտրությունները վկայում էին բանվորների և գյուղացիների զգալիորեն աճած քաղաքական ակտիվության, միջակ գյուղացիների հետ բանվոր դասակարգի և շքավորների դաշինքի ամրապնդման մասին։ Դրանք ցույց էին տալիս, որ Սովետական իշխանության հեղինակությունը բարձրացել է։ Բարելավվել էր սովետների սոցիալական և պարտիական կազմը, ինչպես և կանանց ընդգրկումը։ Աշխուժացել էր շքավորական խորհրդակցությունների, բատրակների, կանանց ու երիտասարդական ժողովների գործունեությունը։

Սովետների հաշվետու-ընտրական կամպանիան ընթացավ սուր դասակարգային պայքարի պայմաններում։ Կուլակները, նեպմանական տարրերը և Սովետական իշխանության մյուս թշնամիները, դիմելով տարբեր մեթոդների, ձգտում էին խափանել ընտրությունները, փորձում էին ընտրական հանձնաժողովներում և սովետներում անցկացնել իրենց

[1] Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1. գ. 1887, թ. 56։

կոլմնակիցներին, ստանալ ձայնի իրավունք և այլն։ Դասակարգային թշնամիների փորձերը տապալվեցին։ Այդ պայքարում բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը վճռական հաղթանակ տարան։ Զբաղմունքները և միջակները ավելի համախմբվեցին Սովետական իշխանության շուրջը։

Սովետների վերընտրական կամպանիան անցավ ոգևորիչ պայմաններում։ Մասսաների քաղաքական դաստիարակության, հաշվետու-ընտրությունները հաջողությամբ անցկացնելու գործում մեծ դեր խաղացին «Խորհրդային Հայաստան», «Բանվոր», «Մաճկալ», «Ավանդարդ» և մյուս թերթերը, ինչպես և Հայաստանի Կենտգործկոմի կողմից պարբերաբար հրատարակվող «Խորհրդային շինարարություն» ամսագիրը։ Հրատարակվեցին նաև մի շարք գրքեր՝ Հայաստանում Սովետական իշխանության անցած ութ տարիների հաջողությունների մասին։

Ամփոփելով սովետների 1928—1929 թթ. ընտրությունների արդյունքները, Համկ(բ) Պ Կենտկոմը 1929 թ. հունիսին ընդունած որոշման մեջ նշել է. «Ազգային ռեսպուբլիկաներում և մարզերում ստիպ է բանվորական և գյուղացիական մասսաների ակտիվության զգալի վերելքը՝ նրանց ընդհանուր և՛ տնտեսական, և՛ կուլտուրական աճի կապակցությամբ... Կուլակի հետագա մեկուսացման և նրա վրա հարձակումը զարգացնելու հետ մեկտեղ միջակ գյուղացիության հետ պրոլետարիատի և չքավորության դաշինքը ամրապնդելու այդ հաջողությունները հաստատելով պարտիայի քաղաքականության ճշտությունը, միաժամանակ ցույց են տալիս պարտիական, սովետական, ինչպես նաև արհմիութենական կազմակերպությունների կազմակերպական ղեկավարության բարելավումը»[1]։

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի տված այդ գնահատականը, ինչպես ապացուցում են փաստերը, վերաբերում է նաև Սովետական Հայաստանին։

---

[1] Политический и трудовой подъем рабочего класса СССР (1928—1929), Госполитиздат, 1956, стр. 179.

1929 թ. ապրիլի 7—12-ը տեղի ունեցավ Հայաստանի Սովետական իշխանության բարձրագույն օրգանի՝ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների Սովետների VI համագումարը։ Համագումարին ներկա էին մոտ 400 պատգամավոր, որից 65-ը ադրբեջանցիներ, ռուսներ, քրդեր և այլ ազգերի ներկայացուցիչներ։

Համագումարում քննարկվեցին Հայաստանի ԽՍՀ ժողկոմխորհի հաշվետվությունը (զեկուցող՝ կառավարության նախագահ Ս. Տեր-Գաբրիելյան), Հայաստանի ժողովրդական տնտեսության հնգամյա հեռանկարային պլանը, որը օրակարգի կենտրոնական հարցն էր, կուլտուրական շինարարության հերթական խնդիրները և Հայաստանի նոր վարչական բաժանման (շրջանացման) հարց[1]։

ԱԽՖՍՀ ժողկոմխորհի նախագահ Շալվա Էլիավան հանդես եկավ ֆեդերացիայի կառավարության գործունեության վերաբերյալ ինֆորմացիոն զեկուցումով։ Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպումից հետո անցած յոթ տարիների ընթացքում Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում խոշոր նվաճումներ էին ձեռք բերվել էկոնոմիկայի և կուլտուրայի վերելքի, առանձնապես էլեկտրիֆիկացիան և ոռոգումը զարգացնելու վերաբերյալ Վ. Ի. Լենինի ցուցումները կենսագործելու ասպարեզում։ Աչքի ընկնող կարևորագույն նվաճումներից մեկը Բաքվի նավթարդյունաբերության տեխնիկական վերակառուցման աշխատանքների ավարտումն էր։ Մեծ էր նոր շինարարության ծավալումը։ Կառուցվում էին այնպիսի խոշոր հիդրոկայաններ, ինչպիսիք էին Ռիոնդէսը, Զադէսը և Զորադէսը։ 1927/28 թ. Անդրկովկասի արդյունաբերության արտադրանքը կազմում էր 507 միլիոն ռուբլի, նախորդ տարվա համեմատությամբ տալով 21,0 տոկոս աճ[2]։ Ոռոգման համար ներդրումների գումարը կազմում էր.

---

1 Օրակարգում նախատեսված «Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ուղիների մասին» զեկուցումը չի կայացել։

2 Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 809 (1-ին մաս), թ. 27—28։

1925/26 թ.՝ 6,1, 1926/27 թ.՝ 8,1 և 1927/28 թ.՝ 9,7 միլիոն ռուբլի[1]։

Անդրֆեդերացիան զարգացրեց Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների տնտեսական ու կուլտուրական համագործակցությունը և փոխադարձ օգնությունը։

Անդրֆեդերացիայի կազմակերպման խոշորագույն արդյունքը Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամության ու եղբայրության էլ ավելի ամրապնդումն էր, նրանց ինտերնացիոնալ դաշինքի ուժեղացումը և համագործակցությունը։ 1921 թ. Կովկասի կոմունիստներին ուղղված ծրագրային նամակում Վ. Ի. Լենինը գրել է. «Ձերմակին ոչնչելով Կովկասի Սովետական ռեսպուբլիկաները, ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[2]։ Սովետական ժողովուրդների առաջնորդի հույսերը դարձել էին իրականություն։ Սոցիալիզմի կառուցման պայմաններում այդ բարեկամությունը դարձել էր բազմակողմանի և հարատևել նոր բովանդակությամբ։

Հավանություն տալով ԱԽՖՍՀ կառավարության գործունեությանը, Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների Սովետների VI համագումարը նշեց, որ նա ամրապնդել է Անդրկովկասի ֆեդերացիայի տնտեսական բազան, «դարձրել նրան ազգային խաղաղության անսասան ամրոց»։

Անդրկովկասյան ֆեդերացիայի ամրապնդման և հետագա զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի՝ «ՀամԿ(բ)Պ Անդրկոմի հետագա աշխատանքների մասին» որոշումը, որը ընդունվեց 1929 թ. նոյեմբերին։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն գտնում էր, որ սկզբնական շրջանում Անդրկովկասյան ֆեդերացիայի գե-

---

[1] „Заря Востока", 8 мая 1929.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 102։

կավար օրգանները դերաղանցապես քաղաքական դեր են կատարել, ապահովելով Անդրկովկասի սովետական ազգային ռեսպուբլիկաների բարեհաջող զարգացումը, պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումը և Անդրկովկասի ժողովուրդների ազգային խաղաղության կայունացումը։ Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման, ինդուստրիայի ծավալման և գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման բարդ խնդիրների իրագործումը պահանջում էր վճռականորեն ուժեղացնել Անդրկովկասյան Ֆեդերացիայի պարտիական և սովետական ղեկավար օրգանների դերը։ Ներկա շրջանում, ասված է որոշման մեջ, նրանք պետք է «իրենց ամբողջ ուժերը կենտրոնացնեն տնտեսական սոցիալիստական շինարարության վրա ազգային հանրապետություններում, նրանց ինդուստրացման և գյուղատնտեսության տեխնիկական և սոցիալական վերակառուցման վրա»[1]։ Դրա համար, ինչպես նշում էր Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն, անհրաժեշտ է ամրացնել Անդրկովկասյան Ֆեդերացիայի տնտեսական բազան, իրականացնել տնտեսական շինարարության իսկական ղեկավարություն, ամրացնել Անդրժողտնտսովետը[2], վերակազմել և ուժեղացնել ԱԽՖՍՀ Պետպլանը և Կենտրոնական Վիճակագրական վարչությունը, ստեղծել հողժողկոմատ, որը ղեկավարելու է գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և այլն։ Միաժամանակ նշվում էր, որ «Անդրկովկասյան Ֆեդերացիայի մարմինների ղեկավարող դերի այս ուժեղացումն ազգային հանրապետությունների վերաբերմամբ պետք է կատարվի Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտնող ազգային հանրապետությունների լայնորեն ծավալվող ինքնագործունեությանը և տնտեսական նախաձեռնությանը զուգընթաց»[3]։

---

1 «Խորհրդային Հայաստան», 1 դեկտեմբերի 1929։

2 Անդրկովկասյան Ժողտնտսովետը կազմակերպվել էր Անդրկովկասյան Կենտգործկոմի 1929 թ. մարտի 25-ի որոշմամբ։

3 «Խորհրդային Հայաստան», 1 դեկտեմբերի 1929։

ՀԽՍՀ ժողկոմխորհի հաշվետվության մեջ (զեկ. Ս. Տեր-Գաբրիելյան) բազմաթիվ տվյալներ բերվեցին ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի հաջողությունների և միութենական կառավարության ցույց տված օգնության վերաբերյալ։ Զեկուցողը հիշեց Սովետական պետության ղեկավար Վ. Ի. Լենինի այն ցուցումը, որ տվել էր նա Սովետական Հայաստանի նորաստեղծ կառավարությանը՝ վերջինիս ներկայացուցիչներին ընդունելու ժամանակ՝ 1920 թ. դեկտեմբերին, և որը կատարելու համար Սովետական Միության կառավարությունը ոչինչ չէր խնայում։ «Հայաստանին պետք է օգնել,—ասել է Վ. Ի. Լենինը,—պետք է եղբայրական օժանդակություն ցույց տալ նրան, որպեսզի նա ոտքի կանգնի»։ Մենք տեսնում ենք, շարունակում է զեկուցողը, որ Խորհրդային Միության կառավարությունը կատարել է և կատարում է մեծ ուսուցչի այդ խոստումը[1]։

Համագումարը ՀԽՍՀ կառավարության վարած գիծը գտավ ճիշտ և հավանություն տվեց նրա գործունեությանը։

Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանի վերաբերյալ, որը կազմում էր Սովետական Միության հնգամյա պլանի բաղկացուցիչ մասը, զեկուցեց ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ և Պետպլանի նախագահ Մարտին Սահակյանը։

Ելնելով պարտիայի XV համագումարի դիրեկտիվներից, հնգամյա պլանը նախատեսում էր բնական և հումքային ռեսուրսների արդյունաբերական լայն շահագործման միջոցով ռեսպուբլիկայում զարգացնել ինդուստրիան, առաջին հերթին ծանր արդյունաբերությունը, ժողովրդական տնտեսությունից ամբողջապես դուրս մղել կապիտալիստական տարրերին և ապահովել անհատական տնտեսությունների սոցիալիստական վերափոխումը։

Հայաստանի Սովետների VI համագումարը նշեց, որ այդ

---

1 Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 809 (1-ին մաս), թ. 48։

պլանը եկնում է երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կուլտուրական ռևոլյուցիայի խնդիրներից։

Համագումարը ռեսպուբլիկայի առաջին հնգամյա պլանի խնդիրներն էր համարում[1].

Զարգացնել և ընդարձակել լեռնային ու լեռնադործարանային արդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի բազայի վրա զարկ տալ քիմիական արդյունաբերության զարգացմանը (պղնձի, ծծումբ-երկաթի, կարբիդի, ցիանամիդի, ծծմբաթթվի արտադրություն և այլն)։ Հատուկ ուշադրություն դարձնել շինանյութերի արդյունաբերության զարգացման վրա (տուֆ, պեմզա, ցեմենտ, դրանիտ, մարմար, կոնգլոմերատ և այլն)։ Էլ ավելի զարգացնել գյուղատնտեսական հումքը վերամշակող արդյունաբերությունը (տեքստիլի, կոնսերվի, գինու-կոնյակի և այլ ճյուղեր)։ Մաքսիմալ չափով օգտագործել երկրի ջրային ռեսուրսները ոռոգման ու էլեկտրիֆիկացիայի նպատակով, որը իր հերթին լայն բազա պետք է ծառայի ողջ ժողովրդական տնտեսության զարգացման ու վերակառուցման համար։

Բարձրացնել սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ, մասնավորապես արագացնել կոլտնտեսությունների ու սովխոզների կազմակերպումը և գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը։

Մաքսիմալ չափով զարգացնել տեխնիկական ու հումքային կուլտուրաները, հացահատիկի արտադրությունը և անասնապահությունը՝ կերի ռեսուրսների ընդարձակման միջոցով։

Սոցիալական և կուլտուրական շինարարության բնագավառում նախատեսվում էր իրականացնել ընդհանուր պարտադիր տարրական կրթություն, պատրաստել ժողովրդական տնտեսության որակյալ կադրեր, կրճատել անգրագետների թիվը և այլն։ Ընդարձակվելու էր բուժկայանների և պրոֆի-

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 14 ապրիլի 1929։

էակտիկ հիմնարկների ցանցը։ Հնգամյակի ընթացքում զգալի չափով բարելավվելու էր մասսաների նյութական դրությունը։

Վերոհիշյալ խնդիրները իրականացնելու համար նախատեսվում էր հետևյալը.

Ինչպես պղնձի, այնպես էլ շինանյութերի արդյունաբերության գծով կատարվելու էին երկրաբանական լայն հետազոտություններ՝ նոր հանքավայրեր հայտնաբերելու և նրանց պաշարները պարզելու համար։ Միայն պղնձարդյունաբերության վերականգնման ու զարգացման համար ներդրվելու էր 20,0 միլիոն ռուբլի։ Ալավերդու և Ղափանի պղնձահանքերում և գործարաններում տեղադրվելու էր նորագույն տեխնիկա։ Յուրացվելու էր ծծմբային կոլչեդանի արտադրությունը։

Քիմիական արդյունաբերության գծով նախատեսվում էր մի քանի խոշոր գործարանների շինարարություն, որով Հայաստանում ամուր հիմք էր դրվելու արդյունաբերության այդ ճյուղի զարգացման համար։ Ղարաքիլիսայում կառուցվելու էր ազոտային պարարտանյութերի, իսկ Ալավերդում՝ ծծմբաթթվի և պղնձարջասպի գործարաններ։ Ավելացվելու էր Երևանի կարբիդի գործարանի կարողությունը։

Էլեկտրիֆիկացիայի առաջարկվում նախագծվում էին շրջանային և տեղական մի շարք հիդրոէլեկտրակայանների կառուցում։ Ավարտվելու էր Զորագեսի, ինչպես և Երևանդեսի երկրորդ հերթի շինարարությունը։ Հնգամյակի երկրորդ տարվանից սկսվելու էր Սևան—Հրազդան կասկադի խոշոր կայաններից մեկի՝ Քանաքեռդեսի կառուցումը։

Բնական շինանյութերի արտադրությունը, որովհետև շատ հարուստ է Հայաստանը, նորաստեղծ արդյունաբերական ճյուղերից էր, որը ուներ միութենական նշանակություն։ Շահագործման էին հանձնվելու Արթիկի տուֆի հանքերը, ծավալվելու էր սեմզայի արտադրությունը։ Դավալուում (այժմ Արարատ) գործարկվելու էր ցեմենտի գործարանը։

Թեթև և սննդի արդյունաբերության մեջ կարևոր տեղ

էին գրավում տեքստիլ արդյունաբերությունը և գինու-կոնյակի արտադրությունը։ Լենինականի տեքստիլ կոմբինատում մի քանի անգամ ավելացվելու էր խլիկների և դաղդահների թիվը։ Այստեղ նախատեսվում էր ներդնել ավելի քան 20 միլիոն ռուբլի։ «Արարատ» տրեստի գործարանների վերասարքավորման միջոցով ավելացվելու էր նրա կարողությունը։ Կառուցվելու էին պահածոների նոր գործարաններ և այլն։

Ամբողջ ժողովրդական տնտեսության համար նախատեսված 276,8 միլիոն ռուբլուց արդյունաբերության մեջ (էլեկտրիֆիկացիայի և տրանսպորտի հետ միասին) ներդրվելու էր 117,6 միլիոն ռուբլի կամ ամբողջ գումարի 42,5 տոկոսը։ Իսկ գյուղատնտեսության և ջրային տնտեսության համար նախատեսվում էր 81,5 միլիոն ռուբլի[1]։ Մինչդեռ նախորդ ութ տարում կապիտալ ներդրումների ամբողջ գումարը կազմում էր 73,1 միլիոն ռուբլի, այդ թվում արդյունաբերության, էներգետիկայի և տրանսպորտի գծով 31,4 և գյուղատնտեսության մեջ՝ 17,8 միլիոն ռուբլի[2]։

Ինդուստրացման արագ տեմպերի շնորհիվ մեծ չափով ավելանալու էր արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ։ Ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը աճելու էր չորս անգամ, այդ թվում արտադրության միջոցների արտադրությունը՝ ավելի քան 5,5 անգամ, այն դեպքում, երբ Սովետական Միության արդյունաբերության համախառն արտադրանքը ավելանալու էր 2,8 անգամ, այդ թվում ծանր արդյունաբերությանը՝ 3,2 ան-

---

[1] Հնգամյա պլանի թվերը տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ., ֆ. 112, ց. 1, գ. 809, 1-ին մաս (Հնգամյա պլանի վերաբերյալ զեկուցումը) և նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 120, թ. 3—6 (Հնգամյա պլանի ստուգիչ թվերի հավաքական աղյուսակը)։ Զեկուցումը և աղյուսակը տե՛ս նաև. Մ. Սահակյան, ՀՍԽՀ ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը (1928/29—1932/33), Երևան, 1929։

[2] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), стр. 19.

դամ։ Արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը 1927/28 թ. 32,0 տոկոսի փոխարեն հնգամյակի վերջին տարում կազմելու էր ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքի կեսը։ Իսկ սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը 1928 թ. 68,0-ից հասցվելու էր 92,0 տոկոսի՝ հնգամյակի վերջում։

Ինչպես տեսնում ենք, հնգամյա պլանի հիմքում դրված էին արդյունաբերությունը հումքի աղբյուրներին մոտեցնելու, ազգային ռեսպուբլիկաների հետամնացությունը վերացնելու և արտադրության միջոցների արտադրությունը առավել արագ տեմպերով զարգացնելու Կոմունիստական պարտիայի քաղաքականության հիմնական սկզբունքներն ու դիրեկտիվները։

Գյուղատնտեսության մեջ հիմնական խնդիրը համարվում էր նրա մանրատվածության վերացումը, նրա սոցիալիստական վերակառուցումը։ Կոլտնտեսությունների թիվը 55-ից (1928 թ. հուլիսի դրությամբ) հնգամյակի վերջում հասնելու էր 540-ի, որոնք ընդգրկելու էին 28 հազար տնտեսություն, կամ գյուղացիական բոլոր տնտեսությունների 17,2 տոկոսը։ Գյուղատնտեսական կոոպերացիան ընդգրկելու էր բոլոր տնտեսությունների 80,0 տոկոսը։

Սոցիալիստական էկոնոմիկայի վերելքի հիման վրա արմատական փոփոխություններ էին նախատեսվում աշխատավորների նյութական ու կուլտուրական կյանքի բարելավման ուղղությամբ։ Հնգամյա պլանի խնդիրների և առաջադրանքների կատարումը մեծ չափով կախված էր աշխատավոր մասսաների կուլտուրական մակարդակից։ Կուլտուրական ռևոլյուցիայի ուղղությամբ, որը վերակառուցման ժամանակաշրջանի կարևորագույն պրոբլեմներից մեկն էր, միայն առաջին քայլերն էին կատարվել։ Մինչդեռ հնգամյակի վիթխարի վերափոխումների իրագործումը անհնարին էր առանց աշխատավորների միջից անդրագիտությունը վերացնելու և որակյալ բանվորական ու ինժեներա-տեխնիկական կադրեր պատրաստելու։

Բխելով այդ հարցի կարևորությունից, Հայաստանի Սովետների VI համագումարը լսեց ՀԽՍՀ ԺողԿոմխորհի նախագահի տեղակալ և Լուսժողկոմ Ասքանազ Մռավյանի զեկուցումը՝ «Կուլտուրական շինարարության հերթական խնդիրների մասին» և ընդունեց համապատասխան որոշում։ Համագումարը ընդգծեց, որ զարգացման ավյալ էտապում սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունները և մասնավորապես ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի անարգել իրագործումը պայմանավորված է կուլտուրական շինարարության տեմպի արագությամբ, մինչդեռ այն ետ էր մնում ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման տեմպերից[1]։ Համագումարը նշեց մի շարք կարևոր միջոցառումներ և հանձնարարեց կառավարությանը՝ ապահովելու կուլտուրական շինարարության արագ վերելքը։ Մասնավորապես նախատեսվում էր հնգամյակի ընթացքում վերացնել անգրագիտությունը, մտցնել ընդհանուր, պարտադիր տարրական կրթություն, վերակառուցել բոլոր տիպի և աստիճանի դպրոցների աշխատանքը՝ որակյալ կադրեր ստեղծելու պահանջին համապատասխան, ավելացնել կապիտալ ներդրումները դպրոցական և կուլտուրա-լուսավորական օբյեկտների շինարարության համար և այլն։

Այսպիսով, կուլտուրական շինարարության հարցի քննարկումը լրացնում և ամբողջացնում էր հնգամյա պլանը, հանդիսանալով վերջինիս անբաժանելի մասը։

Հայաստանի պատգամավորների Սովետների VI համագումարը հավանություն տվեց ՀԽՍՀ ԺողԿոմխորհի կողմից ներկայացրած ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի ստուգիչ թվերին և հանձնարարեց կառավարությանը՝ հետագայում ճշտել դրանք, վերացնել թերու-

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀԽՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 809 (2-րդ մաս), թ. 199։

թյունները և ձեռք առնել բոլոր միջոցները պլանի կենսագործումը ապահովելու համար[1]։

Համագումարում քննարկվեց նաև Հայաստանի շրջանացման հարցը (զեկուցող Մ. Սահակյան)։ Հայաստանի վարչա-տնտեսական նոր բաժանման նախագիծը հաշվի էր առնում Հայաստանի էկոնոմիկայի մեջ կատարված փոփոխությունները և ավելի մեծ չափով՝ արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացման հեռանկարները, ինչպես և բնակչության տեղաբաշխումը, ազգային փոքրամասնությունների շահերը, աշխարհագրական առանձնահատկությունները և այլն[2]։

Սովետական շրջանացման հիմքում դրված էր Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության կենսագործումը, երկրի տնտեսական-կուլտուրական զարգացման շահերը, սովետական դեմոկրատիայի զարգացումը և ղեկավարության բարելավումը։

Հարկ է նկատել, որ սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանում վերացվեց հին վարչական բաժանումը և մտցվեց նոր բաժանում, որը միանգամից չավարտվեց։ Սոցիալիստական շինարարության զարգացմանը զուգընթաց կատարվում էին համապատասխան փոփոխություններ վարչա-տնտեսական բաժանման մեջ։ Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի 1921 թ. հուլիսի 20-ի զեկրետով ռեսպուբլիկան բաժանվեց ութ գավառի, որոնք իրենց մեջ ընդգրկեցին 33 գավառակ։

1929 թ. Սովետների VI համագումարը այդ հարցի առթիվ ընդունված բանաձևում արձանագրեց, որ ՀԽՍՀ-ի տնտեսական և վարչական նոր բաժանումը համապատասխանում է Հայաստանի ընդհանուր էկոնոմիկային և հանձնարարեց կենտգործկոմին՝ ավարտել շրջանացման ներկայացված նախագծի մշակումը և կենսագործել այն սահմանված ժամկետում[3]։ Նախագիծը քննարկվեց նաև տեղական օրգաններում։

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 14 ապրիլի 1929 (բանաձևը տպագրված է նաև Մ. Սահակյանի նշված գրքում)։

2 Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՈՒՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 4, գ. 11531, թ. 7—11։

3 Նույն տեղում. ֆ. 112, ց. 1, գ. 809 (2-րդ մաս), թ. 220։

1929 թ. հուլիսի 26-ին ՀԽՍՀ Կենտգործկոմը որոշում ընդունեց «ՀԽՍՀ տերիտորիայի շրջանացման մասին»[1], ըստ որի պահպանվում էր վարչա-տնտեսական բաժանման եռաստիճան սիստեմը (սովետ, գավառակ, գավառ), խոշորացվում էին վարչական միավորները և այդ ժամանակ գոյություն ունեցող 9 գավառի ու 38 գավառակի փոխարեն ստեղծվում էր 5 գավառ (Երևանի, Լենինականի, Լոռու, Սևանի և Զանգեզուրի), որոնք իրենց հերթին բաժանվում էին 31 շրջանի («գավառակ»-ը փոխարինվեց «շրջան» տերմինով, իսկ «գավառ»-ը համանիշ էր «օկրուգ»-ին)։ Խոշորացվեցին նաև սովետները։ Որոշումը ուժի մեջ մտավ 1929 թ. հոկտեմբերի 1-ից։

Հայաստանի վարչա-տնտեսական այս բաժանումը երկար գոյություն չունեցավ։ 1929 թ. վերջին և 1930 թ. սկզբին ՍՍՌՄ-ում համատարած կոլեկտիվացման հիման վրա գյուղի ծավալուն սոցիալիստական վերակառուցման կապակցությամբ գրվեց շրջանների զեկավարությունը ամրապնդելու հարցը։ Ստեղծված պայմաններում գավառը, որը միջին օղակ էր կենտրոնի և տեղերի միջև, դարձավ ավելորդ։ Ուստի պարտիայի XVI համագումարը (1930 թ. հունիս-հուլիս) որոշեց, որ նա «ամբողջությամբ և լիովին հավանություն է տալիս Կենտկոմի որոշմանը օկրուգները վերացնելու և շրջանը, որպես գյուղում սոցիալիստական շինարարության հիմնական օղակ, ամրապնդելու վերաբերյալ, որը պետք է պարտիական-սովետական ապարատը վճռականորեն մոտեցնի գյուղին, կոլտնտեսություններին, մասսաներին»[2]։

ՀԽՍՀ Կենտգործկոմի և ժողկոմխորհի 1930 թ. օգոստոսի 5-ի որոշումով վերացվեցին գավառները, իսկ նույն թվականի սեպտեմբերի 9-ի որոշումով ռեսպուբլիկայում մնա-

---

1 «Խորհրդային Հայաստան», 6 օգոստոսի 1929։

2 ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 3-րդ մաս, Հայպետհրատ, 1955, էջ 23։

ցրվեց նոր վարչա-տնտեսական բաժանում, որի համաձայն Հայաստանը բաժանվեց 25 շրջանի (հետագայում այն մի քանի անգամ փոփոխության է ենթարկվել)։ Երկաստիճան բաժանման այդ սիստեմը (սովետ, շրջան) պահպանվում է մինչև այժմ։

Սովետների VI համագումարում զեկուցումների քննարկմանը ակտիվ կերպով մասնակցեցին տասնյակ պատգամավորներ։ Նրանք պատմում էին բանվորների ու գյուղացիների աշխատանքային խանդավառության, սոցիալիստական շինարարության հնգամյա պլանը կատարելու նրանց պատրաստակամության, շահագործող դասակարգերին լիկվիդացնելու անհրաժեշտության մասին, միաժամանակ անելով քննադատական դիտողություններ քննարկվող հարցերի վերաբերյալ։

Երևանի մետաքսի գործարանի, տպագրիչների, «Արարատ» գործարանի և բազմաթիվ այլ բանվորական ու աշխատավորական պատվիրակություններ համագումարի ամբիոնից խոստացան հնգամյա պլանը կատարել պատվով, նշված ժամկետում։ Ղափանի հանքագործների ներկայացուցիչը իր ողջույնի խոսքում ասաց. «Մենք սոցիալիզմի կառուցման առաջին քայլերն արել ենք արդեն, բարձրացրել ենք արդյունաբերությունը... Այսուհետև ևս կմարտնչենք մինչև սոցիալիզմի վերջնական հաղթանակը»[1]։

Համագումարը ողջունողների թվում էին նաև եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորների պատվիրակությունները։ Ողջույնի հեռագրեր էին ստացվել Անդրկովկասգործկոմի նախագահ Միխա Ցխակայայից, Վրաստանի և Արխազիայի Սովետների համագումարներից, Լենինային Ղարաբաղի ավտոնոմ մարզի աշխատավորների, Լենինականի երկաթուղային դեպոյի բանվորների, Աղիմ գյուղի շքավոր գյուղացիների ժողովի և բազմաթիվ այլ կոլեկտիվների կողմից։

---

[1] «Խորհրդային Հայաստան», 12 ապրիլի 1929։

Համագումարը ողջույնի հեռագրեր ուղարկեց ՀամԿ(բ)Պ Կենտկոմին և ԽՍՀՄ Կենտգործկոմին ու ժողկոմխորհին, որտեղ հույս էր հայտնվում, որ մեկ միասնական ամբողջություն կազմող Սովետական Միության ժողովուրդները հպարտությամբ դուրս կգան միջազգային իմպերիալիստների ինտերվենցիոն դավերի և ներքին թշնամիների դեմ մղվող պայքարից և վստահեցնում էր պարտիայի ու կառավարության ղեկավար օրգաններին, որ Հայաստանի աշխատավորական մասսաները, Սովետական Միության բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների հետ միասին, պարտիայի Կենտրոնական Կոմիտեի լենինյան ղեկավարությամբ կհասնեն սոցիալիզմի հաղթանակին[1]:

Հայաստանի նորընտիր Կենտգործկոմի կազմը բաղկացած էր 220 հոգուց: Համագումարը ընտրեց նաև Սովետների Անդրկովկասյան և Համամիութենական համագումարների պատգամավորներ և Ազգությունների խորհրդի անդամներ:

Ապրիլի 13-ին տեղի ունեցավ նորընտիր Կենտգործկոմի 6-րդ դումարման առաջին նստաշրջանը. նա ընտրեց ՀԽՍՀ Կենտգործկոմի Նախագահության կազմը՝ 33 հոգուց բաղկացած: Կենտգործկոմի նախագահ ընտրվեց Սարգիս Կասյանը: Նստաշրջանը ժողկոմխորհի նախագահ ընտրեց Սահակ Տեր-Գաբրիելյանին, իսկ ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝ Լուսավորության ժողկոմ Ասքանազ Մռավյանին[2]:

Այսպիսով, Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների Սովետների VI համագումարը կարևոր տեղ է գրավում ռեսպուբլիկայի սովետական շինարարության պատմության մեջ: Այն կայացավ մեր երկրի սոցիալիստական շինարարության կարևոր ժամանակաշրջաններից մեկում, երբ կազմակերպվում էր մաս-

---

1 Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌԱՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 809 (1-ին մաս), թ. 12, 14։

2 Ա. Մռավյանը դրանից հետո երկար չապրեց և մահացավ 1929 թ. հոկտեմբերի 23-ին։

սայական հարձակում կապիտալիստական տարրերին լիկվիդացնելու համար, նախապատրաստվում էր մանր ապրանքային տնտեսությունների փոխադրումը սոցիալիզմի ուղու վրա։

Համագումարը հաստատեց Սովետական Միության հընդամյա պլանի բաղկացուցիչ մասը կազմող Հայաստանի հնգամյա պլանը, որը Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության վառ արտահայտությունն էր։

Սովետների համագումարը կարևոր դեր խաղաց պլանը իրականացնելու համար ռեսպուբլիկայի աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու գործում։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ

Առաջին հնգամյա պլանով սովետական ժողովրդի առաջ դրված վիթխարի խնդիրների իրականացումը կապված էր մեծագույն դժվարությունների հաղթահարման հետ։ Ինչպես ցույց տվեց Կոմունիստական պարտիայի XVI կոնֆերենցիան, այդ դժվարությունները պայմանավորվում էին հնգամյա պլանի լարվածությամբ, փոշիացած միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները կոլտնտեսությունների մեջ համախմբելու խնդրի բարդությամբ և մեր երկրի կապիտալիստական շրջապատումով։ Այդ դժվարությունները կրկնապատկվում էին սոցիալիզմի հարաճուն հարձակման շնորհիվ կապիտալիստական տարրերի աճող դիմադրության, սրվող դասակարգային պայքարի հետևանքով[1]։

Կոնֆերենցիան իր որոշումներում նշեց այն պայմանները և միջոցառումները, որոնք անհրաժեշտ էին հնգամյա պլանի իրականացման հետ կապված դժվարությունները հաղթահարելու համար։ Պահանջվում էր ամրապնդել աշխատանքային կարգապահությունը, ռացիոնալացնել արտադրությունը, բանվոր դասակարգի մարդկանցից պատրաստել կարմիր մասնագետներ, ժողովրդական տնտեսությունը ապահովել վեկտավոր կադրերով։ Կոնֆերենցիան ընդգծեց, որ այդ խնդիրների կատարումը և դժվարությունների հաղթահարումը

1 *ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 2-րդ մաս, էջ 725։*

հնարավոր է «ընդհանրապես աշխատավոր մասսաների և հատկապես բանվոր դասակարգի ակտիվության ու կազմակերպվածության մեծագույն աճման հիման վրա միայն»[1]։

Անհրաժեշտ էր նաև վերակառուցել պարտիական, սովետական, ինչպես և պրոֆմիութենական ու կոոպերատիվ կազմակերպությունների աշխատանքը սոցիալիստական շինարարության նոր էտապին համապատասխան։ Այդ կապակցությամբ կարևոր նշանակություն ուներ բյուրոկրատիզմի, մասսաների պահանջների նկատմամբ անհոգի վերաբերմունքի դեմ մղվող պայքարի ուժեղացումը և հատկապես աջ օպորտունիզմի (որը այդ ժամանակ գլխավոր վտանգն էր պարտիայի ներսում) ու մյուս թեքումների ջախջախումը։

Կոնֆերենցիան հույս հայտնեց, որ Կոմունիստական պարտիան «վստահորեն առաջ կընթանա ամբողջ տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրների իրագործման ուղիով և բանվոր դասակարգի ղեկավարության ներքո կմոբիլիզացնի աշխատավորների ամենալայն մասսաներին՝ դժվարությունները հաղթահարելու և տնտեսական շինարարության հնգամյա պլանը իրագործելու համար»[2]։

Հնգամյա պլանը ընդունելու նախօրյակին Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն ամբողջ պարտիային, բանվոր դասակարգին և բոլոր աշխատավորներին կոչ արեց ծավալել քննադատությունն ու ինքնաքննադատությունը, ուժեղացնել պայքարը բյուրոկրատիզմի դեմ։

Քննադատությունը և ինքնաքննադատությունը սովետական սոցիալիստական հասարակարգի առաջընթացի համար հզոր զենք է բանվոր դասակարգի և պարտիայի ձեռքին բյուրոկրատիզմը արմատախիլ անելու, թերությունները ու սխալները բացահայտելու և լիկվիդացնելու, մեր զարգացումը արագացնելու գործում։ Քննադատությունն ու ինքնաքննադատությունը է՛լ ավելի ծավալելու լոզունգը հատկապես

---

1 ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 2-րդ մաս, էջ 726։

2 Նույն տեղում, էջ 726—727։

ակտուալ նշանակություն ստացավ առաջին հնգամյակի նախօրյակին։ Ակնհայտ էր, որ սրվող դասակարգային պայքարի պայմաններում սոցիալիզմի թշնամիները օգտագործում էին մեր աշխատանքներում տեղ գտած թերություններն ու սխալները։ 1928 թ. հունիսի 3-ին Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն դիմեց պարտիայի բոլոր անդամներին և բոլոր բանվորներին ինքնաքննադատությունը վճռական կերպով ծավալելու կոչով։ Այդ դիմումում ասված է, որ ինքնաքննադատության լոզունգը օրվա կենտրոնական լոզունգներից մեկն է և պետք է ընդգրկի հասարակական կյանքի բոլոր բնագավառները, որ պետք է քննադատել «առանց անձը նկատի ունենալու» ներքևից մինչև վերև և վերևից մինչև ներքև։ Պարտիայի Կենտկոմը գտնում էր, որ ստեղծարար ու գործարար քննադատությամբ մեր երկրի բանվոր դասակարգը կլուծի իր առջև դրված խնդիրները, կհաղթահարի դժվարությունները, վճռական հաջողություններ կնվաճի սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում։

Պարտիայի կոչը լայն արձագանք գտավ մեր երկրի միլիոնավոր աշխատավորների մեջ։ Քննադատության ծավալումը բարձրացրեց բանվոր դասակարգի ռևոլյուցիոն զգոնությունը, բանվորներն սկսեցին ավելի հոգատար վերաբերվել աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրության ռացիոնալացման գործի նկատմամբ։ Լայն պայքար ծավալվեց բյուրոկրատիզմի դեմ՝ պարտիական և սովետական ապարատում, տնտեսական օրգաններում, պրոֆմիութենական և մյուս կազմակերպություններում։ Հաշվի առնելով հարցի կարևորությունը, պարտիայի XVI կոնֆերենցիան որոշում ընդունեց «Բյուրոկրատիզմի դեմ մղած պայքարի հանրագումարների և մոտակա խնդիրների մասին», նշելով, որ այդ բնագավառում ձեռք են բերվել առաջին հաջողությունները, որ հնգամյա պլանի մեծագույն խնդիրների կատարումը պահանջում է վճռականապես արմատախիլ անել պետական ապարատի բյուրոկրատական խեղաթյուրումները, այդ ապարատը ավելի մոտեցնել մասսաներին, արտադրու-

թյանը։ Այդ որոշման մեջ ցույց էր տրվում, որ ինդուստրացման արագ տեմպի և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման իրականացումը նոր պահանջներ են ներկայացնում պետական ապարատի աշխատանքի որակի նկատմամբ, որ հարկավոր է պարզեցնել և էժանացնել այդ ապարատը։

Սովետական ապարատի աշխատանքը բարելավելու, նրա անձնակազմը քայքայված տարրերից, սովետական օրենքները խեղաթյուրողներից, կուլակների ու նեպմանների հետ միաձուլվողներից, աշխատավորների կենսական շահերի նկատմամբ բյուրոկրատորեն վերաբերվողներից և այլ խորթ տարրերից ազատվելու համար կոնֆերենցիան որոշեց անցկացնել ապարատի զտում։

Պարտիայի կոչով Բանդյուղտեսչության օրգանները ավելի ուժեղացրին իրենց աշխատանքները, գործի ներգրավելով բանվորների ու ծառայողների մասսաներ։

Կենտրոնական օրգանների օրինակով «Խորհրդային Հայաստան» թերթում 1928 թ. սկսած առանձնացվեց հատուկ էջ՝ «ԲԳՏ-ի թերթիկ», որի միջոցով բանվորական ու գյուղացիական թղթակիցների լայն ցանցը վճռական պայքարի ելավ պարտիական, տնտեսական, սովետական, պրոֆմիութենական օրգանների և կազմակերպությունների աշխատանքներում տեղ գտած սխալներն ու թերությունները մերկացնելու, բյուրոկրատական խեղաթյուրումները ջախջախելու համար։ «Խորհրդային Հայաստան», «Ավանդարդ», «Բանվոր», «Մաճկալ», «Բատրակ», «Կղզի շնֆակ» (աղբրնջաններն) թերթերի շուրջը համախմբված մոտ վեց հազար բանվոր և գյուղացի թղթակիցներ օգնում էին կենսագործելու պարտիայի որոշումները։

Բյուրոկրատիզմի դեմ պայքարի ուժեղացման և այդ պայքարում մասսաների ներգրավման մասին են վկայում հետևյալ տվյալները։ Ըստ Հայաստանի ԿՎՀ—ԲԳՏ-ի հաշվետվության[1] Բանվորա-Գյուղացիական Տեսչության ժողկո-

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 284, թ. 32—74։

մատի Բողոքների բյուրոն 1927/28 թ. ստացել է 868, իսկ 1928/29 թ. 11 ամսվա ընթացքում՝ 1364 դիմում, այն դեպքում, երբ 1925/26 թ. դրանց թիվը եղել է 607։ Բացի այդ 1928/29 թ. Բողոքների բյուրոն Մերթերի խմբագրություններից քննության համար ստացել էր 218 տպագրված և 174 անտիպ հոդված։ 1928—1929 թթ. դիմումների մոտ 60,0 տոկոսը իրենց բնույթով վերաբերում էին աշխատավոր մասսաների նկատմամբ բյուրոկրատական, անուշադիր վերաբերմունքին։ Դիմումների ավելի քան 60,0 տոկոսը լուծում էին ստացել մինչև երկու շաբաթվա ընթացքում։ 1929 թ. Բողոքների բյուրոյում կազմակերպվում է Կոլեգիա՝ հիմնարկ-ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի կազմը փոխվում էր երեք ամիսը մեկ անգամ։ Հարցերը քննարկվում էին շահագրգռված անձանց և բանվոր ատենակալների մասնակցությամբ, որը բարձրացնում էր ԲԳՏ ժողկոմատի հեղինակությունը և ավելացնում նրա աշխատանքներին մասնակցողների թիվը։

1928 թ. վերջերին ԲԳՏ-ի սեկցիաներ են կազմակերպվում քաղսովետներին կից, որոնց գործունեությունը ծավալվում է 1929 թ. ապրիլից սկսած։ Հետագայում այդպիսի սեկցիաներ կազմակերպվեցին նաև խոշոր գյուղսովետներին կից։

Կոմունիստական պարտիայի կոչին ակտիվորեն արձագանքից նաև Լենինյան կոմերիտմիությունը. նրա նախաձեռնությամբ կազմակերպվեցին «Թերթ հեծելազորի» ջոկատներ, որոնց արշավները դարձան բյուրոկրատիզմի դեմ պայքարի կարևոր ձևերից մեկը։ Ըստ ՀԿ(բ)Պ ԿՎՀ-ի նախնական տվյալների 1929 թ. ապրիլին գործում էին այդպիսի 120 ջոկատ։ Նույնի գնահատմամբ «Թ. Հ.» («Թերթ հեծելազոր»—Վ. Ղ.) աշխատանքը կարճ ժամանակամիջոցում արդարացրեց իրեն, որպես հասարակական հսկողության ձևերից մեկը, և ապացուցեց իր կենսունակությունը հասարակական, տնտեսական ու սովետական օրգանների աշխատանքներում բյուրոկրա-

տիզմի, անտնտեսվարության, քյուլակությունի և մյուս թերությունների դեմ մղվող պայքարում»[1]։

Նոր պայմաններին համապատասխան ռեսպուբլիկայի կոմերիտական կազմակերպությունների աշխատանքի վերակառուցման, սոցիալիստական շինարարության գործում նրանց ակտիվորեն մասնակից դարձնելու նշանաբանով անցավ Հայաստանի 25 հազարանոց Լենինյան կոմերիմիության VI համագումարը (1929 թ. մայիս), որը բացի ՀԿԿՄ Կենտկոմի հաշվետվությունից լսեց և քննարկեց նաև Հայաստանի կոմերիտական կազմակերպության մասնակցությունը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործին, կոմերիմիության իդեոլոգիական խնդիրների մասին զեկուցումները։

Համ(ա)Պ XVI կոնֆերենցիայի որոշմամբ 1929—1930 թթ., ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Սովետական Հայաստանում, անցկացվեց սովետական ապարատի և պարտիայի շարքերի զտում։

Սովետական ապարատից զտվեցին այնպիսի տարրեր, որոնք աղավաղում էին սովետական օրենքները, դաշնակցում էին կուլակների ու նեպմանների հետ, խանգարում էին թափթփվածության ու բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարին, ովքեր քողարկում էին այդ թերությունները[2]։ Նրանց փոխարեն առաջ քաշվեցին նոր, երիտասարդ ուժեր բանվոր դասակարգի լավագույն մարդկանցից։ Այդ ընթացքում պրոֆմիութենական կազմակերպությունների կողմից զեկավար աշխատանքի առաջ քաշվեցին մոտ երեք հարյուր բանվոր[3]։ Զտումը օգնեց ավելի առողջացնելու սովետական պետական ապարատը, նրան ավելի մոտեցնելու արտադրությանը, բարձրացնելու նրա պատասխանատվությունը կատարված աշխատանքը ստուգելու գործում։

---

1 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, ց. 3, գ. 31, թ. 33։

2 Տե՛ս «Հայաստանի Կոմունիստական (բ) Կուսակցության VII համագումարի որոշումները», Երևան, 1930, էջ 22։

3 «Լենինյան ուղի», 1930, № 4—5 (ապրիլ-մայիս), էջ 9։

ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման, դասակարգային պայքարի ուժեղացման պայմաններում նոր դժվարությունների հաղթահարման համար պարտիան ավելի մարտունակ դարձնելու, մանրբուրժուական աղդեցության դեմ պայքարն ուժեղացնելու շահերը պահանջում էին անցկացնել զտում նաև պարտիայի շարքերում։ Մյուս կողմից, պարտիայի սոցիալական կազմի բարելավումը ևս էր մնում այն պահանջներից, որ դրել էին պարտիայի և սովետական ժողովրդի առջև ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրները։

Մինչև 1929 թ. դեկտեմբերը ստուգման և զտման աշխատանքները հիմնականում ավարտվել էին։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի 11.862 անդամներից վտարվեցին 1506 մարդ, որը կազմում է բոլոր պարտիականների 12,7 տոկոսը։ Նույն ժամանակամիջոցում պարտիայի մեջ ընդունվեցին 964 բանվորներ և բատրակներ, որը ավելի բարելավեց ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպության սոցիալական կազմը[1]։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի ընդհանուր ստուգումը և զտումը նպաստեց նրա շարքերը մաքրելու «սոցիալապես անհարազատ, բյուրոկրատացած և քայքայված տարրերից», որոնք դիմադրում և խանգարում էին պարտիայի գծի կիրառմանը, ասված է ՀԿ(բ)Պ VII համագումարում (1930 թ. մայիս) ԿՎՀ—ԲԳՏ-ի զեկուցման առթիվ ընդունված որոշման մեջ[2]։ Պարտիայից հեռացվեցին նաև «պարտիական որոշումներով դատապարտված աջ և տրոցկիստական թեքումների ներկայացուցիչները», որոնք միայն ձևականորեն էին կտրվել օպոզիցիոն խմբակներից, իսկ «գործնականում շարունակում էին իրենց հակապարտիական աշխատանքը պարտիայի շարքերում»։

---

1 «Խորհրդային Հայաստան», 8 դեկտեմբերի 1929 և 29 մայիսի 1930։

2 Հայաստանի Կոմունիստական (բ) Կուսակցության VII համագումարի որոշումները, Երևան, 1930, էջ 21—22։

Համագումարը արձանագրեց, որ ՀԿ(բ)Պ շարքերի ընդհանուր ստուգումը և զտումը կատարվել է բանվորների և աշխատավոր գյուղացիների լայն մասսաների ակտիվության բարձրացման, ինքնաքննադատության ծավալման պայմաններում, որ այդ աշխատանքը զուգակցվել է վերակառուցման ժամանակաշրջանի խնդիրները և պարտիայի քաղաքականությունը պարզաբանելու և պրոպագանդելու հետ, և որ այդ բոլորը «նպաստել է Հայաստանի ամբողջ պարտիական կազմակերպությանը համախմբվելու պարտիայի ընդհանուր գծի կիրառման, սոցիալիստական շինարարության խնդիրների լուծման գործի շուրջը»[1]։

Վերակառուցման ժամանակաշրջանի խնդիրները պահանջում էին լուրջ ուշադրություն դարձնել և վերակառուցել պրոֆմիութենական կազմակերպությունների աշխատանքը։ Պրոֆմիությունները կոչված էին անմիջապես զբաղվելու սոցիալիստական ինդուստրացման, հնգամյա պլանի կատարումը ապահովելու, աշխատանքի արտադրողականությունը և աշխատանքային կարգապահությունը բարձրացնելու, արտադրական սոցիալիստական մրցությունը կազմակերպելու և մյուս հարցերով։ Սակայն պրոֆմիությունների աշխատանքներում դեռևս կային նեղ, ցեխային պարտիակվածության, արեդյունիոնիզմի, աշխատավորների շահերի նկատմամբ բյուրոկրատական անուշադրության, և այլ կարգի թերություններ։ Կոմունիստական պարտիան վճռական պայքար ծավալեց այդ բոլոր թերությունները վերացնելու համար։

«Պրոֆշարժման հերթական խնդիրները» խորագրով առաջնորդողում «Խորհրդային Հայաստան» թերթը գրել է, որ պրոֆշարժման ասպարեզից պետք է ընդմիշտ վերացնել նեղ պրոֆմիութենական, արեդյունիոնիստական, կաստայական տրամադրությունները։ Սոցիալիզմի և կոմունիզմի դպրոց հանդիսացող պրոֆմիությունները պետք է ամենաակտիվ մասնակցություն ցույց տան սոցիալիստական շինարարու-

---

[1] Հայաստանի Կոմունիստական (բ) Կուսակցության VII համագումարի որոշումները, Երևան, 1939, էջ 21—22։

թյանը և երկրում ծավալվող դասակարգային պայքարին, որի պայմաններում տեղի է ունենում այդ շինարարությունը[1]։

1928 թ. նոյեմբերի 18—22-ը կայացավ Հայաստանի արհեստակցական միությունների VI համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էր 89 պատգամավոր։ Համագումարը հրավիրվել էր նախատեսված ժամանակից մեկ տարի շուտ՝ ՀԱՄԽ-ի մի շարք ղեկավարների՝ այլ աշխատանքի անցնելու պատճառով։ Համագումարում ողջույնի ճառով հանդես եկավ ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար Ս. Խանջյանը։ Սովետական Միության միջազգային և ներքին դրության և Հայաստանի տնտեսական-կուլտուրական հաջողությունների վերաբերյալ զեկուցում լսելուց հետո համագումարը լսեց և քննարկեց ՀԱՄԽ-ի հաշվետու զեկուցումը, որը ընդգրկում էր ինը ամսվա կատարած աշխատանքների հանրագումարները։ Հայաստանի արհեստակցական միությունները զգալի աշխատանք էին կատարել առաջին հնգամյա պլանի խնդիրները պրոպագանդելու, իրենց շարքերը ընդլայնելու, մասնավորապես բատրակներին արհմիությունների մեջ ընդգրկելու, աշխատավորների նյութական և կենցաղային պայմանները բարելավելու ուղղությամբ։ 1928 թ. հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի արհեստակցական միությունների մեջ հաշվվում էր 54 հազար անդամ։ Կանայք կազմում էին արհմիությունների անդամների 13,0, իսկ ազգային փոքրամասնությունները՝ 9,9 տոկոսը։ Համագումարը նշեց, որ միութենական մարմինները պատշաճ չափով չեն ղեկավարել արտադրական հանձնաժողովների գործունեությունը, բայց այնուամենայնիվ, այդ հանձնաժողովների առաջարկների կեսից ավելին կենսագործվել է[2]։

Համագումարը ընտրեց 49 հոգուց բաղկացած Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի նոր կազմ։

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 18 նոյեմբերի 1928։

2 «Խորհրդային Հայաստան», 20 նոյեմբերի 1928։

Իսկ ՀԱՄԽ-ի առաջին պլենումը ընտրեց նոր նախագահություն։ ՀԱՄԽ-ի նախագահ ընտրվեց նշանավոր ռևոլյուցիոներ և պետական ու պարտիական գործիչ Թադևոս Մանդալյանը։

Պրոֆմիութենական աշխատանքների բարելավման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀԱՄԽ-ի 2-րդ պլենումը, որը տեղի ունեցավ 1929 թ. ապրիլի 21—23-ը Լենինականում և որի աշխատանքներին մասնակցեցին քաղաքի բանվորների ավելի քան երեք հարյուր ներկայացուցիչներ։ Պլենումը քննարկեց կոլեկտիվ պայմանագրերի վերակնքման արդյունքները, արհմիությունների շարքերում անդրադարձությունը վերացնելու հարցը, բատրակների կազմակերպման և նրանց շահերի պաշտպանության խնդիրները։ Օրակարգի կենտրոնական հարցն էր Հայկական ԽՍՀ ժողտնտեսության զեկուցումը Հայաստանի արդյունաբերության հնգամյա պլանի և արհմիությունների խնդիրների մասին։

Ձեռնարկությունների կոլեկտիվների և վարչա-տնտեսական ղեկավարության միջև պայմանագրերի ստորագրումով նախատեսվում էին արտադրական անվտանգության ապահովման, բանվորների կենցաղային դրության բարելավման միջոցառումները։ Այդ պայմանագրերը մշակվում էին բանվորների ակտիվ մասնակցությամբ։ 1929 թ. համար պայմանագրերի ստորագրումը տեղի ունեցավ նախորդ տարվա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին։

«Կոլեկտիվ պայմանագրերի կամպանիան ընդունեց քաղաքական մեծ կամպանիայի բնույթ,—կարդում ենք ՀԿ(բ)Պ ԿԿ-ի ինֆորմացիոն տեղեկագրում,—և ցուցադրեց բանվորների ու ծառայողների մասսայի ակտիվությունը և քաղաքական դիտակցությունը։ Հիմնական նվաճումներն են՝ բանվորների մասսայական մասնակցությունը կոլեկտիվ պայմանագրերի կամպանիային (ըստ նախնական տվյալների 75 ձեռնարկություններում ընդհանուր ժողովներին բանվորների մասնակցությունը արտահայտվեց 92,0 տոկոսով), գործարար մոտե-

.ցումը կոլեկտիվ պայմանագրերի քննարկման աշխատանքին...»[1]։

Գյուղանտառ միության կենտրոնական վարչության զեկուցման մեջ բերված էին հատկապես բատրակների մեջ աշխատանքի արդյունքների մի շարք տվյալներ։ Միության անդամների թիվը վերջին մեկ տարվա ընթացքում աճել էր 28,0 տոկոսով՝ 12.500-ից հասնելով ավելի քան 15.300-ի։ Միության անդամների թիվը ավելացել էր հատկապես բատրակների հաշվին՝ 1927 թ. հուլիսի 1-ի 7.848-ից 1929 թ. փետրվարին հասնելով 12.550-ի, որը կազմում էր միության բոլոր անդամների 75,0 տոկոսը։ Հողանտառ միությունը զգալի աշխատանք էր կատարել բատրակների քաղաքական կազմակերպման, աշխատավարձի կարգավորման, սոցիալական ապահովագրություն մտցնելու, կուլտուրական սպասարկման, ինչպես և կուլակների դեմ մղվող պայքարում նրանց համախմբելու առաջադրանքում։ Միության օգնությամբ հաջողվել էր մի շարք շրջաններում բարձրացնել բատրակների աշխատավարձը, բարելավել նրանց աշխատանքային պաշտպանությունը։ Բատրակների համար կազմակերպված լիկբեզներում սովորում էին ավելի քան չորս հազար մարդ։ Նրանց համար կազմակերպվել էր 81 կարմիր անկյուն, գործում էր երկու շրջիկ կինո, 16 գրադարան։ Վերջին ընտրությունների ժամանակ գյուղական սովետներում ընտրվել էին երկու հազար բատրակ, գյուղսովետների նախագահների թվում կար 149 բատրակ[2]։

Պլենումը հավանություն տվեց ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման հնգամյա պլանին և արձանագրեց, որ ինչպես միութենական, այնպես էլ մեր ռեսպուբլիկայի համար պլանով նախատեսված կապիտալ ներդրումներն ապահովում են երկրի արագատեմպ ինդուստրացումը, ժո-

---

1 Մշի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 267, թ. 29։
2 «Խորհրդային Հայաստան», 25 ապրիլի 1929։

գյուղական տնտեսության սոցիալիստական սեկտորի ուժեղացումը, գյուղի սոցիալիստական վերակառուցումը, որոնք իրենց հերթին ապահովում էին աշխատավորների նյութական և կենցաղային դրության բարելավումը, բանվոր դասակարգի և գյուղացիների դաշինքի ամրապնդումը, Սովետական Միության պաշտպանությունը և սոցիալիզմի հաղթական կառուցումը։ Միաժամանակ պլենումը նշեց, որ հնգամյա պլանը դեռևս չի ենթարկվել լայն մասսաների քննարկմանը և պահանջեց ապահովել պրոֆմիությունների և բանվորական մասսաների մասնակցությունը հնգամյա պլանի հետագա մշակմանը։ Պլենումը առաջարկեց մեծացնել ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և աշխատավարձի աճի ցուցանիշները, ավելացնելով, որ պետք է ավելի լրջորեն մշակվեն պլանի՝ աշխատանքի և բանվորական ուժի ու մասնագետների պատրաստման բաժինները, և հանձնարարեց ՀԱՄԽ-ի Նախագահությանը հատուկ քննության ենթարկելու այդ հարցերը։

ՀԱՄԽ-ի Նախագահությանը հանձնարարվեց հնգամյա պլանի մասսայական քննության հիման վրա կազմել կոնկրետ առաջարկներ և ներկայացնել համապատասխան օրգաններին՝ «հնգամյա պլանի հետագա ճշգրտումը և խորացրած մշակումը ապահովելու համար»[1]։

Պլենումում ընթերցվեց ՀԼԿԵՄ տասնամյակի առնչությամբ Երևանում դրամարված պարտական, պրոֆմիութենական և կոմերիտական ակտիվի հանդիսավոր նիստի հեռագիրը, հասցեագրված՝ Լենինական, ՀԱՄԽ-ի պլենումին, պարտիայի և կոմերիտմիության դավառային կոմիտեներին։ Հեռագրում ասված է. «Քաղաքի պարտական, պրոֆմիութենական և կոմերիտական ակտիվի հանդիսավոր նիստը որոշել է Երևանի բանվորների անունից սոցիալիստական մրցման հրավիրել Լենինականի պրոլետարիատին և երիտասարդ բանվորությանը»[2]։ Ընթերցվեց նաև Հայրամբա-

---

1 «Խորհրդային Հայաստան», 26 ապրիլի 1929։

2 «Խորհրդային Հայաստան», 24 ապրիլի 1929։

էր բանվորների հեռագիրը, որով նրանք սոցիալիստական մրցման էին հրավիրում Լենինականի տեքստիլ կոմբինատի կոլեկտիվին[1]։ Իր պատասխանում Լենինականի տեքստիլ ֆաբրիկայի կոլեկտիվի ներկայացուցիչը պլենումում հայտարարեց, որ քաղաքի բանվորությունը ընդունում է երևանցիների մրցահրավերը։

ՀԱՄԽ-ի երկրորդ պլենումը կարևոր նշանակություն ունեցավ առաջին հնգամյա պլանի խնդիրների հետագա մասնայնացման և պլանի կատարման համար ռեսպուբլիկայի աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու գործում։

Որոշ թերություններ կային նաև արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարման սապարեզում։ Չնայած ամբողջ երկրի արդյունաբերությունը ձեռք էր բերել խոշոր հաջողություններ, այնուամենայնիվ ձեռնարկությունների ղեկավարման գործում դեռևս բացակայում էր անհրաժեշտ կարգ ու կանոնը, ֆունկցիաների ու պարտականությունների պարզ ու որոշակի սահմանազատումը՝ դիրեկցիայի, գործարկոմի և պարտիական կազմակերպության միջև։ Շատ տեղերում պարտիական ու պրոֆմիութենական օրգանները խառնվում էին ֆաբրիկաների ու գործարանների դիրեկտորների օպերատիվ-արտադրական ֆունկցիաների մեջ, դիմազրկելով նրանց։ 1929 թ. սեպտեմբերին «Արտադրության ղեկավարումը կանոնավորելու և միանձնյա ղեկավարություն սահմանելու միջոցառումների մասին» որոշումով ՀամԿ(բ)Պ Կենտկոմը դիմեց պարտիայի բոլոր կազմակերպություններին և անդամներին, որտեղ ցույց էր տալիս, որ ինդուստրացման կուրսի հաջող կիրառումը և արդյունաբերության հաջող զարգացումը «կախված է արտադրության և նրա ղեկավարման ճիշտ կազմակերպումից, այսինքն՝ արտադրության մեջ հաստատուն կարգ և ուժեղ ներքին կարգապահություն ստեղծելուց»[2]։ Այդ

---

[1] Հեռագրի տեքստը տե՛ս նույն տեղում։

[2] ВКП(б) в резолюциях и решениях, изд. шестое, часть II, 1941, стр. 809.

որոշումով խստորեն սահմանազատվում էին ձեռնարկությունների դիրեկցիաների և պարտիական ու հասարակական օրգանների ֆունկցիաներն ու պարտականությունները, ամրապնդվում էր միանձնյա ղեկավարությունը, բարձրացվում էր դիրեկցիայի պատասխանատվությունը արդիմնալանների և արտադրական բոլոր խնդիրների կատարման համար։ ՀԿ(բ)Պ Կենտկոմը հոկտեմբերի 15-ին քննարկեց՝ այդ որոշումը և միջոցառումներ մշակեց այն կենսագործելու համար։

Կարևոր նշանակություն ուներ հատկապես բանվորների աշխատանքային կարգապահության հարցը։ Ինդուստրացման հետևանքով մեծ չափով ավելանում էր բանվորների թիվը. այդ ավելացումը կատարվում էր գյուղից եկողների հաշվին, որոնք իրենց հետ բանվոր դասակարգի շարքերն էին բերում մանրբուրժուական տրամադրություններ, անկազմակերպվածություն։ Նրանք դեռևս ավելի շատ կապված էին գյուղատնտեսության հետ և չէին մտահոգվում արտադրության լավագույն կազմակերպման, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, կարգապահության բարելավման խնդիրներով, խանդարում էին պրոֆեսիոնալ բանվորների ակտիվության զարգացմանն ու զարգացմանը։ Պարտիան և կառավարությունը միջոցներ ձեռնարկեցին ծույլերի, գողերի դեմ պայքարելու, աշխատանքային կարգապահությունը բարձրացնելու, արդյունաբերության աշխատողներին իսկական բանվորական ոգով դաստիարակելու համար։ Այդ միջոցառումներից հարկ է նշել Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի 1929 թ. հունիսի 16-ի որոշումը «Աշխատանքային կարգապահությունը Հայկական ԽՍՀ ձեռնարկություններում ուժեղացնելու ձեռնարկումների մասին», որը բխում էր ԽՍՀՄ ժողկոմխորհի նույն թվականի մարտի 6-ի որոշումից։ Այդ որոշումը արդյունաբերության, տրանսպորտի և պետական մյուս ձեռնարկությունների ղեկավարներին պարտավորեցնում էր պայքար ծավալել աշխատանքային կարգապահությունը ամրապնդելու համար, խստորեն սահմանել յուրաքան-

չյուրի պլանը, կիրառել կատարված աշխատանքի հաշվառում և այլն։

Վերոհիշյալ միջոցառումները կարևոր դեր խաղացին ձեռնարկությունը արտադրությանը մոտեցնելու, արտադրական հարցերը ուշադրության կենտրոնում պահելու և բանվորների աշխատանքային խանդավառությունը զարգացնելու գործում։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը հատկապես հոդ էին տանում արտադրությունը ռացիոնալացնելու հետ միասին աշխատավոր մասսաների արտադրական եռանդը կազմակերպելու մասին։ Պարտիայի XV համագումարը, որը մշակեց առաջին հնգամյա պլանի դիրեկտիվները և XVI կոնֆերենցիան, որը ընդունեց այդ պլանը, դատեց, որ ինդուստրացման գործն առաջ տանելու և հնգամյակի խնդիրները լուծելու համար հարկավոր է ամենաբարձր աշխատանք տանել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ռացիոնալացման գծով և դրա մեջ ներգրավել բանվորական ու գյուղացիական լայն մասսաներին։ Արտադրության ռացիոնալացումը պահանջում էր կրճատել անարտադրողական ծախսերը, վերջ տալ անհոգությանն ու անփութությանը, արմատավորել նորագույն տեխնիկան և գիտության նվաճումները արտադրության մեջ, օգտագործել արտասահմանյան երկրների փորձը և այլն։ Կոմունիստական պարտիան նշում էր, որ հատկապես Կոմերիտմիությունը պետք է հանդիսանա տնտեսության և աշխատանքի ռացիոնալացման մեջ նորի նախաձեռնողն ու կենսագործողը, և բանվոր դասակարգից ու բոլոր աշխատավորներից պահանջում էր գիտակցական վերաբերմունք ցուցաբերել սոցիալիստական արտադրության հարցերի նկատմամբ։

Արտադրության ռացիոնալացման ու բարելավման գործում բանվորների ակտիվ մասնակցության հիմնական ձևը դարձան արտադրական խորհրդակցությունները։ Այդտեղ արվում և քննարկվում էին առաջարկներ՝ արտադրությունը կատարելագործելու, տեխնիկան ավելի լավ օգտագործելու,

հումքը և վառելանյութը խնայելու, աշխատանքային կարգապահությունը ամրապնդելու մասին և այլն։

Արտադրական խորհրդակցությունների գործունեությունը ակտիվացնելու ուղղությամբ մեծ դեր խաղաց «Պրավդա» թերթի կազմակերպած արտադրական խորհրդակցությունների համամիութենական ստուգատեսը։ Դիմելով Սովետական Միության բանվորներին և ծառայողներին, թերթի խմբագրությունը բացատրում էր, որ ստուգատեսի նպատակն է լայնորեն ծավալել քննադատությունն ու ինքնաքննադատությունը անտեսական աշխատանքի բնագավառում, ուժեղացնել պայքարը բյուրոկրատիզմի և անտնտեսավարության դեմ, ստուգել արտադրական խորհրդակցությունների աշխատանքը, «որոնց միջոցով պրոլետարական մասսաները մասնակցում են մեր արդյունաբերության սոցիալիստական ռացիոնալացմանը», և բացահայտել նրանց գործունեության դրական կողմերն ու թերությունները[1]։

Ստուգատեսը անցկացվեց 1928 թ. նոյեմբերից մինչև 1929 թ. մարտը, իսկ Հայաստանում այն շարունակվեց մինչև ապրիլի կեսը։

Հայաստանի Արհեստակցական Միությունների խորհուրդը նամակով դիմեց ռեսպուբլիկայի բոլոր բանվորներին ու բանվորուհիներին, որտեղ կոչ էր արվում ակտիվորեն արձագանքել համամիութենական ստուգատեսին և պարզաբանվում էին նրա անցկացման պայմանները։

Արտադրական խորհրդակցությունները սկսեցին հրավիրվել ավելի հաճախակի, էլ ավելի բարձրացավ նրանց դերը արտադրության մեջ։

Ալավերդու պղնձագործները 1929 թ. փետրվարի 5-ի արտադրական խորհրդակցությունում, որին մասնակցում էին 200 հոգի, քննեցին արտադրողականությունը բարձրացնելու, արտադրական ծրագիրը կատարելու և «Կույր հանքի» փոր-

---

[1] Տե՛ս «Политический и трудовой подъем рабочего класса СССР (1928—1929), Сборник документов», стр. 113—115.

ման հարցերը։ Խորհրդակցությունը որոշեց անպայման անցնել գործարքային սիստեմի, բանվորներին օգտագործել ըստ իրենց որակավորման, «արտադրական և աշխատանքային կարգապահությունը բարձրացնելու համար վճռական պայքար մղել ուշացումների և անհարգելի բացակայությունների դեմ» և այլն։ «Կույր հանքի» հորատումը (վերականգնումը) արագացնելու համար արվեցին կոնկրետ առաջարկություններ, այնտեղ փոխադրվեց առաջավոր բանվոր Ս. Բաբայանի արտելը (բրիգադը)։ Մի շարք առաջարկություններ արվեցին նաև մյուս չգործող հանքախորշերը (բուվանցք) արագ վերականգնելու համար[1]։

Կ. Մարքսի անվան գործարանի փետրվարի 9-ին կայացած արտադրական խորհրդակցությունում (մասնակցում էին 110 մարդ) ձուլող բանվորները խոսում էին այն մասին, որ մասնագետները հաճախ են փոխվում, որի հետևանքով ընկնում է պատասխանատվությունը և պահանջում էին ունենալ կայուն և որակյալ մասնագետներ[2]։

Հայաստանի ԺՏԽ-ի կարի ֆաբրիկայում սուր կերպով էր դրված ձևման նորմաների մշակման հարցը։ Այդպիսի նորմաների բացակայության պատճառով շատ կտոր էր ծախսվում, որը բարձրացնում էր արտադրանքի ինքնարժեքը։ Ֆաբրիկայի արտադրական և ատելիեային հանձնաժողովները նամակով դիմեցին Վոլոդարսկու անվան կարի ֆաբրիկայի արտադրական հանձնաժողովին, խնդրելով օգնել իրենց։ «Իմանալով, որ Ձեր ֆաբրիկան,—ասված է նամակում,—ունի երկար տարիների փորձ և ձևարար մասնագետների որակյալ կադրեր, մենք արտադրական խորհրդակցության ատելիեի գծով հանձնաժողովի նիստում որոշեցինք դիմել Ձեզ խնդրանքով՝ օգնել մեզ այդ հարցը լուծելու մեջ, այդ գործում Ձեր փորձը հաղորդել մեզ»[3]։

---

1 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 187, ց. 1, գ. 126, թ. 21—23։

2 Նույն տեղում, ֆ. 428, ց. 4, գ. 57, թ. 11—12։

3 Նույն տեղում, ֆ. 65, ց. 4, գ. 917, թ. 160։

Ամենուրեք, արտադրական ձեռնարկություններում տրվում էին զեկուցումներ ստուգատեսի նշանակության և արդյունաբերության հնգամյա պլանի մասին, ընդգծելով, որ հնգամյակի առաջին տարվա պլանը կատարելու գրավականը ինքնարժեքը 7,0 տոկոսով իջեցնելը, արտադրողականությունը 17,0 տոկոսով բարձրացնելը, ինչպես նաև աշխատանքային կարգապահությունը բարելավելն է։ Այդ հարցերը պրոպագանդելու և բանվորների ուշադրությունը դրանց վրա գրավելու գործում կարևոր դեր խաղացին նաև գործարաններում և ցեխերում լույս տեսնող պատի թերթերը։ Առաջարկություններ հավաքելու համար բանվորներին բաժանվեցին հարցաթերթիկներ, իսկ պատասխանների համար ցեխերում դրվեցին հատուկ արկղներ, սահմանվեց ստուգատեսային հանձնաժողովի անդամների հերթապահություն և այլն։

Միայն Երևանում և Լենինականում, ըստ ՀԱՄԽ-ի հաշվետվության, ստուգատեսային արտադրական ժողովներին մասնակցեցին 3270 մարդ, որը կազմում է բոլոր բանվորների 70,8 տոկոսը։ Երկաթուղային տրանսպորտում, նրա աշխատանքի առանձնահատկությունների հետևանքով, մասնակիցների թիվը համեմատաբար ցածր էր՝ 23,0 տոկոս։ Առանձին ձեռնարկություններում նկատվում էր ավելի մեծ ակտիվություն. «Արարատ» տրեստի և Հայբամբակկոմի ձեռնարկություններում ժողովներին մասնակցեցին բոլոր աշխատողների 94,0—97,0 տոկոսը։ Հաշվի առնված 36 արտադրական օբյեկտներում ժողովների ժամանակ ելույթ է ունեցել ներկաների 20,5 տոկոսը, կամ այդ ձեռնարկությունների բոլոր բանվորների 11,6 տոկոսը։ Նրանց մեծ մասը արել է արտադրությունը բարելավելու վերաբերյալ կոնկրետ առաջարկություն։ Այդպիսի առաջարկությունների թիվը հասնում է մոտավորապես 3800-ի, որից իրագործման համար ընդունվել է ավելի քան երկու հազարը։ Դժբախտաբար տվյալներ չկան դրանց տնտեսական էֆեկտի չափերի մասին։

Ստուգատեսը երևան հանեց նաև մի քանի թերություններ և օգնեց հետագայում ատիճանաբար վերացնելու

դրանք։ Այդ թերություններից են՝ որոշ տեղերում արտադրական խորհրդակցությունների ուշ դումարումը, արտադրական հանձնաժողովների և ձեռնարկությունների ժամանակավոր վերահսկող հանձնաժողովների (նրանց խնդիրն էր աշխուժացնել արտադրական խորհրդակցությունների աշխատանքը, ստուգել նրանց առաջարկությունների իրագործումը և այլն) աշխատանքի ցածր մակարդակը, դրանց անբավարար դեկավարումը պրոֆմիությունների կողմից, ինժեներա-տեխնիկական անձնակազմի թույլ մասնակցությունը խորհրդակցությունների աշխատանքներին, գյուտարարության գործում շահագրգռության բացակայությունը (1927/28 թ. պրեմիա է տրվել ընդամենը չորս բանվորի՝ 300 ռուբլի գումարով) և այլն։

Ամփոփելով կամպանիայի արդյունքները և նշանակությունը, ՀԱՄԽ-ը նույն հաշվետվության մեջ գրել է.

«Արտադրական խորհրդակցությունների ստուգատեսի հիմնական նվաճումներից մեկը բանվորական մասսաների ներգրավումն է դրանց աշխատանքի մեջ։ Հատկապես կարևոր է այն, որ ստուգատեսի ժամանակ տրվել են մեծաքանակ կոնկրետ և արժեքավոր առաջարկություններ»[1]։

Հանդես եկան ավելի մեծ թվով արտադրության առաջավորներ՝ ռացիոնալիզատորներ, նորարարներ։ Բարձրացավ բանվորների ինքնագիտակցությունը և պատասխանատվության զգացումը, բարելավվեց կարգապահությունը, մեծ չափով նվազեց աշխատանքից բացակայողների և ուշացողների թիվը։ Այսպես, 1928/29 տնտեսական տարում Հայաստանի խոշոր արդյունաբերության մեջ յուրաքանչյուր բանվորին ընկնում է 4,92 օր անհարգելի բացակայություն՝ նախորդ տարվա 7,61 օրվա դիմաց, այսինքն, անհարգելի բացակայությունը կրճատվել էր 2,69 օրով կամ 35,3 տոկոսով[2]։

---

1 Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 4, գ. 917, թ. 118—119։

2 ՀՍԽՀ աշխատանքը և արդյունաբերությունը 1926/27—1928/29 թթ.։ Վիճակագրական տեղեկատու, Երևան, 1930, էջ 16—17։

* * *

Արտադրական խորհրդակցությունների գործունեության հիման վրա ծագեցին առաջին երիտասարդական հարվածային բրիգադները, որոնք պայքարում էին ռացիոնալիզացիայի միջոցով արտադրողականությունը բարձրացնելու, ինքնարժեքն իջեցնելու, ավելի շատ արտադրելու համար։ Այդ բրիգադների հանդես գալը հանդիսանում էր արտադրության սոցիալիստական ռացիոնալիզացիայի համար երիտասարդության ստեղծագործական ակտիվության արտահայտությունը։

Առաջին հարվածային բրիգադները հանդես եկան Սովետական Միության արդյունաբերական խոշոր կենտրոններում՝ Ուրալում, Կուզբասում, Դոնբասում, Մոսկվայում, Լենինգրադում։ Դեռևս 1926 թ. հուլիսին Կազանյան երկաթուղագծում կոմերիտականների նախաձեռնությամբ կազմակերպվեց երիտասարդության հարվածային բրիգադ, որը հաջողությամբ պայքարում էր արտադրողականությունը բարձրացնելու համար։

1927 թ. նոյեմբերից այդպիսի մի բրիգադ, 11 հոգուց բաղկացած, գործում էր Զլատոուստի մեխանիկական գործարանում (Ուրալ)։ Այդ բրիգադում հիմնականում աշխատում էին կոմերիտականներ։ 1928 թ. մարտի 30-ին «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը հայտնեց նրանց աշխատանքի առաջին արդյունքների մասին։ 1928 թ. կեսերին հարյուր հիսուն հոգուց բաղկացած երիտասարդական մի քանի հարվածային խմբեր գործում էին Լենինգրադի «Ռավենստվո» տեքստիլ ֆաբրիկայում։ Նրանք զգալի չափով բարձրացրել էին աշխատանքի արտադրողականությունը և պակասեցրել խոտան արտադրանքը։

Երիտասարդական հարվածային բրիգադները ավելի մեծ քանակությամբ կազմակերպվեցին սկսած 1929 թ. հունվարի-փետրվարից, երբ ծավալվել էր արտադրական խորհրդակցությունների ստուգատեսը։

Հունվարին Լենինգրադի «Կրասնի վիբորժեց» գործարանում աշխատում էին չորս կոմերիտական հարվածային բրիգադ, փետրվարին մի քանի բրիգադ կազմակերպվեց Ուրիցկու անվան ծխախոտի ֆաբրիկայում և երկրի բազմաթիվ այլ ձեռնարկություններում: Դոնբասում և այլ վայրերում մեծ չափով նման բրիգադներ և հերթափոխություններ հանդես եկան հատկապես ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1929 թ. հունվարի 18-ի՝ «Դոնբասի ածխային արդյունաբերության խնդիրների մասին» որոշումից հետո:

Նկատելով հարվածային բրիգադների դրական փորձից ԽՍՀՄ Ժողովրդական Տնտեսության Գերագույն խորհուրդը 1929 թ. հունվարի 16-ին բոլոր տնտեսական օրգաններին ուղված հրամանով պահանջում էր օժանդակել հարվածային բրիգադների կազմակերպմանը և գործունեությանը[1]: Բարձր գնահատելով նրանց դերը, ԺՏԳԽ-ի նախագահ Վ. Վ. Կույբիշևը «Պրավդա» թերթի հունվարի 17-ի համարում «Ավելի մոտ սոցիալիստական շինարարությանը» հոդվածում գրել է, որ կոմերիտմիության նախաձեռնությամբ Լենինգրադի, Ուրալի, Մոսկվայի և Դոնբասի գործարաններում ու ֆաբրիկաներում ծնված հարվածային արտադրական բրիգադները «ապացուցեցին իրենց կենսունակությունը և հանդիսանում են բանվոր երիտասարդության արտադրական խանդավառության օրինակ», որ նրանք պետք է մյուս բոլոր խմբերի բանվորների համար լավագույն օրինակ ծառայեն[2]:

1929 թ. հունվարի 20-ին «Պրավդա» թերթում առաջին անգամ հրատարակվեց Վ. Ի. Լենինի «Ինչպե՞ս կազմակերպել մրցությունը» հոդվածը: Այդ հոդվածի պրոպագանդան կարևոր նշանակություն ունեցավ մասսաների աշխատանքային ակտիվությունը կազմակերպելու և ծավալելու գործում: Մա-

---

[1] Политический и трудовой подъем рабочего класса СССР, сборник документов, стр. 127—128.

[2] Տե՛ս В. В. Куйбышев, Избранные произведения, Госполитиздат, 1958, стр. 113—116.

մուլում լույս տեսավ նաև Վ. Ի. Լենինի «Սովետական իշխանության հերթական խնդիրները» հոդվածը։

Նույն թվականի հունվարի 26-ին «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը դիմեց Սովետական Միության բոլոր կոմերիտականներին՝ համամիութենական սոցիալիստական մրցում կազմակերպելու մասին։

Այդ բոլորին հաջորդեց երիտասարդական հարվածային բրիգադների լայն կազմակերպումը, համեմատաբար տարեց բանվորների ներգրավումը հարվածային բրիգադների մեջ և արտադրական ձեռնարկությունների կողմից միմյանց սոցիալիստական մրցման հրավիրումը։

1929 թ. հունվար—մարտ ամիսների ընթացքում հարվածային բրիգադների թիվը հասնում էր. Ուրալում՝ 400-ի, Լենինգրադում՝ 300-ի և այլն։ Սոցիալիստական մրցմանը մասնակցում էին Դոնբասի ածխահանների զգալի մասը, Մերձմոսկովյան ավազանի բանվորների մեծ մասը։ Այդ ամիսներին սոցիալիստական մրցումը արտահայտվում էր հարվածային բրիգադների, ինչպես և հարվածային հերթափոխությունների, ցեխերի և նույնիսկ հարվածային գործարանների ձևով։ Հարվածայնությունը դարձավ մրցման հիմնական ձևը հնգամյակի տարիներին։ Մրցման սկզբնական ժամանակաշրջանում հիմնականում պայքարը գնում էր լավորակ արտադրանք տալու, խոտանը կրճատելու, հումքի և վառելանյութի որակը բարձրացնելու և նրանց մատակարարումը բարելավելու, աշխատանքային կարգապահությունը ամրապնդելու համար։ Հարվածային բրիգադների մրցումը աստիճանաբար վերածվեց սոցիալիստական մրցության՝ տարբեր ձեռնարկությունների, տարբեր ցեխերի միջև։ Իսկ սոցիալիստական մրցության պայմանագրերի կնքումը նոր ուժ տվեց մրցմանը, ամրապնդեց այն։

Մարտի 5-ին Լենինգրադի «Կրասնի վիբորժեց» գունավոր մետաղների մշակման գործարանի բանվորները, «Պրավդա»-ի միջոցով սոցիալիստական մրցության հրավիրեցին Սովետական Միության բոլոր ձեռնարկություններին՝ արտադրանքի

ինքնարժեքն իջեցնելու համար։ Մարտի 31-ին ՀամԼԿԵՄ Կենտրոնական Կոմիտեն դիմեց Սովետական Միության կոմերիտականներին և արտամիութենական բանվոր երիտասարդությանը՝ սոցիալիստական մրցում կազմակերպելու վերաբերյալ։ Մի քանի օր անց (ապրիլի 7-ին) Տվերում (այժմ Կալինին) ստորագրվեց սոցիալիստական մրցության պայմանագիր, որով հնգամյակի առաջին տարվա արդիւնքները կատարելու համար մրցման դուրս եկան Մոսկվայի, Տվերի և Իվանովո-Վոզնեսենսկի նահանգների 58 հազար տեքստիլագործներ, որոնք կոչ արեցին երկրի բոլոր բանվորներին՝ հետևելու իրենց օրինակին։ Դա սոցիալիստական մրցության պատմության մեջ առաջին պայմանագրերից մեկն է (առաջինը ստորագրվել է մարտի 15-ին «Կրասնի վիբորժեց» գործարանում՝ մի բրիգադի կողմից)։ Հիշյալ կոչերը և դիմումները լայն արձագանք գտան։ Սովետական Միության հազարավոր ձեռնարկություններ միմյանց հրավիրում էին մրցության, փոխանակում էին պատվիրակություններ, ստորագրում տնտեսական-քաղաքական պայմանագրեր։ Ապրիլի վերջին մրցության մեջ ընդգրկված էին երկրի գրեթե բոլոր խոշոր ձեռնարկությունները։

Աշխատավոր մասսաների արտադրական խանդավառության՝ Լենինյան կոմերիտմիության և մամուլի նախաձեռնությամբ սկսված սոցիալիստական մրցության հետագա ծավալման համար Կոմունիստական պարտիայի XVI կոնֆերենցիան դիմեց Սովետական Միության բոլոր բանվորներին և աշխատավոր գյուղացիներին՝ ապրիլի 29-ին ընդունելով պատմական որոշում սոցիալիստական մրցության մասին[1]։

Որոշման մեջ նշված է, որ մեր երկրի բանվոր դասակարգը պահպանել ու բազմապատկել է անցած տարիների հերոսական տրադիցիաները, իսկ հարվածային բրիգադները կոմունիստական շարաթօրյակների լավագույն տրադիցիա-

---

1 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», 2-րդ մաս, էջ 773—783։

ների շարունակողներն են, որ «սոցիալիստական հիմունքներով մրցություն կազմակերպելու» լենինյան իդեան ավելի մեծ չափով է գործնական մարմնավորում ստանում։

«Մրցությունն ու հնգամյակը անխզելիորեն կապված են միմյանց հետ»,— ասված է որոշման մեջ։ Կոնֆերանսը կոչ արեց Սովետական Միության բոլոր բանվորներին, քաղաքի ու գյուղի բոլոր աշխատավորներին՝ սոցիալիստական շինարարության դժվարությունները հաղթահարելու, կապիտալիստական տարրերի դեմ հարձակումը ուժեղացնելու, հնգամյա պլանը կատարելու համար կազմակերպել մրցություն, համախմբված Համկ(բ)Պ Լենինյան գրոշի ներքո, ավելի մեծ եռանդով պայքար ծավալել ՍՍՌՄ ինդուստրացման համար, սոցիալիզմի համար։

1929 թ. մայիսի 9-ին Համկ(բ)Պ Կենտկոմը որոշում ընդունեց «ֆաբրիկաների ու գործարանների սոցիալիստական մրցության մասին»[1]։ Կենտրոնական Կոմիտեն բացատրում էր, որ մրցությունը պետք է կապել սոցիալիստական ինդուստրիայի հիմնական պրակտիկ խնդիրների հետ. մրցության խնդիրները պետք է լինեն արդիականների, ինքնարժեքն իջեցնելու և արտադրողականությունը բարձրացնելու նախատեսված նորմաների կատարումն ու գերազանցումը, արտադրանքի որակի բարելավումը, աշխատանքային կարգապահության բարձրացումը, պայքարը ուշացումների և խոտան արտադրանք տալու դեմ և այլն։ Որոշման մեջ ասված է, որ անհրաժեշտ է վճռականապես պայքարել մասսայական փորձից ծնվող մրցման տարբեր ձևերը «վերևից» սահմանված սխեմաների մեջ մացնելու բյուրոկրատական փորձերի և առանց մասսաների իսկական մասնակցության՝ մրցումը պարադային մրցականչի վերածելու վտանգի դեմ։ Մրցության հաջողության հիմնական չափանիշը համարվում էր ձեռնարկությունների պրակտիկ նվաճումները։ Պարտիան կարևոր

[1] Տե՛ս «Политический и трудовой подъем рабочего класса СССР (1928—1929)», стр. 257—259.

տեղ էր հատկացնում առաջավոր ձեռնարկությունները, ցեխերը, հերթափոխությունները և առանձին բանվորներին շահագրգռելու նպատակով դրամով պարգևատրելուն և խրախուսական այլ միջոցներին (կարմիր տախտակ, պատվոգիր, փոխանցիկ դրոշ և այլն)։

Կոմունիստական պարտիայի կոչը սոցիալիստական մրցության և հարվածայնության ծավալմանը նոր զարկ տվեց։ Այժմ հատկապես ուշադրություն էր դարձվում ձեռնարկությունների ներսում՝ ցեխերի, բրիգադների և առանձին բանվորների միջև ծավալվող մրցության վրա։ Միաժամանակ աճում և զարգանում էին հարվածային բրիգադները։

Մեծ թափ ստացավ աշխատավոր մասսաների արտադրական վերելքը։ Դա, իրոք, մասսայական համաժողովրդական սոցիալիստական մրցության սկիզբն էր Սովետական Միությունում։

Այսպիսով, առաջին հնգամյակի հետ միասին սկիզբ առավ պլանը կենսագործող աշխատավորների սոցիալիստական մրցությունը։

Նա պայմանավորվեց և նախապատրաստվեց բանվոր դասակարգի ստեղծագործական ակտիվության վերելքով և Կոմունիստական պարտիայի բազմակողմանի դաստիարակչական աշխատանքով։

Սոցիալիստական մրցությունը սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման հզոր շարժիչ ուժն է։ Նա հատուկ է միայն աշխատավորների համագործակցության և փոխադարձ օգնության վրա հիմնված նոր տիպի արտադրական հարաբերություններին։

Վ. Ի. Լենինը սովորեցնում է, որ շահագործողների համար հարկադրաբար աշխատանքը վերացնելուց հետո սոցիալիզմը առաջին անգամ հնարավորություն է ստեղծում «իր համար աշխատելու», աշխատանք, որը ազատ է շահագործումից և հենվում է նորագույն տեխնիկայի ու կուլտուրայի նվաճումների վրա[1], որ միայն կապիտալիզմը և նրան հա-

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 495։

ատի կոնկուրենցիան ոչնչացնելուց հետո է հնարավոր կազմակերպել մրցություն «ոչ թե գաղանային, այլ մարդկային ձևերով»[1]։

«Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը, այլ, ընդհակառակը,—գրել է Վ. Ի. Լենինը մի այլ տեղում,— առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[2]։

Սոցիալիստական մրցությունը սոցիալիզմի կառուցման կոմունիստական մեթոդն է։ *Այս ձևակերպման մեջ արտահայտված է սոցիալիստական մրցության ամենախոր բովանդակությունը և նրա նշանակությունը։*

Սոցիալիստական մրցության բնորոշ գիծը արտադրության առաջավորների ու նորարարների ստեղծագործական նախաձեռնությունն է՝ հասարակական արտադրության առավելությունները, նրա ընդերքում թաքնված և դեռևս չբացահայտված ռեզերվներն ու միջոցները ավելի լրիվ օգտագործելու համար։ Միայն արտադրության սոցիալիստական եղանակի պայմաններում է հնարավոր լայնորեն և արագ տարածել առաջավոր փորձը, այն դարձնել բոլորի սեփականությունը։ Խոսելով սոցիալիստական մրցության կազմակերպման մասին, Վ. Ի. Լենինը գրել է, որ պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումից և էքսպրոպրիատորներին էքսպրոպրիացնելուց

---

1 *Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 242։*

2 *Վ. Ի. Լենին, Երկեր. հատ. 26, էջ 493—494։*

հետո «օրինակի ուժն առաջին անգամն է, որ հնարավորություն է տանում իր մասսայական ազդեցությունը ցույց տալու»[1]։

1918 թ. մարտ—ապրիլին գրած «Սովետական իշխանության հերթական խնդիրները» հոդվածում Վ. Ի. Լենինը մրցությունը համարել է նոր, սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում աշխատավորներին ներգրավելու հզոր միջոց, որպես Սովետական իշխանության հերթական խնդիրներից մեկը։

Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, Կոմունիստական պարտիան քաղաքական ու գաղափարակշռական հատուկ և երկարատև աշխատանքով կազմակերպեց աշխատավոր մասսաների աշխատանքային նախաձեռնությունն ու խանդավառությունը։

Այդ խանդավառության արտահայտության սկզբնական ձևերը հանդիսացան կոմունիստական շաբաթօրյակները, որը Վ. Ի. Լենինը գնահատեց որպես մեծ նախաձեռնություն, որպես կոմունիզմի փաստական սկիզբ։ Իսկ նրա հետագա ձևը հանդիսացավ սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունը՝ մասսաների գիտակցական ու կամավոր հզոր շարժումը։

* * *

Հայաստանում սոցիալիստական մրցումը սկսեց տարածվել համեմատաբար ավելի ուշ՝ 1929 թ. ապրիլ-մայիս ամիսներից։

Լենինգրադի «Կրասնի վիբորժեց» գործարանի մրցահրավերին ռեսպուբլիկայում առաջինը արձագանքեց Երևանի կարբիդի գործարանի կոլեկտիվը։ Ապրիլի 3-ին «Խորհրդային Հայաստան»-ում տպագրվեց կարբիդի գործարանի բան-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 312։

վորների հանդիսավոր միտինգի հեռագիրը, որը ուղարկվել էր «Պրավդա» թերթին։ Հեռագրում ասված է. «Դեռ մարտի 14-ին մենք որոշել էինք ընդունել «Կրասնի վիբորժեցի» մրցահրավերը ինքնարժեքի իջեցման մասին։

...Մենք ամուր սեղմում ենք «Կրասնի վիբորժեցի» և Կամենսկի գործարանի (Թղթի գործարան Տվերի նահանգում— Վ. Ղ.) բանվորական կոլեկտիվների ձեռքը և ընդունում ենք նրանց մրցահրավերը՝ մայիսի 1-ին (պետք է լինի մինչև մայիսի 1-ը— Վ. Ղ.) իջեցնել ինքնարժեքը 7 տոկոսով։ Եվ այդ մենք կանենք՝ ուշ ժամվա փոխարեն աշխատելով յոթ ժամ»։ Իսկ «Կրասնի վիբորժեցի» կոլեկտիվին կարբիդագործները գրեցին, որ իրենք 1928/29 թ. կատուցել են կիր արտադրելու երկու հնոց, որի արդյունքը այն է եղել, որ առաջին եռամսյակում կարբիդի ինքնարժեքը իջել է 27,0 տոկոսով, իսկ երկրորդում՝ 28,1 տոկոսով։ «Մենք ամեն ջանք կգործադրենք, որպեսզի կարողանանք հավելումով կատարել կառավարության մարտական առաջադրանքը ինքնարժեքի իջեցման մասին»[1]։

Ապրիլի 24—25-ը Երևանում տեղի ունեցավ մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների ներկայացուցիչների կոնֆերանսը՝ նվիրված սոցիալիստական մրցության ծավալման հարցին։ Կոնֆերանսում զեկուցեցին և ելույթ ունեցան Ժողտնտխորհի, ձեթ-օճառի, կաշվի, կարբիդի և այլ գործարանների ներկայացուցիչները և ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը, որոնք խոսեցին 1928/29 թ. առաջին կիսամյակի պլանների կատարման ընթացքի և սոցմրցման նշանակության մասին։ Կոնֆերանսում Երևանի վեց արդյունաբերական ձեռնարկությունների միջև սոցիալիստական մրցության պայմանագիր՝ մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 12-րդ տարեդարձը, այսինքն վեց ամիս ժամկետով։ Դա Սովետական Հայաստանում սոցիալիստա-

---

1 «Խորհրդային Հայաստան», 13 ապրիլի 1929։

կան մրցության առաջին պայմանագիրն էր։ Պայմանագրում ասվում էր, որ հետևելով Մոսկվայի, Տվերի, Իվանովո-Վոզնեսենսկի, Բաքվի և երկրի արդյունաբերական այլ շրջանների բանվորների օրինակին, այն ստորագրող գործարանների կոլեկտիվները պարտավորվում են արտադրանքի ինքնարժեքն իջեցնել յոթ տոկոսով, կատարել արտադրողականության բարձրացման առաջադրանքը, վերջ տալ ուշացումներին, բարելավել արտադրանքի որակը և այլն։

Կոնֆերանսը սոցիալիստական մրցման հրավիրեց Հայաստանի մյուս արտադրական ձեռնարկություններին և պատվիրակություն ուղարկեց Լենինական՝ պայմանագիր ստորագրելու համար։ Պատվիրակությունը իր հետ տարավ կոնֆերանսի կողմից Լենինականի բանվորներին ուղղված հետևյալ նամակը.

«Սիրելի ընկերներ. մեր կոնֆերանսը իր պայմանագրով ուղղությունն երդում է տալիս չնահանջել մեր փորձված զենքավոր բոլշևիկյան պարտիայի հիմնական գծից։ Երդվում ենք հաղթահարել տնտեսական ճակատի բոլոր դժվարությունները։ Միևնույն ժամանակ առաջարկում ենք ձեզ... կնքել նման պայմանագիր մեզ հետ»[1]։

Ընդունելով մրցահրավերը և պատասխանելով երևանցիներին, տեքստիլ կոմբինատի բանվորները պարտավորվում էին խստորեն պայքարել գործալիքների և աշխատանքից ուշացողների դեմ, ամրապնդել աշխատանքային կարգապահությունը։

Ապրիլի վերջերին Երևանում կայացավ քաղաքի բանվոր երիտասարդության կոնֆերանս, որը որոշեց կազմակերպել նախաձեռնող խմբեր՝ արտադրության թերությունները պարզելու և դրանք վերացնելու, արտադրողականությունը բարձրացնելու՝ միջոցառումներ մշակելու համար, և կոչ արեց կազմակերպել մրցություն գործարանների և ցեխերի միջև[2]։

---

1 «Խորհրդային Հայաստան», 30 ապրիլի 1929։

2 «Ավանգարդ», 7 մայիսի 1929։

Մայիսին արդեն մրցության մեջ էին գտնվում Հայաստանի բոլոր ձեռնարկությունները, որոնք այն ժամանակ դեռևս շատ չէին։ Նրանք միմյանց հետ մրցելուց բացի, մրցում էին եղբայրական Ադրբեջանի և Վրաստանի գործարանների կոլեկտիվների հետ։

Հունիսի 5-ին Զորագէս ժամանեց Սովետական Վրաստանի Ռիոնդէսի կառուցողների պատվիրակությունը։ Անդրկովկասի ամենախոշոր հիդրոէլեկտրակայանների շինարարների ներկայացուցիչները ստորագրեցին սոցիալիստական մրցության պայմանագիր, որտեղ ասված է. «Մենք՝ Ռիոնդէսի և Զորագէսի բանվորներս ու ծառայողներս սոցիալիստական մրցության մեջ ենք մտնում՝ ապացուցելու համար, թե մեզանից ով է կառուցում շուտ, էժան և լավ»[1]։

Հայրամբակի գործարանների բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովը հեռագրով մրցման հրավիրեց Գյանջայի (այժմ Կիրովաբադ) ձեթ-օճառի գործարանի կոլեկտիվին՝ աշխատանքի արտադրողականությունը ավելի բարձրացնելու և արտադրանքի ինքնարժեքը ավելի իջեցնելու պարտավորությամբ։ Մրցում էին Երևանի և Բաքվի Ջերժինսկու անվան մեխանիկական գործարանները։

Մրցման հրավիրելով Բաքվի և Խաշուրիի կայարանների դեպոներին, Լենինականի երկաթուղայինները պարտավորվեցին ավելի լավ հիմքերի վրա դնել տրանսպորտի երթևեկությունը, խնայել վառելանյութը, էժանացնել գծի և շոգեքարշերի նորոգման ծախսերը, նորոգումը կատարել որակով և սեղմ ժամկետում։

Անդրկովկասյան ֆեդերացիայի ռեսպուբլիկաների միջև սոցիալիստական մրցությունը դարձավ արագիցիա։ Մրցումը է՛լ ավելի մոտեցրեց եղբայրական ժողովուրդներին, ամրապնդեց նրանց բարեկամությունը։

Մի քիչ ավելի ուշ մրցման մեջ ընդգրկվեցին Ալավերդու և Ղափանի պղնձագործները, որոնք հուլիսի 1-ից ունեին պայմանագրային պարտավորություններ։ Բացի այդ, Ալավեր-

[1] «Խորհրդային Հայաստան», 12 հունիսի 1929։

գում ստորագրված էր երեք միջնեխային և տասը միջբրիգադային պայմանագիր, իսկ Շամլուղի հանքերում մայիսի 1-ից գործում էին տասը հարվածային բրիգադ, որոնց 107 անդամներից հարյուրը կոմերիտականներ էին։ Առաջավոր էին Արիսամի Մահմուդովի, Մաղաք Փաշախչյանի, Մահալամ Աբասաղլու և մյուսների բրիգադները, որոնք մրցման առաջին իսկ օրից զգալի չափով ավելացրին հանքաքարի հանույթը։ Միայն Արիսամի Մահմուդովի բրիգադը, ըստ սոցմրցման պայմանագրերի կատարման արդյունքների ստուգող բրիգադների հաշվեսավորության[1], հանույթը ավելացրեց մայիսին՝ 26,5, հունիսին՝ 28,5 տոկոսով։ Շամլուղի հանքերում հանքաքարի արդյունահանման միջին աճը կազմեց. մայիսին՝ 18,0, հունիսին՝ 29,0, հուլիսին՝ 15,2, օգոստոսին՝ 11,0 և սեպտեմբերին՝ 30,0 տոկոս, իսկ ամբողջ տարվա պլանը գերակատարվեց 18,5 տոկոսով։

Ինքնարժեքն իջեցնելու գործում խոշոր հաջողություններ էին հասել Շամլուղի հորատողները։ Այստեղ մեկ տոննա հանքի ինքնարժեքը նախատեսված նորմայից ցածր էր. ապրիլին՝ 21,7, մայիսին՝ 24,0, հունիսին՝ 26,3, հուլիսին՝ 33,0 և օգոստոսին՝ 19,0 տոկոսով։

Լենինյան հանքերում աշխատող տասը հարվածային բրիգադներում (Սամարչևի, Վախանելովի, Իվանովի, Ավետիք Մաղոյանի, Աֆանասի Պոդոլի և մյուսների) մեկ բանվորի աշխատանքի արտադրողականությունը հունիսին՝ նախորդ ամսվա համեմատությամբ ավելացել էր 11,7-ից մինչև 21,0 տոկոսով։ «Հարկավոր է ընդգծել,— ասված է վերոհիշյալ հաշվեսավորության մեջ,— որ այդ արտելների աշխատանքի էֆեկտիվությունը աղդեց ամբողջ հանքերում արդիականացման կատարման վրա»։

Լենինյան հանքերում ստորգետնյա և հետախուզող բանվորի (մեխանիկական հորատում) ամսական աշխատանքի արտադրողականությունը նորմայի համեմատությամբ

---

[1] Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 187, ց. 2, գ. 109, թ. 3—16։

կազմում էր. մրցումից առաջ՝ 102,2, մրցումից հետո՝ 119,0—120,0 տոկոս, իսկ հանքում աշխատող բանվորինը՝ համապատասխանաբար 109,4 և 125,8 տոկոս[1]։

Շամլուղում կոմերիտականների ջանքերով վերականգնվեց և գործարկվեց «Մայիսի 1-ի» անվան հանքահորը, որը դարձավ առաջավորներից մեկը։ Կարմ. Մարքսի անվան գործարանում հարվածային բրիգադներից մեկի երկու հերթափոխությունները Թորոս Ալիխանյանի և Գարեգին Նասիրյանի ջանքերով շլամի փոխադրումը 30 վագոնիկից հասցրեցին 50-ի։ Նրանց օրինակով մյուս հերթափոխությունները սկսեցին փոխադրել 50—55 վագոնիկ շլամ[2]։

Ալավերդու կոմբինատում մեկ բանվորի աշխատանքի միջին ամսական արտադրողականությունը, ըստ Հայկական ԽՍՀ Պետպլանի տվյալների, բարձրացավ 36,4 տոկոսով[3], դպալի չափով աճեց նաև համախառն արտադրանքը։

Աշխատանքի արտադրողականության բարձրացմանը նպաստեց գործարքային սիստեմի հաստատումը, որը չէր կիրառվում մինչ այդ և սկսեց իրագործվել սոցիալիստական մրցության տարածման հետ միասին։ Մրցման հետևանքով ավելացավ աշխատավարձը, որը իր հերթին շահագրգռում էր ավելի լավ աշխատել։

Զանգեզուրի կոմբինատում մրցությունը ծավալվեց համեմատաբար ավելի ուշ և թույլ էր, վատ կազմակերպված։ Այնուամենայնիվ մրցումը դրական արդյունքներ տվեց։ Միայն սեպտեմբերին պղնձի ձուլման ամսական աճը կազմեց 35,0 տոկոս, իսկ ձուլման համար կրաքարի խնայողությունը՝ 6,0 տոկոս[4]։

Սոցիալիստական մրցության իրենց պարտավորությունները պատվով կատարեցին Երևանի կարբիդագործները։

---

1 Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ ՊԿԱ, ֆ. 187, ց. 2, գ. 109, թ. 3—16։

2 «Բանվոր» (Լենինական), 8 դեկտեմբերի 1929։

3 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 72, թ. 29։

4 «Կարմիր դաշտար» (օրգան ՀԿ(բ)Կ Զանգեզուրի գավկոմի և գավգործկոմի), 19 հոկտեմբերի 1929։

Մինչև սոցիալիստական մրցումը գործարանի կրի ցեխում աշխատում էին 4—6 բանվոր և օրական մատակարարում էին վեց վագոնիկ կիր, իսկ մրցումից հետո աշխատում էին երեք բանվոր, մատակարարելով ինը վագոնիկ կիր։ Գործարանի առաջավոր բանվորներից էին Ա. Գևորգյանը, Մ. Ուլոյանը, Մ. Միրաբյանը, Ա. Մկրտչյանը և ուրիշներ, որոնցից մի քանիսի լուսանկարը տպագրեց «Խորհրդային Հայաստան» թերթը։

Պայմանագրի ստուգումը ցույց տվեց հետևյալ արդյունքները. մեկ տոննա կարբիդի ինքնարժեքը նախորդ տարվա համեմատությամբ իջեցվել էր 31,3 տոկոսով, աշխատանքի արտադրողականությունը բարձրացել էր 26,6 տոկոսով, էլեկտրաէներգիայի խնայողությունը կազմում էր 16,7, իսկ կոքսինը և կրինը՝ 12,4 և 30,3 տոկոս։ Կարբիդի արտադրությունը ավելացել էր մոտ կիսով չափ, իսկ հնգամյակի առաջին տարվա պլանը գերակատարվել էր[1]։

Մրցման մեջ մտնելուց անմիջապես հետո Լենինականի տեքստիլ կոմբինատում կազմակերպվեցին կոմերիտական հարվածային երկու ցեխ և մի քանի բրիգադ։

Մանարան գործարանի հարվածային ցեխը մրցության առաջին ամսում՝ մայիսին, արտադրանքը ավելացրեց 17,0, հունիսին՝ 32,0 տոկոսով։ Գործվածքային գործարանում առաջ մի բանվոր սպասարկում էր երկու մեքենայի, իսկ մրցումը սկսելուց հետո՝ երեք։ Նույն գործարանի 162 բանվոր 108 մեքենայով ապրիլ ամսում արտադրել են 230 հազար մետր կտոր, մայիսին՝ 243 հազար, իսկ հունիսին 108 բանվոր նույնքան մեքենայով արտադրությունը հասցրեցին 289 հազար մետրի, որը նշանակում է աշխատանքի արտադրողականության զգալի բարձրացում։

Սոցիալիստական մրցումը օգնեց ավելացնելու գործող իլիկների թիվը կոմբինատում։ Տեղադրված 40 հազար իլիկից 1928/29 թ. աշխատում էր միայն 17.725 իլիկ, իսկ 1929/30 թ.

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 72, թ. 8, և «Խորհրդային Հայաստան», 30 հոկտեմբերի 1929։

առաջին եռամսյակում աշխատող բլիկների թիվը հասավ 27 հազարի։

Ամբողջ կոմբինատի համախառն արտադրանքը ավելացավ մոտավորապես կրկնակի չափով։ Մեկ բանվորի ամսական աշխատանքի արտադրողականությունը աճեց. գործվածքային գործարանում՝ 23,3, մանարանում՝ 42,0 և տրիկոտաժի գործարանում՝ 59,0 տոկոսով։ Մանվածքի ինքնարժեքը իջավ 12,0 տոկոսով։

Հիշյալ հաջողությունների կողքին Լենինականի տեքստիլ կոմբինատում գոյություն ունեին լուրջ թերություններ, ինչպես և դժվարություններ. անբավարար էին օգտագործվում սարքավորումները, թույլ էր աշխատանքային կարգապահությունը, չկային որակյալ կադրեր, բավականին շատ էր խոտան արտադրանքը, էլեկտրական էներգիան մատակարարվում էր մեծ ընդհատումներով և այլն։ Այդ բոլորի հետևանքով կոմբինատը զգալի չափով թերակատարեց հնգամյակի առաջին տարվա պլանը՝ այն կատարելով ընդամենը 59,9 տոկոսով, որը զգալի չափով աղդեց ռեսպուբլիկայի արդյունաբերության 1928/29 թ. պլանի կատարման վրա։

ՀԿ(բ)Պ Կենտկոմը 1929 թ. հոկտեմբերի 30-ին նամակով դիմեց Լենինականի և տեքստիլ կոմբինատի բոլոր պարտիականներին ու բանվորներին, կոչ անելով նրանց՝ վերացնել գոյություն ունեցող թերությունները, ապահովել կոմբինատի պլանների կատարումը։ Այդ կապակցությամբ հատուկ որոշում կայացրեց ԱԽՄՀ Ժողկոմխորհը։ Կոմբինատի պարտիական, կոմերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունների քաղաքական և դաստիարակչական աշխատանքի շնորհիվ հնարավոր դարձավ ստիպանարար բարելավել կոմբինատի դրությունը։ 1929 թ. հոկտեմբեր—դեկտեմբեր ամիսների պլանը կատարվեց 96,2, իսկ 1930 թ. հունվարի պլանը՝ 105,6 տոկոսով[1]։ Դեկտեմբերին 74 հարվածայիններ ստացան զանազան խրախուսական պարգևներ։

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, ց. 3, գ. 126, թ. 1—11 (Զեկուցում Լենինականի տեքստիլ կոմբինատի մասին) և Հայկական ՍՍՌ-

Ակնառու էին Լենինականի երկաթուղայինների հաջողությունները. դեպոյում կազմակերպվել էր կոմերիտական հարվածային բրիգադ, որը յուրաքանչյուր շոգեմեքենայի միջին վերանորոգումը կրճատեց երեք օրով և խնայեց 149 ռուբլի՝ 1145 ռուբլու փոխարեն ծախսելով 996 ռուբլի։ Իսկ յուրաքանչյուր վագոնի վերանորոգման համար նախատեսված 193 ռուբլու փոխարեն ծախսվում էր 147 ռուբլի։ Մինչև նոյեմբեր ամիսը վերանորոգումից խնայվել էր 28 հազար ռուբլի, իսկ վառելանյութի խնայողությունը երկու ամսվա ընթացքում կազմեց մոտ 40 հազար ռուբլի[1]։ Տնտեսական ցուցանիշները բարելավելու և առաջադրանքները դերակատարելու համար Լենինականի դեպոյի կոլեկտիվը արժանացավ Անդրկովկասի երկաթուղային վարչության առաջին կարգի մրցանակին[2]։

Մրցության հետևանքով բարելավվեցին աշխատանքները Երևանի կաշվի գործարաններում, «Արարատ» տրեստում, Անի-պեմզայի հանքերում և մնացած օբյեկտներում։ Երևանի № 1 կաշվի գործարանում ապրիլին մեկ բանվորի 15 օրվա աշխատավարձը 83 ռ. 16 կ. էր, իսկ մրցման մեջ մտնելուց հետո աշխատանքային օրը ռացիոնալ օգտագործելու, ինտենսիվ աշխատանքի հետևանքով մայիսին 15 օրվա աշխատավարձը կազմեց 132 ռ. 98 կ.[3]։

Մրցումը համեմատաբար թույլ էր սոցիալիստական գյուղատնտեսության բանվորների մեջ։ Այնուամենայնիվ սովխոզների աշխատողները արձագանքեցին քաղաքի բան-

---

ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 4, գ. 911, թ. 141—142 և 150—152 (Զեկուցագրեր Լենինականի տեքստիլ կոմբինատում սոցմրցման ընթացքի մասին)։

1 «Բանվոր», 30 հունիսի և «Խորհրդային Հայաստան», 24 նոյեմբերի 1929։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 28 դեկտեմբերի 1929։

3 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 4, գ. 211, թ. 126—127 (ՀԱՄԽ-ի զեկուցումը սոցիալիստական մրցության աշխատանքների ընթացքի մասին)։

վորների հայրենասիրական նախաձեռնությանը։ Նոր կազմակերպված Լենինականի սովխոզի կոլեկտիվը հուլիսի 8-ին ստորագրման պայմանագիր ստորագրեց № 3 այգի-խաղողագործական սովխոզի կոլեկտիվի հետ։ Կարճ ժամանակամիջոցում Լենինականի սովխոզը ձեռք բերեց 11 տրակտոր և աշնանը հերկի տարածությունը հասցրեց մի քանի հարյուր հեկտարի։ Այսանց յուրաքանչյուր տրակտորիստ 22-ի դիմաց մեկ ամսում հերկեց մինչև 120 հեկտար տարածություն, լրացուցիչ ամեն մի հեկտար վարի համար ստանալով 2 ռ. 50 կոպեկ[1]։

1929 թ. ընթացքում № 3 սովխոզը տնկեց 30 հեկտար խաղողի և 6 հեկտար պտղատու այգի, մշակեց 40 հեկտար դեռևս ոչ բերքատու խաղողի այգի, հաջորդ տարվա համար կատարվեց զգալի տարածությամբ պլանտաժ (հողի հիմնաշրջում) և այլն[2]։

Բանվոր դասակարգի ստեղծագործական նախաձեռնությունն իր արտահայտությունը գտավ նաև ռեսպուբլիկայում սկսված նոր արդյունաբերական շինարարության մեջ։ Հնգամյակի առաջին տարում դեռևս քիչ էր խոշոր կառույցների թիվը։ Այդպիսիներից էր Զորագեսը, որի շինարարությունը սկսվել էր 1927 թ., հայտնի շինարար-մասնագետ, Հայաստանի Ժողտնտխորհի նախագահի տեղակալ Իոսիֆ Տեր-Աստվածատրյանի ղեկավարությամբ։ Զորագեսը շատ բարդ և օրիգինալ կառուցում էր։ Իր տեխնիկական բարդ կառուցվածքով և բարձրաճնշումային հզորությամբ նա առաջինն էր Սովետական Միությունում, իսկ հիդրոկայանի ամբարտակի փականը, որը ձգվում էր գետի մի ափից մյուս ափը, այն ժամանակ ամենախոշորն էր ամբողջ աշխարհում։ Բարդ և վիթխարի էր կայանի ճնշիչ թունելի շինարարությունը, որի երկարությունը հասնում էր մոտ երկու և կես կիլոմետրի։ «Զորահիդրոկայանը, առանց որևէ փորձի ու նախա-

---

1 «Խորհրդային Հայաստան», 11 հոկտեմբերի 1929։

2 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 150, թ. 4։

տիպի, առանց լավ պատրաստված աշխատող կադրերի, շատ սահմանափակ նախահաշվով և միանգամայն դժվար կենցաղային ու բնական պայմաններում, միանգամից դուրս է գալիս համաշխարհային տեխնիկայի լայն ճանապարհը, գնելով և լուծելով ամենաայժմեական և ամենադժվար տեխնիկական հարցերից մեկը»[1],—գրել է նշանավոր գրող Մարիետա Շահինյանը։

1929 թ. հաղթահարվեցին կառույցի ամենաբարդ մասը կազմող թունելի աշխատանքները։ Թունելի փորումը սկսվել էր 1928 թ. կեսերից և հիմնականում ավարտվեց 1929 թ. վերջերին։ Հոկտեմբերի 29-ին մեծ ցնծություն էր Զորագեսում։ Շինարարները տոնում էին բնության դեմ տարած իրենց հաղթանակը, նրանք բացել էին թունելի՝ տեղանքի ամենակարճ և պատասխանատու մասը 538 մետր երկարությամբ։ Տոնակատարությանը ներկա էին Անդրկովկասյան ֆեդերացիայի և Հայաստանի կառավարությունների նախագահները։ Այդ թվականին կատարվեց 60 հազար խորանարդ մետր հողային և մեծ չափով բետոնապատման աշխատանքներ։ Թունելի աշխատանքները ղեկավարում էին տեխնիկներ Դանիել Գարբուշկինը և Ա. Բախտամյանը։

Զորագեսի կառուցումը համաժողովրդական գործ էր։ Նրա պատվերները կատարում էին Մոսկվայի, Լենինգրադի և Խարկովի գործարանները։ Լոռու գեղեցիկ բնության գրկում վեր էր խոյանում Հայաստանի ինդուստրիայի խոշոր առաջնեկը, որը աշխատեցնելու էր բազմաթիվ գործարաններ և լույս էր տալու շրջակա քաղաքներին ու գյուղերին։

1929 թ. նախապատրաստական աշխատանքներ էին տարվում Սևան—Հրազդան կասկադի ամենախոշոր կայաններից մեկի՝ Քանաքեռգեսի կառուցումը սկսելու համար։ Նույն թվականին հիմնադրվեց Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական) քիմիական գործարանը, որը հետագայում կոչվեց

---

1 Մարիետա Շահինյան, Զորահիդրոկայանի դպրոցը («Նոր ուղի», № 4—5, 1930, էջ 135)։

Ալեքսանդր Մյասնիկյանի անունով։ Հաջորդ տարում սկսվեց ծծմբաթթվի և պղնձարջասպի գործարանների շինարարությունը Ալավերդում և ֆլոտացիոն գործարանինը՝ Ղափանում։

Արագորեն կառուցվեցին Լենինական—Արթիկ և Անի կայարանից պեմզայի հանքերը տանող երկաթուղագծերը։ Լենինական—Արթիկ երկաթուղագիծը հետագայում հասցվեց մինչև Մահմուդջուղ (այժմ Պեմզաշեն)։ Երկու գծերն էլ կառուցվեցին մեկ տարվանից պակաս ժամանակամիջոցում, նրանց բացումը կայացավ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 9-րդ տարեդարձի օրը՝ 1929 թ. նոյեմբերի 29-ին։ Այդ երկաթուղագծերի կառուցումը հնարավորություն տվեց ծավալել Հայաստանի բնական հարուստ շինանյութերի շահագործումը։ Շարք մտան հնգամյակի նորակառույցներ Երևանի մետաքսի մանարանը, Մեղրիի էլեկտրակայանը, Սևանի ձկնաստուգարանը, կրի և գաջի գործարանը Լենինականում։ 1929 թ. սկսեց արտադրանք տալ Երևանի Զերժինսկու անվան նորակառույց մեխանիկական գործարանը, որը, աստիճանաբար ընդարձակվելով, հետագայում դարձավ անպարկեշտիկայի մեքենաշինական արդյունաբերության խոշոր օբյեկտներից մեկը։

Ընդարձակվում էր Լենինականի տեքստիլ ֆաբրիկան։ Կառուցվեց գործվածքային գործարանի նոր շենքը։

Շինարարության լայն ծավալի մասին պատկերացում է տալիս նաև նրա մեջ ընդգրկված բանվորների թիվը, որը մոտ էր արդյունաբերության և տրանսպորտի մեջ աշխատող բանվորների ու ծառայողների ընդհանուր թվին. այն նախորդ տարվա համեմատությամբ աճել էր 45,0 տոկոսով, իսկ 1927 թ. համեմատությամբ՝ ավելի քան երկու անգամ[1]։

Նոր ֆաբրիկաների, գործարանների, երկաթուղիների կառուցումը դարձել էր բանվոր դասակարգի հարազատ գործը, նա պայքարում էր արագորեն իրականացնելու երկրի

---

[1] ՀՍԽՀ աշխատանքը և արդյունաբերությունը 1926/27—1928/29 թթ., էջ 113։

սոցիալիստական ինդուստրացման ծրագիրը։ Բանվորները որոնում էին նորանոր ձևեր ու միջոցներ, խնայողության նոր աղբյուրներ և ռեսուրսներ՝ արտադրությունը կատարելագործելու, արտադրողականությունը բարձրացնելու, ինդուստրացումը արագացնելու համար։ Այդպիսի մեծ միջոցառումներից էր Մոսկվայի և Լենինգրադի բանվորների նախաձեռնած «Ինդուստրացման օրը», որը ջերմ հավանության արժանացավ Սովետական Միության ամբողջ բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների կողմից։ Օգոստոսի 6-ը հայտարարվեց «Ինդուստրացման օր». այդ օրվա ամբողջ աշխատավարձը հատկացվեց արդյունաբերության զարգացմանը։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորները որոշեցին «Ինդուստրացման օր» հայտարարել սեպտեմբերի 20-ը՝ ի պատիվ Բաքվի հերոսական կոմունարների հիշատակի։ «Ինդուստրացման օրը, — ասված է Անդրկովկասի աշխատավորներին ուղղած ՀամԿ(բ)Պ Անդրկովկասի Երկրային Կոմիտեի դիմումում,— հանդիսանում է սոցիալիստական մրցության և բանվոր դասակարգի պատրաստակամության զորատեսք՝ կրելու հնգամյա պլանի կատարման բոլոր ծանրությունները։ Այդ օրը պետք է լինի ԱԽՍՀ բոլոր պրոլետարների և աշխատավորների ստեղծագործական ուժի և էնտուզիազմի մոբիլիզացիայի օր՝ պայքարելու սոցիալիզմի ճանապարհին գտնվող դժվարությունների դեմ»[1]։

«Արարատ», ձեթ-օճառի, կարբիդի և այլ գործարաններում սեպտեմբերի 20-ին աշխատանքի էին եկել նաև արձակուրդի մեջ գտնվողները։ Սոցիալիստական ինդուստրացման օգտին էին աշխատում Պետական համալսարանի ուսանողները, մի շարք գյուղերի կոլտնտեսականներ և բազմաթիվ այլ կոլեկտիվներ։ Այդ օրվա աշխատանքային խանդավառության մասին մամուլը հաղորդել է. «182 բանվորներ, որոնց թվում արձակուրդավորները և հանգստացողները, ապա 24 հոգի

---

1 «Խորհրդային Հայաստան», 19 սեպտեմբերի 1929։

ընտանիքի անդամներ, գլխավորապես կանայք, աշխատում են մեծ լարվածությամբ։ Այսօր աշխատանքները սովորականից ավելի արագ են կատարվում։ Նրանք վեց ժամում կատարել են ինը ժամվա գործ» (ձեթ-օճառի գործարան)։ «Արարատի» բոլոր բանվորները այսօր սովորականից կես ժամ առաջ են լծվել աշխատանքի»։ «Պետք է տեսնել, թե ինչպես են աշխատում Երևանի արտելներում համախմբված տնայնագործներն ինդուստրացման ֆոնդի համար»։ «Զավիդանց հետաքրքրական է Անտառտրեստի 1-ին գործարանում։ Դրսից եկել են գործարանում աշխատելու 62 հոգի, որոնցից 29-ը իրենց շեֆ գյուղի գյուղացիներ։ Երբ կոլխոզնիկին հարց ենք տալիս՝ ինչո՞ւ ես եկել, [նա պատասխանում է]. Մեր երկիրն ուժեղացնենք, մեր գործարանները հարստացնենք, որ նրանք էլ մեզ մեքենաներ տան...» և այլն[1]։ Մեծ ոգևորությամբ աշխատեցին Լենինականի տեքստիլ կոմբինատի երկու հազարից ավելի բանվորներն ու ծառայողները և դեպոյի բանվորները, Ղարաքիլիսայի (Կիրովականի) երկաթուղային կայարանի 300 աշխատակիցները։ Ալավերդու Լենինյան հանքերի և Կարլ Մարքսի անվան գործարանի բանվորները 80.000 ռ. բաժանորդագրվեցին ինդուստրացման երրորդ փոխառությանը։ Վաղարշապատի շրջանի բատրակների կոլեկտիվը 900 ռ. նվիրեց ինդուստրացման ֆոնդին[2]։

Սոցիալիստական ինդուստրիայի ստեղծմանը նվիրած գումարը հասնում էր մի քանի հարյուր հազար ռուբլու։

«Սովետական Միության բանվոր դասակարգը,—գրել է այդ կարևոր նախաձեռնության նշանակության մասին ԺՏԳԽ-ի նախագահ Վ. Վ. Կույբիշևը,—որը այսօր երկրի ինդուստրացման գործին կամավոր կերպով հատկացնում է մի քանի միլիոն ժամ, դրանով ապացուցում է, որ չկա այնպիսի դժվարություն, որը նա չկարողանա հաղթահարել»[3]։

1 «Խորհրդային Հայաստան», 21 սեպտեմբերի 1929։

2 «Խորհրդային Հայաստան», 22 սեպտեմբերի 1929։

3 В. В. Куйбышев, Избранные произведения, Госполитиздат, 1953, стр. 119.

Ինդուստրացմանը ցույց տված օգնությունը չի սահմանափակվում վերոհիշյալ մեկ օրվա աշխատավարձի նվիրատվությամբ։

Լենինյան կոմերիտմիությունը կազմակերպեց մի շարք շաբաթօրյակներ՝ այս կամ այն ձեռնարկությանը օգնելու համար։ 1929 թ. փետրվարին կոմերիտմիության Փամբակ-Լոռու գավկոմը հայտնել է ՀԿԿՄ Կենտկոմին, որ գավառում շաբաթօրյակներին մասնակցել են 1459 երիտասարդներ, այդ թվում 1216 կոմերիտականներ. նրանք վերանորոգել են կամուրջներն ու ճանապարհները, աշխատել են Ալավերդում, Զորագեղի թունելի շինարարությունում և այլն։ Շաբաթօրյակներից հավաքված գումարը կազմում էր մոտ 1400 ռուբլի։ Կոմերիտական մեծ շաբաթօրյակ կազմակերպվեց նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի 9-րդ տարեդարձի օրը։ Հարյուրավոր կոմերիտականներ Երևանի երկաթուղային կայարանում մի քանի տասնյակ վագոն բեռ բեռնաթափեցին և փոխադրեցին քաղաքի պահեստները։

1929 թ. ՀամՀԿԿՄ Կենտկոմում ուղարկված մի գրությամբ ՀԿԿՄ Կենտկոմը հայտնում էր, որ անցկացված շաբաթօրյակներից հավաքվել է 11 հազար ռուբլի գումար[1]։

Այդ գումարները հիմնականում հատկացվում էին ինդուստրացման, երկրի պաշտպանության և անդրադիտության վերացման ֆոնդերին։

«Սև հացի» կամպանիայի ժամանակ Հայաստանի կոմերիտականների ջանքերով հավաքվեց և Սովետական Միության մետալուրգիական գործարաններին հատկացվեց տասնյակ տոննա սև մետաղ[2]։

«Ինդուստրացման օրը» և կոմերիտական շաբաթօրյակները վերակենդանացրին կոմունիստական շաբաթօրյակների հիանալի տրադիցիան՝ ավելի մասսայական, իսկապես,

---

1 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, ց. 3, գ. 943, թ. 50։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 13, գ. 291, թ. 5 (ՀԿԿՄ Կենտկոմի 1929 թ. ապրիլի ինֆորմացիոն ամփոփագիրը «սև հացի» հավաքի արդյունքների մասին)։

համաժողովրդական մասշտաբով։ «Կոմունիստական շաբաթօրյակները» հենց այն պատճառով ունեն հսկայական պատմական նշանակություն,— գրել է Վ. Ի. Լենինը «Մեծ նախաձեռնություն» հոդվածում,— որ նրանք մեզ ցույց են տալիս բանվորների գիտակցական և կամավոր նախաձեռնությունն աշխատանքի արտադրողականության զարգացման մեջ, նոր աշխատանքային կարգապահության անցնելու, ինտենսիվության և կյանքի սոցիալիստական պայմաններ ստեղծելու մեջ»[1]։

Ինդուստրացման խոշորագույն աղբյուրներից մեկը անընդհատ արտադրական պրոցեսին անցնելն էր, որը բխում էր գործարանների տարբերումը և տեխնիկան առավելագույն չափով օգտագործելու հնարավորությունից և արդյունաբերության զարգացման տեմպերը արագացնելու, հնգամյա պլանը կենսագործելու շահերից։ Միութենական կառավարությունը, ՀամԿ(բ)Պ Կենտկոմի հավանությամբ, որոշում ընդունեց 1929 թ. հոկտեմբերից անցնել անընդհատ աշխատանքի և բազմահերթափոխության։ Այդ միջոցառումը քաղաքական և տնտեսական խոշոր նշանակություն ուներ մեր երկրի համար։ «Պրավդա»-ն այն իրավամբ գնահատեց որպես «նոր խոշոր քայլ սոցիալիզմի ուղղությամբ», նշելով, որ անընդհատ արտադրության իրականացումը Սովետական Միությանը կտա արդյունաբերական արտադրանքի 20,0 տոկոսի բարձրացում։ Եվ դա այն դեպքում, երբ այդ միջոցառումը կենսագործվում էր հնգօրյա աշխատանքային շաբաթի և յոթժամյա աշխատանքային օրվա անցնելու հետ միաժամանակ։

1929/30 տնտեսական տարում անընդհատ արտադրության անցան Սովետական Հայաստանի արդյունաբերության 13 խոշոր ձեռնարկություններից ինը, կամ նրանցում աշխատող բանվորների 90,8 տոկոսը[2]։ Արտադրության նոր սիստեմին անցնելը ուղեկցվեց սոցիալիստական մրցության հետագա զարգացումով։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 519։

2 ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928/29—1929/30), Երևան, 1930, էջ 27—28։

Մրցության առաջին ամիսների արդյունքների մասին ՀԱՄԽ-ի զեկուցումը քննվեց ՀԿ(բ)Պ Կենտկոմի Նախագահության նիստում 1929 թ. սեպտեմբերի 6-ին։ Ընդունված բանաձևում արձանագրվեց, որ սոցիալիստական մրցումը ընդգրկել է Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը և ձեռք են բերվել զգալի նվաճումներ՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման և կարգապահության ուժեղացման տեսակետից։ Իսկ երիտասարդական բրիգադները ցուցաբերել են աշխատանքային բարձր ոգևորություն։ Թերությունների թվում Կենտկոմը ցույց տվեց սոցմրցության կազմակերպման ու տարածման նկատմամբ պրոֆմիությունների անբավարար զեկավարությունը, հարվածային բրիգադների գործունեության կաբճատեությունը, ինժեներա-տեխնիկական աշխատողների կտրվածությունը մրցումից, բանվորների նյութական շահագրգռության և խրախուսանքի մյուս ձևերի բացակայությունը և այլն, և առաջարկեց մի շարք միջոցառումներ՝ հիշյալ թերությունները վերացնելու և սոցիալիստական մրցությունը ավելի լայնորեն տարածելու համար[1]։

Աշխատանքային խանդավառության վերելքի, սոցիալիստական մրցության և հարվածայնության տարածման շնորհիվ Հայաստանի աշխատավորները հնգամյակի առաջին տարում զգալի հաջողություններ ձեռք բերեցին։

Արդյունաբերության մեջ, էլեկտրիֆիկացիայի հետ միասին, ներդրվեց 14,3 միլիոն ռուբլի կամ այնքան, որքան ներդրվել էր նախորդ երկու տարում միասին վերցրած, իսկ տրանսպորտում՝ 5,1 միլիոն ռուբլի, այն դեպքում, երբ անցած ութ տարում հատկացվել էր 4,2 միլիոն ռուբլի[2]։

Ըստ Հայկական ԽՍՀ ժողովրդա-տնտեսական վիճակագրական վարչության՝ առաջին հնգամյա պլանի կատար-

---

1 Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՈՍԳ ՊԿԱ, ֆ. 65, ց. 11, գ. 54, թ. 6։

2 «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1935, էջ 18 և «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940)», стр. 19.

ման տվյալների ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը (1926/27 թ. անփոփոխ գներով) 1928/29 թ. կազմում էր 39,2 միլիոն ռուբլի՝ նախորդ տարվա 26,8 միլիոն ռուբլու դիմաց կամ ավելացել էր 46,2 տոկոսով[1]։

Նույն ժամանակամիջոցում խոշոր արդյունաբերության մեջ մեկ բանվորի ամսական աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 30,3, իսկ արտադրանքի ինքնարժեքն իջավ 13,2 տոկոսով՝ պլանով նախատեսված 9,0 տոկոսի դիմաց։ Ռեսպուբլիկայի շատ ձեռնարկություններ հնգամյակի առաջին տարին փակեցին պլանների գերակատարումով։ Այսպես, օրինակ, «Արարատ» տրեստը պլանը կատարեց 129,5, բամբակազտիչ գործարանները՝ 105,5, Երևանի կարբիդի գործարանը՝ 105,6, Անիպեմզան՝ 103,0, կարի արդյունաբերությունը՝ 106,5 տոկոսով։

Ալավերդու պղնձի կոմբինատի համախառն արտադրանքը աճեց 42,3, Զանգեզուրի կոմբինատինը՝ 7,7 և Հայտեքստիլինը՝ 89,0 տոկոսով և այլն[2]։ *«Արդյունաբերության ֆրոնտում մեր ունեցած խոշոր հաջողությունները բացատրվում են նրանով,—գրել է «Խորհրդային Հայաստան» թերթը,—որ անցյալ տնտեսական տարում, մասնավորապես նրա վերջին կիսամյակում նկատվեց որոշ բեկում արտադրական հանձնաժողովների և խորհրդակցությունների աշխատանքների մեջ, լայն չափերով տարածվեց սոցմրցությունը»*[3]։

Հնգամյա պլանի կատարման գործում կային նաև դժվարություններ։ Հնգամյակի առաջին տարվա պլանը ռեսպուբլիկայի արդյունաբերության գծով կատարվեց 92,4 տոկոսով։ Դրա հիմնական պատճառը Հայաստանի երկու խոշոր ար-

---

1 *Հայկական ՍՍՌ ՀՌՍԾ ՊԿԱ, ֆ. 65, ց. 6, գ. 659, թ. 5։*

2 *Մշի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 72 (Հայկական ԽՍՀ Պետպլանի կոնյունկտուրային տեսությունից՝ Հայաստանի ժողովրդական տնտեսությունը 1928/29 թ.)։*

3 *«Խորհրդային Հայաստան», 26 դեկտեմբերի 1929 (տե՛ս առաջնորդող հոդվածը)։*

դյունաբերական միավորումների՝ «Հայպղնձի» (Ալավերդու և Զանգեզուրի կոմբինատներ) և «Հայտեքստիլի» (Լենինականի տեքստիլ կոմբինատ) կողմից պլանների դդալի թերակատարումն էր։ Նրանցից առաջինը պլանը կատարեց 87,4, իսկ երկրորդը՝ միայն 59,9 տոկոսով, «Հայպղինձը» չէր կատարել նաև արտադրողականությունը բարձրացնելու և ինքնարժեքն իջեցնելու առաջադրանքները։ Հիշյալ կոմբինատների պլանների թերակատարման պատճառներից էին՝ հետախուզական աշխատանքների անբավարար ծավալումը (պարզված էր պղնձահանքի միայն մի քանի ամսվա պաշար), Ղափանի հանքերի տրանսպորտի ծանր պայմանները, բանվորական և ինժեներա-տեխնիկական անհրաժեշտ քանակությամբ որակյալ կադրերի բացակայությունը, բանվորների հոսունությունը և աշխատանքային թույլ կարգապահությունը (բավական է ասել, որ միայն Զանգեզուրի կոմբինատում, ըստ կոմբինատի վարչության տվյալների[1], միջին թվով 1054 բանվորներից մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատվել էին 882 մարդ և ընդունվել 684 մարդ, իսկ միջին թվով 18 ինժեներա-տեխնիկական աշխատողներից ազատվել էին 9 և ընդունվել 13 մարդ)։ Անբավարար էր արտադրության կազմակերպման դրվածքը։ Հիշյալ պատճառները կապված էին սոցիալիստական ինդուստրացման ընդհանուր դժվարությունների, ինչպես և զեկավարման թերությունների հետ։

Այնուամենայնիվ, չնայած հիշյալ դժվարություններին, ինչպես և հնգամյա պլանի լարվածությանը, նախորդ տարվա համեմատությամբ 1928/29 թ. աճի տեմպերը բավականին բարձր էին։ Դրա շնորհիվ, և սոցիալիստական մրցության զարգացման հիման վրա հնգամյակի երկրորդ տարում (սկսած 1929 թ. հոկտեմբերից) բարելավվեց պլանների կատարման ընթացքը, իսկ ետ մնացող ձեռնարկությունները

---

1 Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 519, ց. 1, գ. 16, թ. 1—11 (Զանգեզուրի կոմբինատի 1928/29 թ. աշխատանքի հաշվետվությունը)։

հաջողությամբ հաղթահարում էին դժվարությունները և վերացնում թերությունները։

1929 թ. նոյեմբերին Ալավերդում ստորագրվեց սոցիալիստական մրցության 48 պայմանագիր, ընդգրկելով 800 բանվոր։ Այդ պայմանագրերը ստորագրվել էին հիմնականում արտելների (բրիգադների) միջև։ Լենինյան հանքերում մրցության ծավալման հետևանքով 1929 թ. հոկտեմբեր—դեկտեմբեր ամիսների (հնգամյակի երկրորդ տարվա առաջին եռամսյակ) պղնձաքարի հանույթի պլանը, կոմբինատի արվյալներով, կատարվեց 118,3 տոկոսով[1]։ Սև և կարմիր պղնձի ձուլման նույն ամիսների պլանը գերակատարվեց 14,5 տոկոսով[2]։ Իսկ Հայկական ԽՍՀ ժողտնտխորհի ձեռնարկությունները (Ալավերդու և Զանգեզուրի կոմբինատները, ինչպես և Արթիկատուֆը միութենական ենթակայության ձեռնարկություններ էին) նույն եռամսյակի պլանը, ըստ կոնյունկտուրային տեսության տվյալների, կատարեցին 101,3 տոկոսով, այն դեպքում, երբ 1928/29 թ. պլանը կատարվել էր ընդամենը 90,2 տոկոսով։

Այսպիսով, Հայաստանում սոցմրցման տարածումից անցել էր ընդամենը ութ ամիս և նա արդեն ընդգրկել էր բանվոր դասակարգի հիմնական մասսան, ինչպես նաև ծառայողների և աշխատավոր գյուղացիների մի մասը։ Մրցության ձևերն էին հարվածային բրիգադների կազմակերպումը, արդյունաբերական ձեռնարկությունների փոխմրցակցությունը, գործարանների, ցեխերի ու հերթափոխությունների միջև պայմանագրերի կնքումը։ Այդ ձևերը Հայաստանում միմյանց հաջորդեցին մոտավորապես այն նույն հետևողականությամբ, ինչպես դա տեղի էր ունեցել կամ տեղի էր ունենում Սովետական Միության մյուս շրջաններում։ 1929 թ. անհատական կարգով սոցիալիստական մրցում չէր նկատվում (դա հանդես եկավ մրցության հետագա տարիներին)։ Պետք է ասել, որ հիշյալ ձևերից ավելի մեծ էֆեկտ էին տալիս հար-

1 Մլի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, ց. 3, գ. 43, թ. 49։
2 Նույն տեղում, գ. 119, թ. 6։

վածային բրիգադները և միջգեղային ու միջհերթափոխային (կամ միջբրիգադային) մրցությունը։ Այդ պատճառով էլ հետագայում ավելի զարգացան և ամրապնդվեցին հենց այդ ձևերը, իսկ դրանց ավելացավ նաև անհատական մրցումը։

1929 թ. նոյեմբերի երկրորդ կեսին Երևանում և մի շարք շրջաններում կայացան հարվածային բրիգադների կոնֆերանսներ, որոնք ամփոփեցին սոցիալիստական մրցության արդյունքները։ Նրանք որոշեցին ավելի լայնորեն ծավալել հարվածային բրիգադների ու ցեխերի կազմակերպումը՝ որպես հնգամյա պլանը կատարելու անհրաժեշտ միջոց։ Կոնֆերանսները ընտրեցին դելեգատներ միութենական համագումարի համար։

Դեկտեմբերի 5—10 Մոսկվայում կայացավ հարվածային բրիգադների Համամիութենական առաջին համագումարը։ Սովետական Միության գործարանների, ֆաբրիկաների, հանքահորերի և սովխոզների հարյուրավոր ներկայացուցիչներ՝ հարվածային բրիգադների առաջավորներ հավաքվել էին մեր Հայրենիքի մայրաքաղաքում՝ ամփոփելու սոցիալիստական մրցության և հարվածայնության առաջին հաջողությունները, ուղիներ նշելու նրա հետագա ծավալման ու խորացման համար։

Սովետական Միության արդյունաբերությունը դերակատարեց հնգամյակի առաջին տարվա պլանները։ Սոցիալիստական խոշոր արդյունաբերության արտադրանքը մեկ տարվա ընթացքում աճեց 23,7 տոկոսով, այդ թվում արտադրության միջոցների արտադրությունը՝ 29,8 տոկոսով։ Մեծ չափով աճեց աշխատանքի արտադրողականությունը։ 1928/29 թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 10,0, իսկ երկրորդ կիսամյակում՝ 20,0 տոկոսով։ Այսպիսով, 1929 թ. բեկման տարի էր աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու առաջարեղում։ Այդ հաջողությունները ուղեկցվեցին և նշանակալիորեն պայմանավորվեցին բանվոր դասա-

կարգի ամենալայն մասսաների ստեղծագործական ակտիվության աճմամբ[1]։ Այդ ակտիվությունը իր արտահայտությունը գտավ սոցիալիստական մրցության և հարվածայնության լայն ծավալման մեջ։ Միայն Մոսկվայում գործում էին երկու հազար, Լենինգրադում և Ուրալում՝ հազար հինգհարյուրական հարվածային բրիգադ և այլն։ Ըստ ՀԱՄԿԽ-ի տվյալների 1930 թ. հունվարի 1-ի դրությամբ սոցիալիստական մրցությունը մասնակցում էին և հարվածային բրիգադներում ընդգրկված էին համապատասխանաբար՝ մեքենագործ բանվորների 62,0 և 36,0, լեռնագործ բանվորների 55,0 և 24,0, տեքստիլագործների 70,0 և 25,0, շինարարների 51,0 և 27,0 տոկոսը և այլն[2]։

Համագումարում զեկուցումով հանդես եկավ ԽՍՀՄ Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի նախագահ Վ. Վ. Կույբիշևը, որը հանդամանորեն բացատրեց սոցիալիստական մրցության ուժի աղբյուրները և նշանակությունը։ Սոցիալիստական շինարարության ներկա էտապը, ասաց զեկուցողը, բնորոշ է այդ շինարարության մեջ բանվոր դասակարգի և գյուղացիության մասսաների ակտիվության հսկայական ուժեղացմամբ, երբ սոցիալիստական մրցումը դառնում է մեր աշխատանքի հիմնական մեթոդը։ Դրա հիման վրա հնգամյակի առաջին տարում ունեցած հսկայական հաջողություններն ապացուցում են, որ սոցիալիզմի շինարարության ավարտումը կարող է կատարվել պատմական մինիմալ ժամկետներում[3]։ Ի դեմս առաջավոր բանվորների և հարվածայինների, մատնանշում է Կույբիշևը, մենք տեսնում ենք կոմունիստական աշխատանք և կարգապահություն, ֆաբրիկայի և

---

1 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», 2-րդ մաս, էջ 787։

2 Политический и трудовой подъем рабочего класса СССР (1928—1929), стр. 374.

3 Տե՛ս В. В. Куйбышев, Избранные произведения, Госполитиздат, стр. 144.

գործարանի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք ստեղծելու ուղին բռնած բանվոր դասակարգի ամենագիտակից ջոկատի ներկայացուցիչներին։ Այդպիսի վերաբերմունքը պետք է զարգացնել և դարձնել բոլորի սեփականությունը, բոլորի հոգեբանության բնորոշ գիծը։ «Մեր առաջնահերթ խնդիրն է նախկին ստրկական կապիտալիստական աշխատանքի, հարկադրական աշխատանքի փոխարեն, հարկադրական կարգապահության փոխարեն ստեղծել այլ, կոմունիստական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, կոմունիստական աշխատանք և կոմունիստական կարգապահություն»[1]։ Սոցիալիստական մրցության և հարվածայնության մեջ, ինչպես հայելու մեջ, արտացոլվում է բանվոր դասակարգի հոգեբանության մեջ կատարված այն պատմական բեկումը, որի մասին Վ. Ի. Լենինը ասել է. «Հարցն այն է, որ գիտակից բանվորը իրեն զգա ոչ միայն որպես տեր իր գործարանում, այլ որպես երկրի ներկայացուցիչ, որ նա իր վրա զգա պատասխանատվություն։ Գիտակից բանվորը պետք է իմանա, որ ինքը դասակարգի ներկայացուցիչ է»[2]։

Համագումարում ելույթ ունեցող հարվածայինները խոսում էին հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու հնարավորության և ցանկության մասին։ Սոցիալիստական մրցության և հարվածայնության հիման վրա ծագեց «Հնգամյակը չորս տարում» լոզունգը, որը առաջ քաշեցին առաջավոր ֆաբրիկաների ու գործարանների կոլեկտիվները։

Հարվածային բրիգադների համագումարը ողջույն ուղարկեց ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեին և ընդունեց դիմում ուղղված Սովետական Միության բոլոր բանվորներին՝ սոցիալիստական մրցությունը ծավալելու և հնգամյա պլանը չորս տարում կատարելու մասին[3]։ Դիմումի մեջ ասված է.

---

1 Տե՛ս В. В. Куйбышев, Избранные произведения, Госполитиздат, стр. 151.

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 500։

3 Տե՛ս «Политический и трудовой подъем рабочего класса СССР», стр. 362—366.

հարվածային բրիգադների, ցեխերի և գործարանների ներկայացուցիչները խնդիր են դրել հնգամյա պլանը կատարել չորս տարում. դրան հասնելու համար անհրաժեշտ է սոցիալիստական մրցության և հարվածայնության մեջ ընդգրկել բանվորական ամբողջ մասսային, վերադասավորակել բանվորների հետամնաց խավերին, ավելի բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, իջեցնել ինքնարժեքը, բարելավել արտադրանքի որակը, զարգացնել բանվոր դասակարգի տեխնիկական գիտելիքները, բարձրացնել պարտիայի, կոմերիտմիության և պրոֆմիությունների կողմից սոցմրցության քաղաքական և կազմակերպական ղեկավարության դրակը։

Համագումարը քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորներին կոչ էր անում մրցությունը դարձնել աշխատանքի սիստեմ, «սոցիալիզմի կառուցման կոմունիստական մեթոդ», հնգամյակի կատարման հիմնական գենք։

«Հնգամյակը չորս տարում» լոզունգը արագորեն տարածվեց ինչպես սովետական բոլոր ռեսպուբլիկաներում, այնպես էլ Սովետական Հայաստանում։ Ալավերդու հարվածային պղնձագործների կոնֆերանսը, ամփոփելով անցած տարվա արդյունքները, ՀԿ(բ)Պ Կենտկոմին, ՀԱՄԽ-ին և հանքագործների միության կենտրոնական վարչությանը հեռագրեց, որ Ալավերդու և Շամլուղի հանքագործների առաջավոր ջոկատները, պաշտպանելով ինդուստրացման արագ տեմպի, կուլակի, նեպմանի վրա հարձակվելու պարտիայի քաղաքականությունը, խոստանում են ամեն ջանք գործ դնել հնգամյա պլանը չորս տարում կատարելու համար[1]։

Լենինականի տեքստիլ կոմբինատի կոմերիտական կազմակերպության կոնֆերանսը կոմբինատի 1.500 երիտասարդ բանվորների անունից խոստանում էր պլանը կատարել չորս տարում, ամենակարճ ժամանակամիջոցում կոմբինատը դարձնել հարվածային ձեռնարկություն, ավելացնելով, որ

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 3 դեկտեմբերի 1929։

նրանք գործնական օգնություն ցույց կտան գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը և քաղաքի ու գյուղի զոդման գործին[1]։

Նման պարտավորություններ ստանձնեցին նաև ռեսպուբլիկայի մյուս արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք իրենց խոստումը դարձրին գործ։

Այսպիսով, առաջին հնգամյակի առաջին տարին, ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ նրա անբաժանելի մասը կազմող Սովետական Հայաստանում նշանավորվեց պատմական նշանակություն ունեցող վերելքով։ Այդ վերելքը արտահայտվեց մասսաների քաղաքական ակտիվության ուժեղացմամբ, իսկ արդյունաբերության մեջ՝ բանվոր դասակարգի շտեսնված արտադրական խանդավառությամբ՝ ի դեմս սոցիալիստական մրցության և հարվածայնության ծավալման։

Սոցիալիստական մրցության ծագումը պատահական չէր. այն նախապատրաստված էր Սովետական պետության անցած պատմությամբ։

Մրցության լայն ծավալման, նրա ուժի գաղտնիքը Սովետական պետության դեմոկրատիզմի, տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների մեջ է։ Նրա ծագումը և մասսայական, համաժողովրդական բնույթը կապիտալիզմի նկատմամբ սոցիալիստական տնտեսակարգի գերազանցության վառ ապացույցն են։

Սոցիալիստական մրցումը վճռական բեկում ստեղծեց աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ։ Մրցման սկզբնական էտապում արտադրողականության բարձրացման ռեզերվներն էին՝ աշխատանքային օրը լրիվ օգտագործելը, տեխնիկան ռացիոնալ օգտագործելը և նրա նկատմամբ խնամքով վերաբերվելը և այլ գործոններ։ Ինչ վերաբերում է նորագույն տեխնիկային և բանվորների տեխնիկական դիտելիքներին, ապա այդ ռեզերվները կապված

---

1 Տե՛ս «Բանվոր», 25 դեկտեմբերի 1929։

են սոցիալիստական մրցության զարգացման հետագա էտապների հետ։

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը սոցիալիստական հասարակության զարգացման օրենքն է։ Ինահատելով նրա նշանակությունը կոմունիստական հասարակարգի ստեղծման դերում, Վ. Ի. Լենինը «Մեծ նախաձեռնություն» նշանավոր հոդվածում (գրվել է 1919 թ. հունիսին) գրել է. «Աշխատանքի արտադրողականությունը, վերջին հաշվով, ամենակարևորը, ամենագլխավորն է նոր հասարակարգի հաղթանակի համար։ Կապիտալիզմն ստեղծեց ճորտատիրության օրով չտեսնված աշխատանքի արտադրողականություն։ Կապիտալիզմը կարող է վերջնականապես հաղթվել և կհաղթվի նրանով, որ սոցիալիզմն ստեղծում է նոր, շատ ավելի բարձր՝ աշխատանքի արտադրողականություն»[1]։

Սոցիալիստական մրցության ծավալումը, աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղղությամբ կատարված վերելքը, ծանր ինդուստրիայի ստեղծման համար կապիտալ ներդրումների պրոբլեմի լուծումը 1929 թ.՝ մեծ բեկման տարում սովետական ժողովրդի, բանվոր դասակարգի և Կոմունիստական պարտիայի նվաճած մեծագույն հաղթանակներն են։

Սոցիալիստական մրցումը դարձավ աշխատավոր մասսաների աշխատանքի ու պայքարի հիմնական մեթոդը՝ հնգամյա պլանը կատարելու համար։ Հնգամյակի առաջին տարվա հաջողությունները և բանվոր դասակարգի աշխատանքային վերելքը, հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար ծավալված շարժումը պարտիայի և կառավարության մեծագույն հաղթանակն էին ընդդեմ աջ և «ձախ» օպորտունիստների, բուրժուական նացիոնալիստների, դասակարգային բոլոր թշնամիների, որոնք ժխտում էին հնգամյա պլանի արագ տեմպերը, չէին հավատում սովետա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 523։

կան ժողովրդի ստեղծագործական ուժերին, փորձում էին արդելակել մեր առաջընթացը։

Սովետական Հայաստանի աշխատավորները, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, հաջողությամբ մասնակցում էին սոցիալիզմի կառուցման հնգամյա հոյակապ պլանի իրականացման գործին։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ։ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը սոցիալիզմի կառուցման դժվարագույն խնդիրն է, քանի որ այստեղ հարցը վերաբերում է միլիոնավոր մանր, անհատական գյուղացիական տնտեսություններին, որոնց արտադրությունը հիմնված է անձնական աշխատանքի վրա և որոնց, ինչպես սովորեցնում է մարքսիզմ-լենինիզմը, էքսպրոպրիացիայի ենթարկել չի կարելի։ Նրանց նկատմամբ դործադրած յուրաքանչյուր հարկադրանք միայն կարող է վնաս հասցնել սոցիալիզմի դործին։ Տալով գյուղում սոցիալիզմի կառուցման ուղին, Ֆ. Էնդելսը գրել է. «Երբ մենք տիրապետենք պետական իշխանությանը, մենք անկարող կլինենք նույնիսկ մտածել մանր գյուղացիներին բռնի կերպով էքսպրոպրիացիայի ենթարկելու մասին (պարզևատրությամբ լինի, թե առանց դրան՝ միևնույն է), ինչպես մենք ստիպված կլինենք այդ անել խոշոր հողատերերի հետ։ Մանր գյուղացիների նկատմամբ մեր խնդիրը նախ և առաջ այն է, որ նրանց մասնավոր արտադրությունը և մասնավոր ունեցվածքը դարձնենք ընկերական, բայց ոչ թե բռնի ճանապարհով, այլ օրինակի և այդ նպատակի համար հասարակական օգնություն առաջարկելու միջոցով»[1]։

---

1 Կ. Մարքս և Ֆ. Էնդելս, *Ընտիր երկեր երկու հատորում*, հատ. 2, Հայպետհրատ, 1950, էջ 559—560։

Մանր և միջին ապրանքարտադրողներին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղին նրանց կոոպերացումն է։ Լենինյան կոոպերատիվ պլանը մեր երկրում սոցիալիզմի կառուցման Վ. Ի. Լենինի մշակած պլանի բաղկացուցիչ մասն է, որն ունի համաշխարհային պատմական նշանակություն։ Դա հաստատված է ինչպես Սովետական Միության, այնպես էլ ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատմական փորձով։

Կոոպերացիայի բացառիկ նշանակությունը, որից և ելնում էր Վ. Ի. Լենինը, այն է, որ պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումից հետո նա դառնում է «ըստ կարելույն ավելի հասարակ, հեշտ ու գյուղացու համար մատչելի» ճանապարհը նոր կարգերին անցնելու տեսակետից[1]։

Այդ հնարավորությունը ստեղծվում է սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո, երբ արտադրության հիմնական միջոցները կենտրոնանում են պետության ձեռքում, երբ ապահովված է բանվոր դասակարգի ղեկավարությունը գյուղացիության և մյուս աշխատավորների նկատմամբ։

Կոոպերացիայի միջոցով գյուղացիներին և արհեստավորներին սոցիալիզմի մեջ ներգրավելը միայն նրանց կփրկի շահագործումից և աղքատությունից, որը անխուսափելի է մանր ապրանքային արտադրության պայմաններում։ Իսկ մանր տնտեսությամբ կարիքից դուրս գալ չի լինի, գրել է Վ. Ի. Լենինը[2]։

Քանի դեռ մենք ապրում ենք մանրգյուղացիական երկրում, մատնանշում է Վ. Ի. Լենինը, Ռուսաստանում կապիտալիզմի համար ավելի ամուր տնտեսական բազա կա, քան կոմունիզմի համար։ Ներքին թշնամին «դիմանում է մանր տնտեսության շնորհիվ, և այն արմատախիլ անելու համար կա մի միջոց՝ երկրի տնտեսությունը, այդ թվում նաև հողագործությունը, փոխադրել նոր տեխնիկական բազայի վրա,

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 557։

2 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 170։

ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա»[1]։

Բացի այդ, մեր երկրի անհատական գյուղացիական տնտեսություններին սոցիալիստական ուղու վրա փոխադրելը թելադրվում էր անցման ժամանակաշրջանում սոցիալիստական առաջավոր արդյունաբերության և մանրատված, հետամնաց գյուղատնտեսության միջև գոյություն ունեցող հակասությունները վերացնելու անհրաժեշտությամբ։ Գյուղատնտեսության մեջ իշխող հին արտադրական հարաբերությունները խանգարում էին ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ արդյունաբերության արտադրողական ուժերի զարգացմանը։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ապահովեց կատեգորի արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության օրենքի գործողության համար և հնարավորություն կատեգորի ապահովելու արդյունաբերությունը հումքով, իսկ բնակչությանը՝ պարենամթերքով, որոնց պահանջը օրեցօր աճում էր։ Դա նշանակում է, որ սովետական պետությունը և սոցիալիստական շինարարությունը քիչ թե շատ երկար ժամանակ չէին կարող հենվել երկու տարբեր հիմքերի՝ արտադրության միջոցների հասարակական և մասնավոր սեփականությունների վրա, որոնցից առաջինը առաջավոր տեխնիկայով զինված և արագ տեմպերով զարգացող խոշոր սոցիալիստական արդյունաբերության, իսկ երկրորդը տեխնիկապես հետամնաց, խիստ դանդաղ զարգացող, ոչ միշտ նույնիսկ պարզ վերարտադրություն ապահովող մանր գյուղացիական տնտեսության հիմքն էր։

Այսպիսով, մանր ապրանքային տնտեսությունները սոցիալիստական տնտեսությունների մեջ համախմբելը, որը բխում է նախ և առաջ գյուղացիության կենսական շահերից, օբյեկտիվ անհրաժեշտություն է և անխուսափելի՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնող յուրաքանչյուր երկրի համար։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 653—654։

Ըստ Լենինյան կոոպերատիվ պլանի անհատական գյուղացիական տնտեսություններին սոցիալիզմի կողմը գրավելու համար վճռական նշանակություն ունի գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումը, պետության կողմից գյուղացիությանը ցույց տրվող ֆինանսական և այլ օգնությունը, գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացումը և այլն։ Այդ պլանի կարևոր կողմերից մեկը կոլեկտիվ տնտեսությունների մեջ գյուղացիներին կամավոր ներգրավելու սկզբունքն է։

Սովետական Միության Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ստիպված նախապատրաստեցին գյուղի սոցիալիստական վերափոխումը։ 1927 թ. պարտիայի XV համագումարը ընդունեց պատմական նշանակություն ունեցող որոշում՝ կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը զարգացնելու մասին։ «Անհրաժեշտ է, որպես առաջնահերթ խնդիր՝ դնել փոշիացած գյուղացիական տնտեսությունները գյուղացիության հետագա կոոպերացման հիման վրա ստիպված նոր արտադրության ուղիներին փոխադրելու խնդիրը (հողի կոլեկտիվ մշակում՝ հողագործության ինտենսիվացման և մեքենայացման հիման վրա), ամեն կերպ պահպանելով և խրախուսելով հանրայնացված գյուղատնտեսական աշխատանքի բողբոջները»[1]։ Անհատական տնտեսությունների համախմբումը խոշոր կոլեկտիվների մեջ դիտվում էր որպես տվյալ ժամանակաշրջանում պարտիայի հիմնական խնդիրը գյուղում։ Դրա հետ միասին անհրաժեշտ էր համարվում ուժեղացնել հարձակումը կուլակների վրա, նոր միջոցներով սահմանափակելով նրանց զարգացումը։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը քաղաքական և տնտեսական-կազմակերպական հսկայական աշխատանք ծավալեցին համագումարի որոշումները կենսագործելու՝ բազմամիլիոն գյուղացիական տնտեսությունների մասսայական կոլեկտիվացումը նախապատ-

---

1 ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 2-րդ մաս, էջ 552—553։

ցաստելու ուղղությամբ։ Զարգացող սոցիալիստական ինդուստրիան ստեղծում էր այդ պատմական հեղաշրջման նյութական-տեխնիկական բազան, իսկ սովետական բանվոր դասակարգը բազմապիսի օգնություն ցույց տալով գյուղին, օժանդակում էր գյուղացիներին՝ կազմակերպելու կոլեկտիվ տնտեսություններ։ 1929 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Սովետական Միության գյուղատնտեսության մեջ կար 35 հազար տրակտոր, այդ թվում կոլտնտեսություններում ավելի քան 16 հազար։ Այդ տրակտորների կեսից ավելին ներմուծվել էր արտասահմանից։ Երկրի ինդուստրացումը հնարավորություն էր ստեղծում տվյալ բնագավառում կապիտալիստական երկրներից մեր կախվածությունը վերացնելու համար։ 1929 թ. ավարտվելու վրա էր Ստալինգրադի տրակտորային գործարանի շինարարությունը։ Նման գործարաններ էին կառուցվում Խարկովում և Չելյաբինսկում։ Ռոստովում կառուցվում էր գյուղատնտեսական մեքենաների, իսկ Սարատովում կոմբայնների գործարան։ 1929 թ. հունիսի 5-ին Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը որոշում ընդունեց մեքենա-տրակտորային կայաններ կազմակերպելու մասին։

1929 թ. գարնանացանի կամպանիայի ժամանակ լայն ծավալ ընդունեց բանվորական բրիգադների մեկնումը գյուղ։ Նրանք վերանորոգում էին գյուղատնտեսական գործիքները, ագիտացիա էին անում կոլտնտեսությունների առավելության օգտին, կամավոր միջոցներ էին հավաքում կոլտնտեսությունների համար տրակտորներ գնելու նպատակով և այլն։ Մոսկվայի, Լենինգրադի, Դոնբասի, Ուրալի գործարանների բանվորները շեֆություն էին անում Պավլովսկի, Հյուսիսային Կովկասի, Կենտրոնական սևահողային մարզի և Ուկրաինայի բազմաթիվ շրջանների գյուղերի ու կոլտնտեսությունների նկատմամբ։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը ծավալելու գործում կարևոր դեր խաղացին հին կոլտնտեսությունների և սովխոզների փորձը, գյուղատնտեսական մթերքների կոնտրակտացիայի կիրառումը, 1928—1929 թթ. հացամթերման

դժվարությունների ժամանակ ուժեղացած կուլակության դիմադրության ջախջախումը, գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի զարգացումը և այլն։

1929 թ. գյուղում վճռական շրջադարձ կատարվեց դեպի կոլեկտիվ տնտեսությունները։ Չքավոր գյուղացիների ետևից կոլտնտեսությունների մեջ սկսեցին մտնել միջակ գյուղացիները։ Միայն երեք ամսվա ընթացքում (հուլիս—սեպտեմբեր) կոլտնտեսությունների մեջ ընդգրկվեցին այնքան գյուղացիներ, որքան Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո անցած տասներկու տարիների ընթացքում, այսինքն՝ մոտ մեկ միլիոն տնտեսություն, իսկ 1929 թ. վերջին երեք ամսում՝ մոտ 2,4 միլիոն տնտեսություն։ Դա կոլեկտիվացման չտեսնված վերելք էր, որը մի քանի անգամ գերազանցում էր հնգամյա պլանով նախատեսված տեմպերը։ Նորը և վճռականը տվյալ ժամանակաշրջանի կոլտնտեսային շարժման մեջ այն էր, որ գյուղացիները կոլտնտեսություններն էին մտնում ոչ թե առանձին խմբերով, այլ ամբողջ գյուղերով, շրջաններով և օկրուգներով։ Իսկ այդ նշանակում էր, որ միջակը մտնում էր կոլտնտեսության մեջ։ Այդ էլ հենց գյուղատնտեսության զարգացման մեջ տեղի ունեցած արմատական բեկումն էր, Սովետական իշխանության կարևորագույն նվաճումն ընթացիկ տարում։

Դա մասսայական կոլտնտեսային շարժման սկիզբն էր, որը 1929 թ. վերջին և 1930 թ. սկզբին երկրի մի շարք շրջաններում վերաճեց համատարած կոլեկտիվացման։

Համատարած կոլեկտիվացումը առաջինը ծավալվեց Ռուսաստանի և Ուկրաինայի հացահատիկային շրջաններում։ Դրանք այն շրջաններն էին, որտեղ գյուղացիության սոցիալական շերտավորումը ավելի խիստ էր արտահայտված, ավելի սուր էր դասակարգային պայքարը և որտեղ 1928—1929 թթ. կուլակների դիմադրությունը խիստ կերպով ջախջախվել էր։ Այնտեղ արտադրական կոոպերացիան ավելի էր զարգացած, գյուղատնտեսական տեխնիկան ավելի մեծ չափով էր ներդրված արտադրության մեջ և այլն։

Գյուղացիության հիմնական մասսաների և գյուղի կենտրոնական դեմքը ներկայացնող միջակների շրջադարձը դեպի կոլտնտեսությունները նշանակում էր, որ Կոմունիստական պարտիան, Սովետական կառավարությունը և ողջ ժողովուրդը վճռական հաղթանակ էին տանում սոցիալիզմի կառուցման ամենադժվարին բնագավառում։

* * *

Հայաստանի Կոմունիստական պարտիան մոբիլիզացրեց ռեսպուբլիկայի աշխատավորների ուժերը՝ գյուղատնտեսության կոլեկտիվացումը նախապատրաստելու և ծավալելու խնդիրները կենսագործելու համար։

Պարտիան և կառավարությունը կոոպերացիան, վարկավորումը, հարկային քաղաքականությունը, տեխնիկայի և մեքենաների մատակարարումը, շնֆական աշխատանքը, կոնտրակտացիան և այլն դարձրին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հզոր լծակներ։

Հայաստանում գյուղատնտեսական կոոպերացիան ըստ էության զարգանալ հատկապես 1924 թվականից հետո, երբ տեղի ունեցավ գյուղատնտեսական կոոպերատիվների տասնչին համագումարը և կազմակերպվեց վերակալար օրգան՝ Հայգյուղկոոպը։

Ինչպես սովորեցնում էր Վ. Ի. Լենինը, կոոպերացիայի նշանակությունը կայանում է նրանում, որ նա աստիճանաբար, գյուղացիների համար մատչելի և հեշտ ձևով՝ աշխատանքի սոցիալիստական ձևեր է սերմանում գյուղում, քայլ առ քայլ նրանց ներգրավում սոցիալիստական շինարարության մեջ, գյուղը ընդգրկում սոցիալիզմի կառուցման ոլորտի մեջ։ «Արտադրության միջոցների հանրային սեփականության ժամանակ, բուրժուազիայի վրա պրոլետարիատի տարած դասակարգային հաղթանակի ժամանակ,—գրել է Վ. Ի. Լե-

նինը,—քաղաքակրթված կոոպերատորների հասարակարգը հենց սոցիալիզմի հասարակարգն է»։ Կամ՝ «Վիճակատար կոոպերացման դեպքում մենք արդեն երկու ոտքով սոցիալիստական հողի վրա կանգնած կլինեինք»[1]։

Վ. Ի. Լենինի կոոպերատիվ պլանից բխում է, որ կոոպերացիան պետք է զարգացնել ստիպողական՝ կոոպերացիայի պարզ ձևերից անցնել արտադրական կոոպերացիային, նրա բարձր ձևերին՝ կոլտնտեսություններին։

Հայգյուղկոոպի տվյալներով 1929 թ. կեսերին գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ էին ընդգրկված Հայաստանի բոլոր գյուղացիական տնտեսությունների 45,0 տոկոսը (իսկ եթե նկատի ունենանք, որ որոշ տնտեսություններ մեկից ավելի կոոպերատիվ ընկերության անդամ էին, ապա կոոպերացման տոկոսը կհասնի 54,0-ի)[2], 1924 թ. 5,9 և 1928 թ. 38,5 տոկոսի դիմաց[3]։

1928 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայգյուղկոոպի ցանցում կար 280 տարբեր տեսակի կոոպերատիվ, այդ թվում 41 վարկային, 95 կաթնատնտեսական, 25 գինեգործական, 14 բամբակագործական, մի քանի մետաքսագործական, մեղվաբուծական, ինչպես նաև 80 արտադրական կոոպերատիվներ (կոլտնտեսություններ, կոմունաներ և այլն), 65.790 անդամով, որը կազմում էր գյուղացիական բոլոր տնտեսությունների մեկ երրորդից ավելին[4]։

Կոոպերատիվ ընկերությունների և նրանց անդամների ավելացման հետ միասին Հայգյուղկոոպի սիստեմում կազ-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 560, 565։

2 ՄԱԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 11, թ. 74 և նույն տեղում, գ. 22, թ. 51 (ՀԿ(բ)Պ ԿԿ-ի 1929 թ. նոյեմբերյան պլենումում Հայգյուղկոոպի զեկուցման նյութերից)։

3 Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեության հաշվետվություն (1926 թ. 1/10—1928 թ. 1/7), Երևան, 1928, էջ 19։

4 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 42, գ. 180, թ. 32—38 (Հայգյուղկոոպի 3-րդ լիազորական ժողովի նյութերը)։

մակերպվում են մասնագիտական կենտրոններ՝ Պանիրյուղ-կենտրոնը, Այգգինկոսպը, Բամբակմիությունը, ինչպես նաև Կոլտնակենտրոնը։

Գյուղատնտեսական կոոպերացիան դեռևս հիմնականում ընդգրկում էր մատակարարման և հայթայթման բնագավառը։ Այդ կապակցությամբ էլ նա զարգացած էր հատկապես այն գյուղատնտեսական շրջաններում, որտեղ ապրանքայնությունը բարձր էր։ Այդպիսի շրջան էր նախ և առաջ Արարատյան դաշտավայրը, որտեղ զբաղվում էին բարձր ապրանքային կուլտուրաների՝ խաղողի և բամբակի մշակությամբ։ 1928 թ. հուլիսի 1-ի դրությամբ Մեղրիի գավառում կոոպերացված էր գյուղացիական տնտեսությունների 90,0, Երևանի գավառում՝ 52,7 և Էջմիածնի գավառում՝ 51,4 տոկոսը[1], իսկ 1929 թ. կոոպերացման տոկոսը ավելի է բարձրանում։

1929 թ. Հայգյուղկոոպի միջոցով հայթայթվել և վաճառքի է հանվել կամ արդյունաբերական մշակման է հանձնվել Հայաստանի գյուղատնտեսության ամբողջ ապրանքային արտադրանքի 41,0 տոկոսը, այդ թվում բամբակի և մեսրոպի ամբողջ ապրանքային արտադրանքը, խաղողի 70,0, ծխախոտի 90,0, կաթի 30,0 տոկոսը և այլն[2]։

Գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով պետությունը մեծ օգնություն էր ցույց տալիս աշխատավոր գյուղացիներին՝ արտադրությունը ռացիոնալ ձևով կազմակերպելու և զարգացնելու նպատակով, մատակարարելով նրանց գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, տեսակավոր սերմեր, աղնվացնող տնտեսություններ և այլն։

Գոյություն ուներ 41 վարկային ընկերություն, 47.340 անդամներով (տնտեսությունների մոտ 30,0 տոկոսը)։ 1926/27 թ. հիշյալ ընկերությունների կողմից արտադրական

---

[1] Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեության հաշվետվությունը (1926 թ. 1/10—1928 թ. 1/7), էջ 20։

[2] Մկի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 22, թ. 53։

նպատակներով գյուղացիներին և կոլտնտեսություններին տրամադրվեց մոտ 4,2, 1927/28 թ.՝ 5,5 և 1928/29 թ.՝ 5,6 միլիոն ռուբլի վարկ, գերազանցապես երկարատև ժամկետով[1]։

Կոոպերացիայի գործունեության մեջ մասնավորապես կարևոր նշանակություն ուներ տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների մատակարարումը։ 1929 թ. ռեսպուբլիկայի դաշտերում աշխատում էր ավելի քան 160 տրակտոր, իսկ նախասովետական Հայաստանում գյուղացին տրակտոր չէր տեսել։ Տրակտորների մեծ մասը, ինչպես նաև զգալի քանակությամբ այլ տեխնիկա, կենտրոնացած էր վարձութակետերում (նրանց թիվը 1929 թ. հասնում էր 33-ի), որոնք օգնում էին աշխատավոր գյուղացիներին, վարելով նրանց հողաբաժինները։ Տրակտորների աշխատանքը, սովխոզները և կոլտնտեսությունները օրինակ էին ծառայում, համոզում գյուղացիներին, որ անհրաժեշտ է մանր հողակտորները միավորել, համախմբվել կոլեկտիվ տնտեսությունների մեջ։ Սովետական պետությունը այդ ժամանակ դեռևս հնարավորություն չուներ մեծ քանակությամբ գյուղատնտեսական տեխնիկա տրամադրել գյուղացիությանը, բայց դա շատով հնարավոր կդառնար՝ տրակտորային գործարանների կառուցումը ավարտելուց հետո։ Տրակտորների և կոմբայնների օգտագործումը իր հերթին պահանջում էր վերացնել գյուղացիների մանր հողակտորների սահմանները, միավորել նրանց խոշոր սոցիալիստական տնտեսությունների մեջ։

Հայկական ԽՍՀ Գյուղատնտեսական բանկի տվյալներով միայն վերջին երեք տարվա ընթացքում (1927—1929) ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը ստացել էր 85 տրակտոր, 7.146 գութան, 580 տարբեր տեսակի շարքացան, 202 սերմացուցիչ և այլ գյուղատնտեսական գործիքներ[2]։ Չնայած

---

1 ՄԱԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 13, գ. 22, թ. 62։
2 Նույն տեղում, գ. 235, թ. 99։

ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեքենայացման արագ տեմպերին, նա դեռևս գտնվում էր բավականին հետամնաց մակարդակի վրա։ Աշխատավոր գյուղացու տնտեսության մեջ դեռևս բավականին մեծ տեղ էր գրավում արորը։ Գութանների թիվը Հայաստանում հասնում էր ընդամենը 15 հազարի, այն դեպքում, երբ գյուղացիական տնտեսությունների թիվը 160 հազար էր։ Հայաստանում մեքենատրակտորային կայաններ կամ տրակտորային շարասյուներ դեռևս չկային։ Առաջին ՄՏԿ-ը կազմակերպվեց 1930 թ. Սարդարապատում (Հոկտեմբերյան)։ Այդպիսի պայմաններում գյուղատնտեսական կոոպերացիայի, վարձութակետերի, վերանորոգման արհեստանոցների միջոցով գյուղացիությանը պետության կողմից ցույց տված օգնությունը բավականին մեծ էր։

Այդ օգնությունը կազմակերպվում էր նաև կոնտրակտացիայի միջոցով։ Կոնտրակտացիան գյուղացիական տնտեսությունների հետ պետական և կոոպերատիվ կազմակերպությունների պայմանագրային հարաբերությունն է, որի համաձայն պետությունը բազմապիսի, հիմնականում արտադրական օգնություն էր ցույց տալիս գյուղացիներին, դրա փոխարեն ստանալով գյուղատնտեսական արտադրանքը, պայմանագրով սահմանված գներով և նշված ժամկետներում։ Գյուղացիների պարտավորության մեջ էր մտնում նաև տրակտորային միջոցառումների կիրառումը։ Այսպիսով, կոնտրակտացիան որոշում էր պետության և անհատական, ինչպես նաև կոլեկտիվ տնտեսությունների պարտականությունները գյուղատնտեսությունը զարգացնելու համար, արտադրական կապ ստեղծելով երկու կողմերի միջև։ Գնահատելով կոնտրակտացիայի դերը ՀամԿ(բ)Պ Կենտկոմը 1929 թ. օգոստոսի 26-ի որոշման մեջ կոնտրակտացիայի մեթոդը համարեց «գյուղացիական տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման և վերելքի հզոր լծակ»[1]։ Բացի այդ, կոնտրակտացիայի միջոցով արդյունաբերությունը՝ սո-

[1] „Правда", 27 августа, 1929.

սիալիստական սեկտորը պլանային վերափոխիչ ներգործություն էր ունենում գյուղի էկոնոմիկայի վրա։

Հայաստանում կոնտրակտացիայի մեջ էին ընդգրկված հազարավոր գյուղացիական տնտեսություններ, ինչպես և շատ կոլտնտեսություններ։ 1928 թ. կոնտրակտացվել էր բամբակի ամբողջ ցանքատարածությունը (ավելի քան 16.800 հեկտար), 73.700 տոննա խաղող, 245 տոննա բուրդ, 118 տոննա բոժոժ, մոտ չորս հազար տոննա պանիր և այլն։ Այդ թվականին պայմանագրի միջոցով Հայգյուղկոոպը, որը իր ձեռքում էր կենտրոնացրել մթերման գործը, գնել էր ավելի քան տասը միլիոն ռուբլու գյուղատնտեսական ապրանք[1]։ Իսկ 1929 թ. բամբակի ամբողջ ցանքից բացի կոնտրակտացված էր 5.250 հեկտար հացահատիկային ցանքատարածություն, որոշ քանակությամբ ծխախոտ, բոժոժ և այլն[2]։

Այդ բոլորը նշանակում է, որ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը ամրապնդվում է նոր, արտադրական հիմքի վրա։ Դա բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման ու զարգացման նոր էտապն է, երբ քաղաքի և գյուղի արտադրական զորման միջոցով և նրա հիման վրա նախապատրաստվում է գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը նախապատրաստելու, ինչպես նաև չքավոր և միջակ տնտեսությունների դրությունը բարելավելու և կուլակության դեմ մղվող պայքարում նրանց համախմբելու նպատակին էր ուղղված գյուղում սովետական պետության դասակարգային քաղաքականությունը։

Սովետական պետության ագրարային քաղաքականության հետևանքով արմատապես փոխվել էր մեր գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը։ Եթե կապիտալիզ-

---

1 ՄԼՔ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 357, թ. 61։

2 «Խորհրդային Հայաստան», 12 և 22 հունիսի 1929։

մի ժամանակ միջակ գյուղացիության քայքայման հաշվին աճում էին մի կողմից չքավորները, իսկ մյուս կողմից կուլակները, ապա պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում նախ խիստ չափով կրճատվեց չքավորների, ինչպես նաև կուլակների թիվը, իսկ միջակ գյուղացիությունը աճելով՝ ավելի ու ավելի էր դառնում գյուղի կենտրոնական դեմքը։ Սակայն նոր տնտեսական քաղաքականության պայմաններում կատարվում էր կուլակային տնտեսությունների որոշ աշխուժացում, իսկ մանր տնտեսությունների գոյությունը սոցիալական բազա էր ծառայում գյուղական բուրժուազիայի առաջացման համար։ Գյուղի շահագործողներից, որոնց նկատմամբ պետությունը վարում էր նրանց սահմանափակելու և արտամղելու քաղաքականություն, աղատվելու պահանջ դնում էին իրենք՝ գյուղացիները և ցանկություն էին հայտնում ստեղծել կոլեկտիվ տնտեսություններ։

Գյուղի սոցիալական շերտերի նկատմամբ Սովետական պետությունը կիրառում էր հետևյալ քաղաքականությունը, որը ընդունվել էր Համ(ր)Պ VIII համագումարում (1919) Վ. Ի. Լենինի առաջարկությամբ՝ հենվել չքավոր գյուղացիների վրա, ամուր դաշինք ստեղծել միջակների հետ և պայքարել կուլակների դեմ։

1926 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում կուլակային տնտեսությունների տեսակարար կշիռը գյուղական բոլոր տնտեսությունների մեջ կազմում էր 5,47 տոկոս[1]։

Փոքրաթիվ և անհատական կարգով հարկվող տնտեսություններից (դրանք հիմնականում կուլակային տնտեսություններն էին) 1928/29 թ. գանձվել էր ամբողջ գյուղատնտեսական հարկի 37,8 տոկոսը, նախորդ տարվա 34,0 տոկոսի դիմաց։ Իսկ մնացածը վճարել էին միջակները։ Սովետական կառավարությունը բոլոր չքավորներին ազատել էր հարկից։ 1929 թ. հրապարակվեց նոր օրենք (Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի նույն թվականի ապրիլի 3-ի որոշումը), որով ավե-

---

[1] Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով. Երևան, 1935, էջ 25։

լի էր թեթևացվում միջակ գյուղացիության դրությունը։ Դրա շնորհիվ 1927/28 թ. 44,0 տոկոսի դիմաց 1928/29 թ. գյուղատնտեսական հարկից ազատվեցին բոլոր տնտեսությունների 64,0 տոկոսը։ Իսկ յուրաքանչյուր միջակ տնտեսության հարկը միջին հաշվով պակասեց 20,0 տոկոսով[1]։

Սովետական կառավարությունը մեծ օգնություն ցույց տվեց չքավոր գյուղացիությանը։ Չքավորների համար սահմանված էին արտոնյալ պայմաններ՝ գյուղատնտեսական տեխնիկայից և ոռոգման ջրից օգտվելու, ագրոնոմիական օգնություն և վարկ ստանալու և այլն։ Այդ օգնությունը հատկապես ուժեղացվեց պարտիայի XV համագումարից հետո։ Վարկերը առաջին հերթին և ավելի արտոնյալ պայմաններով տրվում էին չքավոր գյուղացիներին։ Նրանք առաջինն էին օգտվում վարձավարակներից, սերմացուից կայաններից, սովխոզների և կոլտնտեսությունների տեխնիկայից և այլն, իսկ կոոպերացիայի մեջ ընդունվելը, ինչպես նաև հողաշինարարությունը նրանց համար կատարվում էր անվճար։

Աշխատավոր գյուղացիության տնտեսական օգնության ուղղությամբ լայն գործունեություն էին ծավալել Փոխադարձ օգնության կոմիտեները (ՓՕԿ) (նրանց կազմակերպման մասին դեկրետ ընդունել էր Հայկական ԽՍՀ Կենտգործկոմը 1922 թ. օգոստոսի 9-ին)։ Հայկական ԽՍՀ ՓՕԿ-երի Կենտկոմի տվյալներով[2] 1928 թ. ռեսպուբլիկայում կար 994 Փոխադարձ օգնության կոմիտե, որից 945-ը գյուղերում (մյուսները գավառային և գավառակային կոմիտեներն էին), որոնք ընդգրկում էին Հայաստանի բոլոր բնակավայրերի 82,0 տոկոսը։ ՓՕԿ-երի մեջ ընդգրկված էին ձայնի իրավունք ունեցող գյուղական բնակչության 95,0 տոկոսը։

Գյուղացիներին ցույց տված բաղմակողմանի օգնության շնորհիվ, ինչպես արդեն ասել ենք, մեծ չափով պակասեց ցանքը, անասուններ, գյուղատնտեսական ինվենտար չունեցող

---

1 «Խորհրդային Հայաստան», 1 հոկտեմբերի 1929 (առաջնորդող հոդվածը)։

2 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, դ. 499, թ. 54—57։

անտեսությունների թիվը։ Միջակ գյուղացիությունը ավելի ու ավելի էր դառնում գյուղի կենտրոնական դեմքը, չնայած չքավոր անտեսությունների թիվը շարունակում էր մնալ բավականին մեծ։ Նման վիճակը պետք է բացատրել ընդհանրապես Հայաստանի գյուղատնտեսության առավել հետամնացությամբ։

Պարապայի XV համագումարից հետո ավելի է ամրապնդվում չքավորների, ինչպես և միջակների քաղաքական դիրքը, նրանք ավելի են համախմբվում դասակարգային պայքարում, ամրապնդվում է բանվոր դասակարգի դաշինքը նրանց հետ։ Այդ գործում կարևոր դեր խաղաց չքավորական խմբերի կազմակերպումը (այդ մասին որոշում ընդունել էր պարապայի XIV կոնֆերենցիան 1925 թ.), որը Հայաստանում սկսվում է 1926 թ.։ Գյուղում ավելի ամրապնդվեցին նաև սովետական, պարապական և կոմերիտական կազմակերպությունները։ 1929 թ. անցկացված զտումը նրանց դարձրեց ավելի մարտունակ՝ գյուղի սոցիալիստական վերափոխումը իրագործելու համար։ Ուժեղացան նաև Հողանտառ միության կազմակերպությունները, որոնց մեջ 1929 թ. հունվարի 1-ի դրությամբ ընդգրկված էին ավելի քան 12.500 բատրակներ, ինչպես և հովիվներ[1]։ Աշխատավոր գյուղացիների քաղաքական կազմակերպման գործում պարապական օրգանների և կազմակերպությունների հետ միասին զգալի դեր խաղացին նաև «Մաճկալ», «Բատրակ» թերթերը և մամուլի մյուս օրգանները։

Գյուղացիներին կոլտնտեսությունների կողմը գրավելու և գյուղի սոցիալիստական վերափոխումը նախապատրաստելու գործում կարևոր դեր են խաղացել առաջին սովխոզները և կոլտնտեսությունները։

Սովխոզները, որպես օրինակելի սոցիալիստական ձեռնարկություններ, պրակտիկ կերպով ապացուցում էին խոշոր սոցիալիստական տնտեսությունների առավելությունը և միա-

---

[1] Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 4, գ. 917, թ. 249։

ժամանակ գյուղացիներին ցույց էին տալիս տեխնիկական, ագրոնոմիական և այլ օգնություն։

1929 թ. բեկման տարի էր նաև Հայաստանի սովխոզային շինարարության զարգացման բնագավառում։ Հողժողկոմատի Գյուղատնտեսական տրեստի հիշյալ տարվա հաշվետվության մեջ կարդում ենք. «1929 թ. շրջադարձային տարի էր Հայաստանի սովխոզային շինարարության մեջ։ Մինչև հաշվետու տարին սովխոզների կազմակերպման վերցրած տեմպը չէր համապատասխանում գյուղատնտեսության վերակառուցման տեմպին։ Սովխոզները գյուղատնտեսության վերակառուցման բազան են, բայց նրանք կարող են դառնալ այդպիսին այն դեպքում, եթե կազմակերպվեն և հենվեն էներգետիկ ուժերի (տրակտորիզացիա, էլեկտրիֆիկացիա և այլն) մաքսիմալ օգտագործման վրա։ Հաշվետու տարվանից Գյուղտրեստը լայնորեն խնդիր է դրել՝ հասնել նշված նպատակին, չնայած նյութական սուղ հնարավորություններին»[1]։

Ինչպես ցույց են տալիս փաստերը, 1929 թ. սկսած Հողժողկոմատը վճռական շրջադարձ է կատարում դեպի սովխոզների զարգացումը։ 1928—1929 թթ. Գյուղտրեստի կապիտալ ներդրումների գումարը կազմեց 1.550 հազար ռուբլի, որից ավելի քան 1.250 հազար ռուբլին երկարատև վարկեր էին[2]։ Այդչափ գումար սովխոզներին երբեք չէր հատկացվել։ Դա հնարավորություն տվեց կազմակերպելու երեք նոր՝ խոշոր սովխոզներ, ձեռք բերելու տրակտորներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ, ավելացնել վարելահողերի և այգիների տարածությունը, գնել անասուններ և այլն։

1929 թ. Գյուղտրեստի մեջ ընդգրկված էին ութ սովխոզ, որոնց հատկացված հողատարածությունը հասնում էր մոտ 49.000 հեկտարի, այդ թվում 8650 հեկտար վարելահող, 1928 թ. 247 հեկտարի դիմաց։ 3-րդ սովխոզում տնկվեց մի քանի տասնյակ հեկտար խաղողի այգի, ստեղծվեց պտղաբուծական խոշոր տնկարան։ Զգալի չափով բարձրացավ

---

[1] Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 150, թ. 1։

[2] Նույն տեղում, թ. 6։

սովխոզների տեխնիկական զինվածությունը։ 1929 թ. բոլոր սովխոզները միասին ունեին 24 տրակտոր, 1928 թ. հնգի դիմաց, 45 շարքացան, նախորդ տարվա 9-ի դիմաց, երեք կալսիչ և այլն։

Նյութական-տեխնիկական բազայի ընդլայնումը հնարավոր դարձրեց մեծացնելու սովխոզների ագրոկուլտուրական գործունեությունը, գյուղացիների մեջ նրանց կողմից տարվող աշխատանքը։ Լենինականի, 3-րդ և մյուս սովխոզները օգնում էին շքավոր գյուղացիներին՝ վարելու նրանց հողակտորները և կատարելու ցանքը։ Եթե 1928 թ. գյուղացիների համար տրակտորով կատարվել էր միայն 60 հեկտար վար, ապա 1929 թ. վարվեց և ցանվեց 400 հեկտար տարածություն։ Վերջին տարում անասնաբուծական սովխոզներում կազմակերպվեց երեք բեղմնավորման կայան։ Երկու տարվա ընթացքում գյուղացիական տնտեսություններին բաց է թողնվել 57 ցեղական ցուլ, 90 ցեղական խոզ, ավելի քան 300 փութ զանազան տեսակավոր սերմեր, նրանց համար կալսվել է 85 տոննա հացահատիկ, զտվել է 80 տոննա սերմ և այլն։ Միայն 1929 թ. բաժանվել են 40 հազար զանազան տնկիներ, խաղողի 51 հազար մատ[1]։

Որոշ սովխոզներում կազմակերպվել էին մեքենայական վարձութակետեր, որոնք նպաստավոր պայմաններով առաջին հերթին օգնում էին շքավոր գյուղացիներին, նրանց տրամադրելով գութաններ, լծկաններ և այլն։ Սեմյոնովկայի, Յանրզի և Լոռու անասնաբուծական սովխոզներում գոյություն ունեին երեք տեխնիկապես կահավորված պանրագործարաններ, որոնք շվեյցարական և այլ ընտիր պանիրների համար վերամշակում էին ոչ միայն իրենց, այլ գյուղացիների կովերի կաթը, դրանով իսկ ազատելով շքավոր գյուղացիներին կուլակների շահագործումից։

Սովխոզների վերափոխիչ դերը միայն նրանց օգնությամբ կամ ագրոկուլտուրական աշխատանքներով չէր սահ-

---

[1] Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 150, թ. 1—7, և ֆ. 112, ց. 1, գ. 414, թ. 22։

մանավանդ։ Հարկավոր է նկատի ունենալ նաև այն, որ սովխոզների աշխատողների ճնշող մեծամասնությունը դեռևս մշտական բանվորները չէին։ Այնտեղ հիմնականում աշխատում էին մոտակա, ինչպես նաև ոչ մոտակա գյուղերի գյուղացիները, մասնավորապես սեզոնային աշխատանքների ժամանակ։ Անձամբ մասնակցելով կոլեկտիվ, կազմակերպված աշխատանքին, նրանք մի կողմից ընտելանում էին դրան, մյուս կողմից ակամա լինում կուլտուրական տնտեսության նվաճումներին։ Նրանց վրա հատկապես մեծ ազդեցություն էին գործում տրակտորները, որոնք հեշտացնում էին աշխատանքը, և գյուղացիներին աղատում ծանր հոգսից։ Ահա ինչ է գրել Թերթի թղթակիցը Լենինականի սովխոզից. «Գարնան ցանքագաշտի կենտրոնում երկու հսկայական կալող մեքենաներն աղմուկով աշխատում են տրակտորների շարժիչ ուժով և իրենց արդյունքով թե հիացնում և թե զարմացնում են աշխատող գյուղացի բանվորներին»[1]։

1929 թ. օգոստոս—սեպտեմբերին Հայաստանի մի խումբ գյուղացիներ, կոլտնտեսականներ և գյուղատնտեսության այլ աշխատողներ մեկնեցին էքսկուրսիա Հյուսիսային Կովկասի դեռևս այն ժամանակ հռչակավոր «Գիգանտ» հացահատիկային սովխոզը, որի ընդարձակ դաշտերում աշխատում էին տասնյակ տրակտորներ։ Սովխոզը այդ տարի պետությունը տվեց 400 հազար ցենտներից ավելի էժան հացահատիկ և մի քանի միլիոն ռուբլու շահույթ։ Հացահատիկի բերքատվությունը սովխոզում կազմում էր տասը ցենտներ։ Այդ նվաճումները, որոնց մասին պատմում էին էքսկուրսանտները, ուժեղ ազդեցություն էին գործում գյուղացիների վրա, համոզում և ապացուցում նրանց սոցիալիստական տնտեսությունների առավելությունը։

Այսպիսով, ՀամԿ(բ)Պ XV համագումարից հետո Հայաստանում նույնպես խոշոր գործ կատարվեց գյուղի սոցիալիստական վերափոխումը նախապատրաստելու ուղղությամբ։

---

[1] «Խորհրդային Հայաստան», 11 հոկտեմբերի 1929։

* * *

Առաջին կոլտնտեսությունները Հայաստանում կազմակերպվել էին դեռևս մինչև պարտիայի XV համագումարը։ 1928 թ. հունվարին դրանց թիվը հասնում էր ութի (արտել և կոմունա), որոնց մեջ ընդգրկված էր 389 տնտեսություն[1]։

Հայաստանի առաջին կոլեկտիվ տնտեսություններից է 1926 թ. կազմակերպված Ղամարլուի շրջանի (Երևանի գավառ) Յուվա գյուղի 26 կոմիսարների անվան գյուղատնտեսական արտելը։ Նույն թվականին կազմակերպվեց Խոտուրջուրի կոմունան։ 1927 թ. ստեղծվեցին Թաքիայի (Էջմիածնի գավառի Աշտարակի շրջան) և Լուկաշինի անվան (Ղազարապետի շրջան) կոմունաները։ 1928 թ. հունվարին կազմակերպվեցին Յուվայի, ապա՝ Արփայի (այժմ Արենի) կոմունաները։

Մինչև 1928 թ. փետրվար ամիսը արտադրական կոոպերատիվների ստեղծման և ղեկավարման հարցերով զբաղվում էին Հայգյուղկոոպի կազմակերպական բաժինը և Հողագործության ժողովրդական կոմիսարիատը։ Վերջինս հատկապես զբաղվում էր կոլտնտեսությունների հողաշինությամբ։ Փետրվար—մարտ ամիսներին Հայգյուղկոոպի սիստեմում ստեղծվում է հատուկ բաժին՝ Կոլտնտսեկցիա, որը սկսում է որոշ աշխատանք ծավալել կոլտնտեսություններ կազմակերպելու ուղղությամբ։

Զգալի թվով աշխատավոր գյուղացիներ, առաջին հերթին չքավորները, ցանկություն են հայտնում հրաժարվել արտադրության հին եղանակից և կազմակերպել կոլեկտիվ տնտեսություններ։ Էջմիածնի գավառի Սամաղարի շրջանի Ներքին Զեյվա գյուղի 16 չքավոր ընտանիքներ Հայգյուղկոոպի հասցեով ուղարկած իրենց դիմումում գրում էին. «Ի նրկատի ունենալով, որ Սովետական իշխանությունը Կոմսնխա-

---

[1] Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեության հաշվետվությունը (1926 թ. 1/10—1928 թ. 1/7), էջ 8, 14։

տական պարտության ղեկավարությամբ գնում է դեպի սոցիալիզմ և մեզ տանում է այդ ուղիով և այդ նպատակին հասնելու համար պետք է աշխատանքի և ուժերի կոլեկտիվացում կատարվի, գյուղատնտեսությունը տարվի նոր կատարելագործված ձևով ու մեքենայացման ենթարկվի, և լավ գիտակցելով, որ դա մեր դասակարգային շահերից է բխում, ուստի դիմում ենք Ձեզ և խնդրում ուղարկել Ձեր հրահանգիչը գյուղում կազմակերպելու հողօգտագործական կոլեկտիվ համաձայն կանոնադրության, որի համար ստորագրում ենք»[1]։ Կոլտնտեսության հիմնադիր ժողովը կայացավ 1928 թ. դեկտեմբերի 11-ին։

Նույնպիսի բովանդակությամբ որոշումներ ընդունեցին Դիլիջանի գավառի չքավորական խմբակների կոնֆերանսը, Էջմիածնի և Գառնիի չքավոր գյուղացիների ժողովները և ուրիշներ։

1928 թ. ընթացքում կազմակերպվեցին մի քանի տասնյակ գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվներ։ Հոկտեմբերի 1-ի տվյալներով նրանց թիվը հասավ 75-ի, ավելի քան 1.500 տնտեսությամբ, որը կազմում էր գյուղացիական բոլոր տնտեսությունների 0,9 տոկոսը։ Ըստ գավառների կոլտնտեսությունները բաշխվում էին. Երևանի գավառ՝ 32, Էջմիածնի՝ 15, Լենինականի՝ 16, Լոռի-Փամբակի՝ 3, Դիլիջանի՝ 4, Նոր Բայազետի՝ 5, Դարալագյազի՝ 6 և Զանգեզուրի՝ 4։ Կոլտնտեսությունների աշխարհագրական տեղաբաշխումը ցույց է տալիս, որ նրանք տարածվում էին հատկապես բարձր ապրանքային գյուղատնտեսական շրջաններում, որտեղ զարգացած էր կոոպերացիան, և ուժեղ էր դասակարգային շերտավորումը։ Ըստ տիպի կոլտնտեսությունները բաժանվում էին 64 գյուղատնտեսական արտելի, 6 հողօգտագործական ընկերության (ՏՕԶ) և 5 կոմունայի[2]։

---

[1] Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 42, գ. 946, թ. 25։

[2] ՀՍԽՀ Կառավարության հաշվետվության նյութեր (1926/27—1927/28), Երևան, 1929, էջ 134—135։

Կոլտնտեսությունների սոցիալական կազմը հիմնականում չքավորական էր (81,4 տոկոս), միջակները կազմում էին 18,6 տոկոսը։ Պարտիայի և կոմերիտմիության անդամները կազմում էին կոլտնտեսության անդամների 38,4 տոկոսը։

Կառավարությունը և պարտիան մեծ օգնություն էին ցույց տալիս առաջին կոլտնտեսություններին՝ արտադրության միջոցներով, վարկերով և կազմակերպչորեն։ Մինչև 1928 թ. հոկտեմբերի 1-ը 59 կոլտնտեսություն ստացան մոտ 336 հազար ռուբլի, հիմնականում երկարատև վարկ։

Կոլեկտիվ և անհատական տնտեսությունների համեմատությունը ցույց է տալիս առաջինների առավելությունները վերջինների նկատմամբ, որը կարևոր դեր էր խաղում չքավոր և միջակ տնտեսություններին կոլեկտիվացման կողմը գրավելու համար։ Բերենք մի քանի համեմատական տվյալներ։ 1928 թ. կոլտնտեսություններում տրակտորով վարվել է վարելահողերի 51,0 տոկոսը, իսկ անհատական տնտեսություններում՝ 2,3 տոկոսը, գութանով վարվել է համապատասխանաբար՝ 33,0 և 33,5, արորով՝ 16,0 և 64,2 տոկոսը[1]։ Նույն թվականին անհատական տնտեսությունների համեմատությամբ կոլտնտեսություններում ցորենի բերքատվությունը բարձր էր 1,4, իսկ բամբակինը՝ 1,6 ցենտներով[2]։ Դա նշանակում է, որ չնայած տեխնիկական ցածր մակարդակին, համատեղ աշխատանքը, այնուամենայնիվ, բարձրացնում է արտադրողականությունը։ 1928 թ. ստեղծված կոլտնտեսությունների, հատկապես օրինակելի տնտեսությունների պրակտիկան կարևոր նշանակություն ունեցավ մասսայական կոլտնտեսային շարժումը նախապատրաստելու գործում։

1928 թ. նոյեմբերի 17—21-ը տեղի ունեցավ կոլտնտեսությունների ռեսպուբլիկական առաջին համագումարը, որը ամփոփեց կոլտնտեսային շինարարության մեկ տարվա ար-

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 357, թ. 77—97 (հաշվետվություն 1928 թ. կոլեկտիվացման արդյունքների մասին)։

[2] «Գյուղատնտեսական կյանք», 1929, № 2, էջ 40։

դյունքները։ Համագումարը քննարկեց կոլեկտիվ տնտեսությունների շինարարության հերթական խնդիրները և Կոլտնտեսկցիայի գործունեությունը, կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման, վարձատրության և անբաժանելի միջոցների կուտակման հարցը[1]։ Համագումարը արձանագրեց, որ պարտիայի XV համագումարի որոշումները լայն արձագանք են գտել Հայաստանի աշխատավոր գյուղացիության մեջ. 1927 թ. 7-ի փոխարեն արդեն կար 80 կոլտնտեսություն։ Բացահայտվեցին կոլեկտիվացման և կոլտնտեսությունների աշխատանքների մեջ տեղ գտած թերությունները։ Համագումարը ցույց տվեց, որ միջակ գյուղացիների զգալի մասը թերահավատ է կոլեկտիվ տնտեսությունների հաջողությունների և առավելությունների նկատմամբ, ուստի հարկավոր էր միջակին, ինչպես նաև չքավորներին պրակտիկ կերպով ապացուցել կոլտնտեսությունների առավելությունը, ավելի ուժեղացնել քաղաքական և բացատրական աշխատանքը չքավորների ու միջակների շրջանում։ Համագումարը նշեց, որ Դարալագյազի, Դիլիջանի և Լոռի-Փամբակի գավառների մի շարք կոլտնտեսություններում խախտվել է աշխատանքի վարձատրության կարգը և պահանջեց խստիվ կիրառել վարձատրության՝ ըստ աշխատանքի քանակի ու որակի սկզբունքը, որպես նյութական շահագրգռության խթան։

Այնուհետև համագումարը մատնանշեց, որ «անխուսափելի պահանջ է դարձել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործի արագացումը», որի համար կան անհրաժեշտ նախադրյալներ։ Նկատի ունենալով կոլտնտեսային շարժման զարգացման հեռանկարները, համագումարը որոշում ընդունեց կազմակերպել Հայաստանի կոլեկտիվ տնտեսությունների միություն՝ Կոլտնտակենտրոն և ընտրեց Կոլտնտակենտրոնի Խորհուրդ, Վարչություն և Վերահսկիչ հանձնաժողով։

---

[1] Կոլեկտիվ տնտեսությունների Համահայաստանյան առաջին համագումարի որոշումները (17—21 նոյեմբերի, 1928), Երևան, 1929։

Կոլտնտեսությունների ռեսպուբլիկական համագումարը հավատարիացրեց ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեին, որ Սովետական Հայաստանի «Զբաղվեր ու միջակ գյուղացիությունը, պարտիայի լենինյան ղեկավարությամբ, մեր գյուղատնտեսությունը կոլեկտիվ տնտեսությունների միջոցով վերակառուցելու գործը կատարի մինչև հաղթական վախճանը»[1]:

Կոլտնտեսությունների ռեսպուբլիկական առաջին համագումարը, անտարակույս, կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսային շարժման հետագա ծավալման գործում:

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը և կառավարությունը մի շարք միջոցառումներ մշակեցին կոլեկտիվացումը արագացնելու և նրան օգնելու համար: ՀԿ(բ)Պ ԿԿ-ի Նախագահությունը 1928 թ. դեկտեմբերին որոշում ընդունեց կոլտնտեսությունների հողաշինարարության մասին, պարտավորեցնելով պարտիայի գավառային կոմիտեներին ղեկավարելու և արագացնելու այդ աշխատանքները: Հայկական ԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը նույն թվականի դեկտեմբերի 15-ին որոշում ընդունեցին «Կոլեկտիվ տնտեսությունների մասին»: Այդ որոշման համաձայն կոլտնտեսություններին հանձնվեցին պետական օրգաններից նրանց ստացած գույքը և շինությունները, կոլեկտիվների տերիտորիայի վրա գտնվող արտադրական և օժանդակ ձեռնարկությունները: Կոլտնտեսությունների հողաշինարարությունը կատարվելու էր առաջին հերթին և ձրի: Նրանց արտոնություն էր տրվում վարկեր, գյուղատնտեսական մեքենաներ ստանալու համար:

1929 թ., ինչպես արդեն ասել ենք, նշանավոր դարձավ նաև գյուղատնտեսության սոցիալիստական զարգացման տեսակետից: Այդ թվականին, հատկապես տարվա երկրորդ կեսին, գյուղացիների հոսանքը դեպի կոլտնտեսությունները հետզհետե սկսեց ուժեղանալ և մասսայական բնույթ կրել:

---

1 «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1928:

Դա արմատական բեկում էր գյուղի սոցիալիստական վերափոխման մեջ։ Դա տեղի էր ունենում այն բանի շնորհիվ, որ միջակ գյուղացին, հաղթահարելով իր տատանումները, անցավ կոլտնտեսությունների կողմը։ Կոլեկտիվացման վերելք սկսվեց նաև Հայաստանում։

1929 թ. գարնանացանի կամպանիայի ժամանակ բազմաթիվ բանվորական և կոմերիտական բրիգադներ մեկնեցին գյուղերը։ Նրանք օգնում էին գյուղացիներին և կոլտնտեսություններին՝ վերանորոգելու գյուղատնտեսական գործիքները, գյուղացիներին բացատրում կոլեկտիվ աշխատանքի և տնտեսաձևի ճշանակությունն ու առավելությունները։ Կազմակերպվեց «Քաղաքի և գյուղի զոդման ընկերություն», որը նյութական միջոցներ էր հավաքում՝ մասնավորապես տրակտորներ գնելու համար, ծավալում էր շեֆական աշխատանքը և այլն։ Ալավերդու և Ղազիանի բանվորները, որոնք հիմնականում ծագումով գյուղացի էին և կապված էին գյուղի ու հողագործության հետ, կոլեկտիվացման լավագույն պրոպագանդիստներն էին։

«Արարատ» տրեստի բանվորական բրիգադները մի քանի անգամ եղան Ղամարլուի շրջանի Գյոդաքլու շեֆ գյուղում. իրենց հետ տանելով գրականություն, թերթեր, նրանք կազմակերպում էին զեկուցումներ՝ այգիների մշակության, կոլեկտիվացման և այլ հարցերի մասին։ Հայգյուղկոոպի բրիգադները չորս ամսվա ընթացքում 12 անգամ եղան Զարբախ գյուղում, նրան տրամադրելով երկու շարքացան մեքենա և այլն։ Հողագործության ժողկոմատը շեֆություն էր անում Ավան գյուղում, փոխադրողների Ավտոպրոմտորգի կոլեկտիվը՝ Ղամարլուի շրջանի Իմանշալու գյուղում (այժմ Միչյան) և այլն։ ՀԿ(բ)Պ Կենտկոմի որոշումներից մեկում ասված է. շեֆ աշխատանքների հետազոտումը պարզեց, որ որոշ նվաճումներ են ձեռք բերվել Երևանի և Լենինականի գավառներում, որը առանձնապես արտահայտվել է այս տարվա գարնանացանի ընթացքում շեֆ գյուղերում չքավորների վարը կազմակերպելու, շրջիկ արհեստանոցների միջոցով գյուղատնտեսական

գործիքները վերանորոգելու, ինչպես նաև կուլտուրական-լուսավորական աշխատանքների տարածման[1]։

Գարնանացանի կամպանիայի ժամանակ Հայաստանի կոմերիտմիությունը կազմակերպեց «բերքարշավ», որը զգալի արդյունքներ տվեց։ ՀԿԿՄ Կենտկոմի 2-րդ պլենումի (1929 թ. օգոստոս) նյութերում այդ առթիվ կարդում ենք. «Կոմերիտական բջիջների նախաձեռնությամբ կազմակերպվեցին մի շարք կոլխոզներ (Էջմիածնում, Լոռի-Փամբակում, Լենինականում և այլն)։ Գարնանացանի կամպանիայի ընթացքում բջիջները կազմակերպեցին գյուղատնտեսական մեքենաները վերանորոգող բանվորական բրիգադներ, որոնք, մեկնելով գյուղ, կարողացան վերանորոգել կոլխոզների, շքավոր և միջակ տնտեսությունների գյուղատնտեսական մեքենաները (Լենինականի դեպոն, Ալավերդու բանվորական բրիգադները, Երևանը, Զանգեզուրը և այլն)։ Կոլխոզների, շքավոր ու միջակ գյուղացիների գարնանացանի աշխատանքներին օժանդակելու համար կազմակերպվեցին շաբաթօրյակներ։ Մի շարք տեղերում սերմացուման կամպանիան ամբողջովին բջիջներն իրենց վրա վերցրին»[2]։

Վաղարշապատի (Էջմիածին) կոմերիտականների նախաձեռնությամբ կազմակերպված կոլտնտեսությունը պայքարում էր օրինակելի լինելու համար։ Այստեղ ամբողջ բամբակը ցանվեց շարքացանով, իսկ դաշտերը լրիվ պարարտացվեցին։ Կոմերիտական օրինակելի կոլտնտեսություն հիմնվեց նաև Աշտարակի շրջանի Փարպի գյուղում։ Էջմիածնի գավառի կոմերիտականները շաբաթօրյակից ստացած չորս հազար ռուբլի գումարը հատկացրին Ղուրդուղովի շրջանի չորս նորաստեղծ կոլտնտեսություններին օգնելու համար։

Զգալի չափով ավելացավ պետական օգնությունը, որի հիմնական նպատակն էր ավելացնել սոցիալիստական և

---

1 Տե՛ս ՄԱԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 390, թ. 58։
2 «Ավանգարդ», 9 օգոստոսի 1929։

անհատական տնտեսությունների ցանքատարածությունները, բարձրացնել բերքատվությունը և նպաստել նոր կոլտնտեսությունների կազմակերպմանը։ Միայն 1929 թ. գարնանացանի ժամանակ կոլտնտեսություններին, սովխոզներին և անհատներին բաց թողնվեց 17.292 փութ ցորեն և 23.500 փութ սերմացու գարի, 37.000 փութ ալյուր, 38 վագոն վարսակ և այլն[1]։ Բացի այդ, մեծ չափով ավելացան վարկերի գումարը, գյուղատնտեսական տեխնիկայի և մեքենաների մատակարարումը և այլն։ Գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման արհեստանոցներ էին կազմակերպվել և գործում էին Երևանում, Ղարաքիլիսայում (Արմավիր), Ղամարլուում (Արտաշատ), Վաղարշապատում (Էջմիածին) և Ստեփանավանում։

Այդ նույն ժամանակ շարունակվում էր ծավալվել կոլեկտիվացման շարժումը, կազմակերպվեցին տասնյակ նոր կոլտնտեսություններ։ Մեկ տարվա ընթացքում (1928 թ. հոկտեմբերից մինչև 1929 թ. հոկտեմբեր) ստեղծվեց 170 նոր կոլտնտեսություն, իսկ հների մեջ մտան բազմաթիվ նոր անդամներ։ 1929 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կոլեկտիվ տնտեսությունների թիվը հասնում էր 245-ի, որոնք տարածված էին Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում։

Բոլոր կոլտնտեսությունների մեջ հաշվվում էր 6300 տնտեսություն կամ գյուղի բոլոր տնտեսությունների 3,9 տոկոսը[2]։ Նախորդ տարվա համեմատությամբ կոլեկտիվների թիվը ավելացել էր 3,3 անգամ, նրանցում տնտեսությունների թիվը՝ ավելի քան չորս անգամ, իսկ ցանքատարածությունները՝ մոտավորապես վեց անգամ։ Միջակ գյուղացիների տեսակարար կշիռը կազմում էր 25,0 տոկոս, 1928 թ. 19,0 տո-

---

1 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 267, թ. 17—19 (ՀԿ(բ)Պ Կենտկոմի ինֆորմացիան գարնանացանի կամպանիայի ընթացքի մասին)։

2 1929 թ. կոլեկտիվացման արդյունքների մասին տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 22 (Կոլտնտկենտրոնի զեկուցումը ՀԿ(բ)Պ ԿԿ-ի 1929 թ. նոյեմբերյան պլենումում)։

կոսի դիմաց։ Իսկ յուրաքանչյուր կոլտնտեսությանը 19-ի փոխարեն ընկնում էր 28 տնտեսություն։

Սա ռեսպուբլիկայի կոլեկտիվացման համար բավականին բարձր տեմպ էր, չնայած բացարձակ արտահայտությամբ ցուցանիշները դեռ շատ մեծ չէին։

Կոլտնտեսություններից 139-ը գյուղատնտեսական արտելներ էին, որտեղ հողի և աշխատանքի հետ միասին հանրայնացվում էին նաև արտադրության հիմնական միջոցները, 89-ը՝ հողը համատեղ մշակող ընկերություն (ՏՕԶ), որտեղ հանրայնացվում էին միայն հողը և աշխատանքը, իսկ արտադրության միջոցները շարունակում էին մնալ որպես գյուղացու մասնավոր սեփականություն, և 7-ը՝ կոմունա (մնացած տասը կոլտնտեսությունների բնույթը անհայտ է)։

Ինչպես հետագայում նշեց ՀԿ(բ)Պ VII համագումարը (1930 թ. մայիս), մինչև 1929 թ. վերջերը մեզ մոտ կոլեկտիվացման ընթացքը եղել է նորմալ, սակայն թերագնահատվել են պարզ տիպի կոլտնտեսությունները՝ հողը համատեղ մշակող ընկերությունները (այդ մասին է վկայում այդ տիպի կոլտնտեսությունների փոքրաթիվ լինելը արտելների համեմատությամբ) և, ընդհակառակը, գերագնահատվել են կոմունաները[1]։

Զբաղվոր գյուղացիները և հատկապես միջակները ավելի ու ավելի էին համոզվում կոլեկտիվ տնտեսությունների և համատեղ աշխատանքի առավելությունների մեջ։ Որպես կանոն կոլտնտեսությունները տեխնիկապես համեմատաբար ավելի լավ էին զինված, չնայած ընդհանուր հետամնացությանը։ Վարը և ցանքը կատարվում էին ավելի կարճ ժամանակամիջոցում, բարձր էր բերքատվությունը։ Ահա մի քանի համեմատական տվյալներ։ 1929 թ. յուրաքանչյուր հազար հեկտար վարելահողին ընկնում էր. կոլտնտեսություններում՝ մոտ երեք տրակտոր, 42 դուբան, 13 շարքացան և 1,4 արոր, իսկ ամբողջ Հայաստանում՝ մոտ կես տրակտոր, 28 դուբան,

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 1, թ. 332։

էլես շարքացան, 95 արոր և այլն։ Շարքացանով ցանված էր կոլտնտեսությունների ցորենի ցանքատարածության 27,9 և բամբակի՝ 86,8 տոկոսը, իսկ Հայաստանում՝ 1,5 և 20,2 տոկոսը։ Կոլտնտեսություններում զտված ու ախտահանված էր սերմի կեսից ավելին։ Իսկ ամենակարևորը այն է, որ կոլտնտեսություններում մեկ հեկտարի հաշվով ցորենի բերքատվությունը բարձր էր 1,6, բամբակինը՝ 1,9 և խաղողինը՝ 8,9 ցենտներով։ 1929 թ. կոլտնտեսությունների ընդհանուր եկամուտը կազմեց ավելի քան 8,4 միլիոն ռուբլի, նախորդ տարվա մոտ 3,4 միլիոն ռուբլու դիմաց։ 1928 թ. կապիտալ ներդրումները (ներառյալ սեփական միջոցները) կազմեցին 1,4, իսկ 1929 թ.՝ ավելի քան 4,0 միլիոն ռուբլի։

1929 թ. հոկտեմբերի 13-ին ռեսպուբլիկայում նշվեց բերքի տոնը, որը առաջին անգամ տոնվեց որպես «Բերքի և կոլեկտիվացման օր»[1]։

Այդ տոնակատարության կապակցությամբ, որը նշվում էր միութենական բոլոր ռեսպուբլիկաներում, ԽՍՀՄ Կենտգործկոմի Նախագահության 1929 թ. սեպտեմբերի 18-ին ընդունված որոշման մեջ ասված է, որ նրա նշանակությունն է՝ կենտրոնացնել բոլոր աշխատավորների ուշադրությունը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման արմատական հարցերի վրա, ժողովրդական լայն մասսաների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ ստուգել կոլեկտիվացման և բերքատվության բարձրացման աշխատանքները, ինչպես նաև աշխատավորների ավելի լայն ներգրավումը հնգամյա պլանի կենսագործման պրակտիկ աշխատանքներում[2]։

Տոնակատարությունը կարևոր դեր խաղաց կոլտնտեսությունների առավելությունը բացատրելու և կոլեկտիվացման հետագա զարգացման տեսակետից։ Գավառային կենտրոն-

---

1 Այդ առթիվ հաշվետվությունները տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 535, թթ. 9,12, 19, 23—25։

2 Տե՛ս ЦГАОР и СС СССР, ф. 3316, оп. 22, д. 1 05, л. 1.

ներում և շատ գյուղերում կազմակերպվեցին գյուղատնտեսական ցուցահանդեսներ, որտեղ էքսպոնատներով ներկայացված էին սոցիալիստական և անհատական սեկտորները։ Վաղարշապատի շրջանային ցուցահանդեսում մասնակցում էին տասնմեկ կոլտնտեսություն, որոնցից ինն արժանացան մրցանակի (գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ, գյուղատնտեսական հիվանդությունների բուժիչ նյութեր և այլն)։

Մեծ հաջողություններ էին ձեռք բերել Վաղարշապատի «Անասուած», Վերին Թուրքմենլուի (այժմ Ապագա), Վերին և Ներքին Խաթունարխների կոլտնտեսությունները։ Սվաճած հաջողությունների համար Հայաստանի «Անասուած», «Համերաշխություն» (գյուղ Արրաթ), Նորապատի (Էջմիածնի գավառ), «Պատանի» (Նոր Բայազետի գավառ), «Նոր կենցաղ» (գյուղ Օջախղուլի, Լենինականի գավառ, այժմ Առափի) Նովոմիխայլովկայի (այժմ Հանքավան, Ախուրյի շրջանում) և Հաջիղարայի (Լոռի-Փամբակի գավառ, այժմ Լենինական) կոլտնտեսությունները արժանացան «Զարյա Վոստոկա» թերթի մրցանակին[1]։

«Բերքի և կոլեկտիվացման օրը» Երևանի գավառի բոլոր կոլտնտեսություններում կայացան ընդհանուր ժողովներ, լավեցին կոլտնտվարչությունների նախագահների զեկուցումները իրենց աշխատանքների արդյունքների մասին։ Այդ ժողովներում 180 միջակ և չքավոր տնտեսություններ դիմեցին կոլտնտեսությունների մեջ ընդունվելու համար։

Միայն մեկ օրվա ընթացքում Լենինականի գավառում կազմակերպվեց հինգ գյուղատնտեսական արտել, իսկ վեց կոլտնտեսությունների անդամների թիվը 96-ից հասավ 190-ի։ Գավառի 174 գյուղերում կայացան հանդիսավոր ժողովներ և 28 կոլտնտեսություններում՝ հաշվետու ժողովներ։ Բերքի և կոլեկտիվացման օրը Լոռու գավառում կազմակերպվեց տասը նոր կոլտնտեսություն, այդ թվում Ստեփանավան, Վարդա-

---

[1] Տե՛ս «Заря Востока», 2 июня 1929.

բլուր, Վարանցովկա (Կալինինո), Յաղուբլու (Մեղրուտ) և այլ գյուղերում, որոնց մեջ ընդգրկված էին 215 չքավոր և միջակ տնտեսություններ։

Այդ օրը Բամբակմիությունը կոոպերացրեց 275 տնտեսություն, մուծելով նրանց մուտքի գումարները։

Տոնի կապակցությամբ մի քանի բանվորական բրիգադներ եղան տարբեր գյուղերում, օգնելով կատարելու ամենաբազմազան աշխատանքներ։ Ձեթ-օճառ գործարանի 54 բանվորներ օգնեցին Նորագավթի կոլտնտեսականներին՝ հավաքելու բամբակը։ Իմանշալու (Մխչյան) գյուղում բանվորները աշխատում էին կոլտնտեսության դարբնոցում, նորոգելով նրա գործիքները։ Իսկ «Արարատ» տրեստի բանվորների մի մասը աշխատում էր Գյոդաքլու և Նորագավթի գյուղերում։ Երևանի պահածոների և ծխախոտի գործարանների, «Արարատ» տրեստի, Հայպոլիգրաֆի տպարանի և ռեսպուբլիկայի մյուս բանվորական կոլեկտիվները երկու կամ ավելի ժամ լրացուցիչ աշխատելով, գումարը հատկացրին գյուղի համար տրակտորներ ձեռք բերելու և կոլեկտիվացման ֆոնդին։

Կոլեկտիվացման համար աշխատավոր գյուղացիության ծավալած շարժումը ամրապնդվում և օժանդակություն էր ստանում բանվոր դասակարգի կողմից։ Դա բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման վառ արտահայտությունն էր։

Կոլտնտեսային շարժումը ռեսպուբլիկայում համաչափ չէր ընթանում։ Կոլեկտիվացման տեմպը բարձր էր այն շրջաններում, որտեղ դրա համար ավելի նպաստավոր պայմաններ կային։ 1929 թ. հոկտեմբերին եղած 245 կոլտնտեսությունները բաժանվում էին. Երևանի գավառում՝ 48,0 տոկոսը, Լոռու գավառում՝ 22,0, Լենինականում՝ 14,0, Սևանում՝ 12,0 և Զանգեզուրի գավառում՝ 4,0 տոկոսը։ Բոլոր տնտեսությունների մոտավորապես կեսը նույնպես պատկանում էր Երևանի գավառին։ Ըստ գյուղատնտեսական զոնաների՝ բարձր ապրանքային կուլտուրայի՝ բամբակացան շրջաններում գտնվում էր կոլտնտեսությունների 40,0, իսկ հա-

մեմատաբար ցածր ապրանքայնություն ունեցող անասնապահական շրջաններում՝ 15,5 տոկոսը։

Պատկերը ավելի ամբողջացնելու համար բերենք տնտեսությունների կոլեկտիվացման տոկոսը ըստ գավառների. Երևան՝ 9,7, Լոռի՝ 3,8, Նոր Բայազետ՝ 3,1, Լենինական՝ 2,5 և Զանգեզուր՝ 1,4։ Երևանի գավառում առաջավոր էր Վաղարշապատի, Հրազդանի, Ղամարլուի, Աշտարակի, Բալինի շրջանները։

Շրջաններից, որպես ավելի առաջավոր, կանգ առնենք Ղուրդուղուլիի օրինակի վրա։ Այստեղ 1928 թ. հուլիսին կար ութ կոլտնտեսություն, 279 տնտեսությամբ, այդ թվում Լուկաշինի անվան կոմունան, 175 տնտեսությամբ։ 1929 թ. մայիսի 1-ի դրությամբ կոլտնտեսությունների թիվը հասավ 13-ի, նրանցում տնտեսությունների թիվը՝ 606-ի։ Դրան հաջորդող երկու և կես ամսվա ընթացքում կոլտնտեսությունների թիվը ավելացավ իննով։ Բոլոր 21 կոլտնտեսություններում հաշվվում էր 930 տնտեսություն (օգոստոսի 15-ի դրությամբ)։ Իսկ նոյեմբերի 1-ին նույնքան կոլտնտեսություններում կար 1229 ընտանիք, վեց ամսվա ընթացքում (մայիսի 1-ի համեմատությամբ) ավելանալով 623 տնտեսությամբ կամ ավելի քան երկու անգամ։ Կոլեկտիվացման բարձր ցուցանիշներ ունեին Մեծ Շահրիար (ընդամենը 115 ընտանիք, այժմ Նալբանդյան), Աղջարխ (79 ընտանիք, Արևիկ), Զաֆարաբաղ (76 ընտանիք, Գետաշեն), Սարդարապատ (89 ընտանիք, Հոկտեմբերյան), Արմթլու (51 ընտանիք, Տանձուտ) գյուղերը, իսկ ամռանը ստեղծված Քյալաքարխի (Շենավան) գյուղատնտեսական արտելի մեջ միանգամից ընդունվեցին ավելի քան հարյուր ընտանիք[1]։ Այնպես որ հիշյալ գյուղերում կոլտնտեսության մեջ էին ընդգրկված գյուղացիների կեսը կամ կեսից ավելին։

[1] Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1619, թ. 32 (Ղուրդուղուլիի կոլտնտեսությունների խմբային միության ավյալները կոլեկտիվացման ընթացքի մասին)։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման նման պատկեր ունեին նաև Ղամարլուի, Վաղարշապատի և Հրազդանի շրջանների շատ գյուղեր:

Դա գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ծավալման, մասսայական կոլտնտեսային շարժման սկիզբն էր Սովետական Հայաստանում, որը սկսվեց 1929 թ. երկրորդ կեսին: Դա նշանակում էր, որ միջակ գյուղացիությունը արդեն մտնում էր կոլտնտեսություն, որ ավյալ գյուղերում կամ շրջաններում սկիզբ էր առնում համատարած կոլեկտիվացումը:

Իրենց փոքրածավալ լինելու, տեխնիկական ու ֆինանսական աղքատության, կադրերի անբավարարության կամ բացակայության և մյուս պատճառներով կոլեկտիվ տնտեսությունները մեծ դժվարությունների էին հանդիպում իրենց աշխատանքները կազմակերպելու բնագավառում: Այդ դժվարությունները հաղթահարելու նպատակով մի քանի կոլտնտեսություններ միավորվում էին արտադրական խմբային միության մեջ, որը զբաղվում էր արտադրության միջոցներ հայթայթելով, վարկեր ստանալով, կոլեկտիվների գործունեությունը պլանավորելու և այլ հարցերով: 1929 թ. հուլիսին Հայաստանում կար ութ խմբային միություն, 74 կոլտնտեսությամբ, այդ թվում Ղամարլուի խմբային միությունը միավորում էր 15, Ղուրդուղուլի խմբային միությունը՝ 13 և Նոր Բայազետի միությունը՝ 8 կոլտնտեսություն:

1929 թ. նոյեմբերի 16-ին Հայկական ԽՍՀ Կենտգործկոմը և ժողկոմխորհը որոշում ընդունեցին «Կոլեկտիվ տնտեսությունների սիստեմն ամրապնդելու միջոցների մասին», որը հրապարակվեց մամուլում: Այդ որոշումը կարևոր նշանակություն ուներ կոլեկտիվացման ծավալման համար և սահմանում էր կոլտնտեսային կարգի և գործունեության որոշ կողմերն ու հիմունքները, և որոշ առումով հանդիսանում էր գյուղատնտեսական արտելի կանոնադրություն:

Գյուղի սոցիալիստական վերակառուցման բնագավառում ձեռք բերած հաջողությունների ամփոփմանը և հետա-

դա խնդիրներին էր նվիրված նոյեմբերի 18—20-ը կայացած ՀԿ(բ)Պ Կենտկոմի պլենումը։ Պլենումը քննարկեց ռեսպուբլիկայի գյուղատնտեսության զարգացման և սոցիալիստական վերակառուցման հարցը, գյուղատնտեսական կոոպերացիայի հերթական խնդիրները, գյուղատնտեսական վարկի դերը, սոցիալիստական վերակառուցման գործում, և կոլտնտեսությունների շինարարության հերթական խնդիրները։

Պլենումն արձանագրեց, որ «կոլտնտեսային շարժումը, որը սկզբում գլխավորապես շքավորական շարժում էր և այն էլ շքավորության մի մասի, այժմ արդեն դարձել է շքավոր և միջակ գյուղացիության լայն մասսայական շարժում։ Միջակ գյուղացին, գյուղատնտեսության կենտրոնական դեմքը, արդեն պոկվում է կապիտալիստական ուղիով զարգանալու ճանապարհից և հարում է կոլեկտիվացմանը... Մենք ընդհուպ մոտենում ենք ոչ միայն առանձին գյուղերի, այլև ամբողջ շրջանների լրիվ կոլեկտիվացմանը»[1]։

Պլենումը վեր հանեց մի շարք թերություններ և միջոցառումներ մշակեց կոլտնտեսությունների ամրապնդման և կոլտնտեսային շարժման հետագա զարգացման համար։

ՀԿ(բ)Պ Կենտկոմի պլենումը հաջորդեց ՀամԿ(բ)Պ Կենտկոմի Նոյեմբերյան պլենումին, որը քննարկեց մի շարք կարևոր հարցեր, այդ թվում «Դիրեկտիվներ ժողովրդական տնտեսության 1929/30 թվականի կոնտրոլ թվերի մասին», «Կոլտնտեսային շինարարության հանրագումարները և հետագա խնդիրները», «Ժողովրդական տնտեսության կադրերի մասին»։ Պլենումի ընդունած որոշումները մեծ դեր խաղացին սոցիալիստական շինարարության հետագա ծավալման գործում։

Պլենումը ընդունեց հնգամյակի երկրորդ տարվա սաուգիչ թվերը, որոշեց կազմակերպական և քաղաքական բավականաչափ փորձ ունեցող 25 հազար բանվոր ուղարկել գյուղ՝ կոլեկտիվացման աշխատանքները կազմակերպելու համար։

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 22, թ. 114։

Այսպիսով, ինչպես ամբողջ Սովետական Միության, այնպես էլ Սովետական Հայաստանի գյուղատնտեսության զարգացման մեջ 1929 թ. դարձավ արմատական բեկման տարի:

* * *

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ընդարձակումը սկսված այդ բեկումը նախապատրաստվեց Սովետական պետության և Կոմունիստական պարտիայի քաղաքականությամբ: Աշխատավոր գյուղացիությունը աստիճանաբար և անձամբ համոզվեց տնտեսության սոցիալիստական ձևերի առավելության մեջ:

Լենինյան կոոպերատիվ պլանի հիման վրա աշխատավոր գյուղացիներին սոցիալիստական շինարարության մեջ ընդգրկելու, համատարած կոլեկտիվացումը նախապատրաստելու գործում կարևոր դեր խաղաց ՀամԿ(բ)Պ XV համագումարը, որը որոշում ընդունեց գյուղի սոցիալիստական վերակառուցումը ծավալելու մասին: 1928—1929 թթ. մեծ աշխատանք կատարվեց այդ վերակառուցումը ապահովելու և նախապատրաստելու համար: Մոտավորապես երկու տարվա ընթացքում ռեսպուբլիկայում մի քանի հազար գյուղացիական նոր տնտեսություններ ընդգրկվեցին տարբեր գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների մեջ: Նրանց շուտով հետևեցին բազմահազար չքավոր և միջակ տնտեսություններ:

1930 թ. սկզբին արդեն զգալի թվով գյուղացիական տնտեսություններ էին ընդգրկվել նաև կոլտնտեսությունների մեջ: Միայն 1929 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Հայաստանում կազմակերպվեց 75 նոր կոլտնտեսություն[1]:

Սակայն աշխատավոր գյուղացիների կամավոր կոլտնտեսային շարժումը 1930 թ. հունվարից վերածվեց վերևից դեկրետավորված և հարկադրական կոլեկտիվացման: Բուլ

---

1 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 221, թ. 24:

տրվեցին պարտիայի քաղաքականության և կոլեկտիվացման լենինյան կամավորության սկզբունքի կոպիտ խախտումներ և սխալներ։ Չնայած ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի՝ «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարության պետության կողմից օգնության ցույց տալու միջոցառումների մասին» որոշմանը, որի համաձայն Սովետական Միության մի շարք շրջաններ, ինչպես Մոսկվայի մարզը, Միջին Ասիան, Անդրկովկասը, այսինքն նաև Հայաստանը, գյուղատնտեսության կոլեկտիվացումը կարող էին ավարտել մինչև հնգամյակի վերջը, ՀԿ(բ)Պ Կենտկոմը որոշեց արդեն առաջիկա (1930 թ.) գարնանը համատարած կոլեկտիվացումը ավարտել ռեսպուբլիկայի մի շարք, այդ թվում դրա համար բոլորովին անպատրաստ լեռնային և այլ շրջաններում, իսկ ամբողջ Հայաստանում՝ սահմանված ժամկետից ավելի շուտ։ Այդ բոլորի հետևանքով, մոտ մեկ ամսվա ընթացքում՝ մինչև փետրվարի սկիզբը «կոլեկտիվացման» տոկոսը (ըստ տնտեսությունների) հասավ 66-ի, իսկ լեռնային Լոռու գավառում՝ 83-ի։ Ղարդուղուլի, Ղամարլուի, Հրազդանի, Էջմիածնի և այլ շրջաններում այն արդեն «ավարտված էր»[1]։

Նման սխալներ և աղավաղումներ տեղի ունեցան նաև մյուս ռեսպուբլիկաներում։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն բացահայտեց կոլեկտիվացման բնագավառում թույլ տված սխալները և կոլեկտիվացումը դրեց առողջ ընթացքի մեջ։ Մարտ ամսից սկսած աստիճանաբար ուղղվեցին պարտիայի քաղաքականության ծռումները կոլեկտիվացման բնագավառում։

1930 թ. մայիսին կոլտնտեսությունների մեջ էին ընդգրկված Հայաստանի գյուղացիական տնտեսությունների 15 տոկոսը, կամ չորս անգամ ավելի տնտեսություններ՝ 1929 թ. հոկտեմբերի համեմատությամբ, կամ մոտավորապես այնքան, որքան նախատեսված էր հնգամյակի վերջին տարվա հա-

---

[1] Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ ՊԿԱ, ֆ. 128, գ. 1579, թ. 36։

մար։ 1930 թ. հունվարի 15-ի դրությամբ ռեսպուբլիկայում կար մոտ 400 կոլտնտեսություն, այդ թվում ավելի քան 330 գյուղատնտեսական արտել և մոտ 60 հողը համատեղ մշակող ընկերություն[1]։

ՀԿ(բ)Պ VII համագումարը ամփոփելով կոլեկտիվացման արդյունքները, արձանագրեց. «Պարտիայի խոշորագույն հաղթանակը կայանում է նրանում, որ հաշվետու շրջանում (1929 թ. հունվար—1930 թ. մայիս—Վ. Ղ.) նրան հաջողվեց բեկում կատարել գյուղի հիմնական մասսայի շրջանում դեպի գյուղի սոցիալիստական զարգացման ուղին»[2]։

Խորացնելով այդ բեկումը և ուղղելով թույլ տված սխալները, Հայաստանի Կոմունիստական պարտիան գլխավորեց կոլեկտիվացման քաղաքականության հաղթանակը և կուլակության լիկվիդացիան։

---

1 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1678, թ. 23։

2 Հայաստանի Կոմունիստական (բ) Կուսակցության 7-րդ համագումարի որոշումները, Երևան, 1930, էջ 4։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՃՆՇՈՒՄԸ

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումով դասակարգային պայքարը չի վերանում։ Իշխանությունից զրկված, բայց դեռևս ամբողջապես չտապալված շահագործող դասակարգերը և խավերը ավելի կատաղի կերպով են դիմադրում սոցիալիստական շինարարությանը, փորձելով վերականգնել իրենց կորցրած դիրքերը։ Ընդ որում, այդ դիմադրությունը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում ընդունում է նոր ձևեր ու մեթոդներ։ Խոսելով կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում դասակարգային պայքարի անխուսափելիության մասին և մերկացնելով օպորտունիստներին, Վ. Ի. Լենինը գրել է, որ այդ պայքարը «կապիտալի իշխանությունը տապալելուց հետո, բուրժուական պետությունը խորտակելուց հետո, պրոլետարիատի դիկտատուրան հաստատելուց հետո չի անհետանում (ինչպես երևակայում են հին սոցիալիզմի ու հին սոցիալ-դեմոկրատիայի գռեհիկները), այլ միայն փոխում է իր ձևերը, շատ տեսակետներից է՛լ ավելի կատաղի դառնալով»[1]։

---

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 29, էջ 477։

Դասակարգային պայքարը կարող է սրվել միայն սոցիալիստական շինարարության որոշակի ժամանակաշրջանում։ Անցման ժամանակաշրջանում, քանի դեռ լուծված չէ «ով-ում» հարցը, այն հարցը, թե ով ում կհաղթի՝ սոցիալիզմը կապիտալիզմին, թե կապիտալիզմը սոցիալիզմին, այդ երկուսի միջև պայքարը կենաց ու մահու հարց է։

Պրոլետարիատի դիկտատուրան բանվոր դասակարգի ձեռքին մի զենք է շահագործող դասակարգերի դիմադրությունը ճնշելու, նրանց լիկվիդացիայի ենթարկելու, սոցիալիզմի հաղթանակն ապահովելու համար։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան լիկվիդացիայի ենթարկեց խոշոր կապիտալիստներին և կալվածատերերին, խորտակելով նրանց քաղաքական իշխանությունը և զրկելով նրանց արտադրության միջոցներից։ Բայց շարունակում էին գոյություն ունենալ կուլակների դասակարգը, նեպմանները և այլ շահագործող խավեր, որոնց Սովետական իշխանությունը չէր կարող անմիջապես լիկվիդացիայի ենթարկել և որոնք սահմանափակման պայմաններում աշխուժանում էին նոր տնտեսական քաղաքականության շնորհիվ։

Սովետական իշխանությունը ստեղծում էր անհրաժեշտ պայմաններ քաղաքային և գյուղական բուրժուազիային ստիճանաբար արտամղելու, նրան սահմանափակելու, շահագործում և շահագործող դասակարգեր ծնող պատճառները իսպառ վերացնելու համար։ Սովետական իշխանությունը ստեղծում էր այնպիսի պայմաններ, «որոնց մեջ բուրժուազիան ո՛չ կարողանա գոյություն ունենալ, ո՛չ էլ նորից առաջանալ», մի խնդիր, առանց որի լուծման, ինչպես ասել է Վ. Ի. Լենինը, «դեռևս սոցիալիզմ չկա»[1]։

Սոցիալիզմի կառուցման առաջին հնգամյա պլանը, ինչպես ասել ենք, իրենից ներկայացնում էր կապիտալիստական

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 27, էջ 290—291։

տարրերի դեմ սոցիալիզմի հարձակման ծավալուն ծրագիր։ Սոցիալիստական ինդուստրացումը, գյուղատնտեսական և սպառողական կոոպերացիայի զարգացումը, կոլտնտեսությունների և սովխոզների շինարարության ծավալումը էլ ավելի էին խարխլում կապիտալիստական տարրերի գոյության հիմքերը մեր երկրում։ Շահագործող դասակարգերի մնացորդները, որոնք ավելի ու ավելի էին զգում իրենց մոտալուտ կործանման անխուսափելիությունը, ուժեղացնում էին դիմադրությունը, բոլոր միջոցներով պայքարում էին Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության քաղաքականության դեմ։

Պարտիայի XV համագումարից հետո, երբ ուժեղացվեց հարձակումը կուլակների դեմ, մեր երկրում սրվեց դասակարգային պայքարը, որը իր հերթին դժվարություններ ստեղծեց սոցիալիստական շինարարության համար։ Դասակարգային պայքարի սրումը 1928 թ. իր արտահայտությունը գտավ արդյունաբերության, մասնավորապես ածխարդյունաբերության մեջ բուրժուական մասնագետների վնասարարական գործունեության, կուլակների կողմից պետությանը հաց վաճառելու սաբոտաժի մեջ, որը տուրջ դժվարություններ ստեղծեց հացամթերումների բնագավառում, ինչպես նաև պարտիայի շարքերում աջ թեքման ուժեղացման մեջ և այլն։

1928—1929 թթ. դասակարգային պայքարը սրվեց նաև Սովետական Հայաստանում։

Սոցիալիստական շինարարությանը ավելի ուժեղ կերպով դիմադրում էր կուլակությունը, որը ամենարագամարդ և վերջին շահագործող դասակարգն էր երկրի ներսում։ Պարտիայի ու կառավարության քաղաքականության դեմ հանդես էին գալիս նէպմանները, օպոզիցիոներները, բուրժուա-նացիոնալիստական տարրերը։ Դասակարգային պայքարը սուր կերպով արտահայտվում էր հատկապես սովետների ընտրությունների, կոլեկտիվացման, հողաշինարարության շուրջը և այլն։

1928 թ. նոյեմբերի 3-ի թերթիր մի պաշտոնական փաստաթղթում կարդում ենք, որ ժողովրդական տնտեսության սոցիալիստական սեկտորի աճի հետ մեկտեղ աշխուժանում են նեպմանական բուրժուազիան և գյուղական կուլակությունը, սրվում է Սովետական Միության միջազգային դրությունը։ Այդ բոլորի հետ կապված ուժեղանում է կուլակների, դաշնակների և հակասովետական մյուս տարրերի դասակարգային պայքարը, որի մեթոդները խիստ տարբեր են[1]։

1929 թ. հունվարին «Խորհրդային Հայաստան» թերթը գրել է. «Պարտիայի XV համագումարի ուված լոզունգը գյուղի կապիտալիստական տարրերի վրա հարձակվելու մասին իր գործնական արտահայտությունը գտավ գյուղի սոցիալիստական վերակառուցման՝ կոլեկտիվացման ասպարեզում... Ենթարկելով սոցիալիստական սեկտորի հարձակման գյուղում դասակարգային պայքարը սրվում է։ Գյուղի կուլակությունը մեկուսացնելու... նպատակով տարվող քաղաքականությունը շատ հստակորեն պատճառներով ակտիվացրել է կուլակին, որը, վճռական պայքար մղելով մեր դեմ, շատ հաճախ հակահարձակման է դիմում, կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ։

Վերջերս մեր մի շարք գավառներից ստացվող լուրերը սովետների նախագահներին ու այլ աշխատողներին սպանելու, ծեծի ենթարկելու ու այլ դեպքերի մասին անժխտելիորեն ապացուցում են, որ կուլակը վճռել է ամեն կերպ դիմադրել ու խանգարել սոցիալիստական շինարարությանը»[2]։

1928—1929 թթ. սովետների ընտրական կամպանիայի ժամանակ կուլակները և գյուղի ու քաղաքի մյուս շահագործողները, որոնք Սովետական Կոնստիտուցիայի համաձայն զրկվում էին ձայնի իրավունքից, խիստ ուժեղացրին պայքարը սովետների, ընտրական հանձնաժողովների անդամների և սովետական ու պարտիական ակտիվ գործիչների դեմ, դիմելով ամեն մի միջոցի, որպեսզի խանգարեն կամ խափանեն

---

1 Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, գ. 861, թ. 22։

2 «Խորհրդային Հայաստան», 18 հունվարի 1929։

ընտրությունները, թուլացնեն բանվորների ու գյուղացիների դաշինքը կամ, զգալով, որ անզոր են դրան հասնել, հնարներ էին որոնում չքավորներին ու միջակներին իրենց կողմը գրավելու, ընտրական հանձնաժողովներում և սովետներում իրենց կողմնակիցներին անցկացնելու կամ ընտրելու, ձայնի իրավունք ստանալու համար և այլն։ Ընտրությունների արդյունքների մասին ԱԽՖՍՀ Կենտգործկոմի Նախագահության բանաձևում Անդրկովկասում դասակարգային պայքարի սրման մասին, որը, ինչպես վկայում են փաստերը, վերաբերում է նաև Հայաստանին, ասված է, որ 1928—1929 թթ. սովետների վերընտրությունները անցան սրվող դասակարգային պայքարի պայմաններում։ Գյուղում կուլակները և քաղաքում բուրժուա-նէպմանական տարրերը կատաղի դիմադրություն ցույց տվեցին։ Կուլակները և քաղաքի կապիտալիստական տարրերը նախ և առաջ փորձեցին ճնշում գործադրել ընտրողների որոշ մասի վրա՝ միջակների հետ չքավորների դաշինքը ջլատելու և դրանով ընտրությունների ընթացքի և արդյունքների վրա ազդելու համար։ Կազմակերպական-ագիտացիոն աշխատանքի, սովետների հասցեին տարածած պրովոկացիայի, ստի ու զրպարտության հետ միասին հիշյալ տարրերը կանգ չէին առնում սովետական աշխատողների, չքավոր և բատրակ ակտիվիստների դեմ գործադրվող տեռորի առաջ։ Կուլակների և բուրժուա-նէպմանական տարրերի այդ փորձերը արժանի հարված ստացան բանվորների և աշխատավոր գյուղացիների լայն մասսաների կողմից, որոնք, մերկացնելով նրանց գործունեությունը, չեզոքացրին վերջիններին և հաջողությամբ ավարտեցին սովետների վերընտրական կամպանիան[1]։

Բերում ենք այդ միտքը հաստատող մի քանի փաստ։

Էջմիածնի գավառի Օշական, Սամադար, Սարդարապատ, Նոր Բայազետի գավառի Զոլախաչ, Զորագյուղ, Վերին Ագիտան (Վերին Գետաշեն), Երևանի գավառի Ներքին Շենգավիթ և մի շարք այլ գյուղերում կուլակները հավաքվում

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՈՍՇ ՊԿԱ, ֆ. 112, գ. 519, թ. 3։

էին գաղտնի ժողովների, նախապատրաստում էին սովետների անդամների իրենց թեկնածությունները և միջոցներ էին որոնում նրանց ընտրել տալու համար։ Ընտրական իրավունքից չզրկվելու համար Երևանի գավառի մի շարք գյուղերում կուլակները թաքցնում էին հարկման առարկաները, ազատվում էին բատրակներից, բաժանվում էին մի քանի տնտեսությունների և այլն։ Կամ, նյութապես օժանդակելով, փորձում էին կաշառել իրենց բատրակներին, չքավոր տնտեսություններին, որպեսզի վերջիններս պաշտպանեն իրենց նախատեսած թեկնածությունները կամ, եթե հաջողվի, ստանալ ձայնի իրավունք։ Զանգիբասարի շրջանի որոշ գյուղերում կուլակային տարրերին հաջողվել էր ընկնել ընտրական հանձնաժողովների և ընտրական ցուցակների մեջ։ Նրանց վռնդելուց հետո միայն այդ գյուղերում անցկացվեցին ընտրությունները։

Օգտագործելով Սովետական իշխանության դժվարությունները, կուլակները պրովոկացիոն լուրեր էին տարածում, թե նա մանուֆակտուրան և տարբեր արտոնությունները տալիս է միայն բատրակներին ու չքավորներին, իսկ միջակներին զրկում է դրանից, թե իբր Սովետական իշխանությունը ծառայողներին տալիս է բարձր աշխատավարձ՝ գյուղացիության հաշվին և այլն։ Նրանք օգտագործում էին նաև Սովետական Միության դեմ միջազգային իմպերիալիզմի կատարած պրովոկացիոն գործողությունները՝ մասսաներին վախեցնելու և Սովետական իշխանության հեղինակությունը գցելու համար։

Շամշադինի շրջանի Նորաշեն, Իջևանի շրջանի Բալա գյուղերում պատի թերթերի կողքին փակցվել էին սպառնալիքներով լի նյութեր։

Իր նպատակներին չհասնելով, գյուղական բուրժուազիան ավելի էր կատաղում և դիմում տեռորի։

1928 թ. դեկտեմբերի վերջերին Բասարգեչարի շրջանի Դաշքենդ գյուղում աղրբեջանցի մի խումբ կուլակներ դաշույնով գաղտնաբար սպանեցին գյուղսովետի նախագահ, կո-

մունիստ Հումբաթ Մահմեդովին։ 1929 թ. հունվարի 2-ի գիշերը Վարանդովկայի (Կալինինոյի) շրջանի Ղարախան գյուղում դաշնակցական ավելց ընտրական հանձնաժողովի անդամ, բատրակ Մուխտար Աբդուլաևը։ Էջմիածնի գավառի Սամադարի շրջանի Ալիբեքլու գյուղում կուլակները որոշել էին սպանել ենթարկել գյուղի կոմերիտական բջջի քարտուղարին և մի քանի ակտիվիստների, որոնք ընտրական հանձնաժողովի անդամ էին։ Նրանք խեղդեցին և ջրհորը նետեցին կոմերիտական, բատրակ Խաչիկ Պողոսյանին։ Ինչպես ապացուցեցին դատավարությունները, վերոհիշյալ սպանությունները կատարվել էին դասակարգային հողի վրա, և կուլակ-մարդասպանները ստացան արժանի պատիժ։

Բացի այդ, մահափորձեր կատարվեցին Ղարդուզուլի շրջանի Քյալաղարխ (Շենավան) և Լենինականի գավառի 2-րդ շրջանի Ղոլղաթ (Դեղանիստ) գյուղերի սովետների նախագահների, մի քանի ընտրական հանձնաժողովների անդամների և ուրիշ ակտիվիստների դեմ։

Կուլակ-ձայնազուրկների դիմադրությունը ճնշվեց և նրանք մեկուսացվեցին։ 1928—1929 թթ. սովետների վերընտրական կամպանիան ավելի համախմբեց շքավորներին և միջակներին, ամրապնդեց բանվոր դասակարգի դաշինքը նրանց հետ, բարձրացրեց սովետական իշխանության հեղինակությունը, աշխուժացավ սովետների աշխատանքը։

1928 թ., երբ կոլտնտեսությունները նոր էին կազմակերպվում, նրանց թիվը քիչ էր, կուլակները սահմանափակվում էին պայքարի համեմատաբար «խաղաղ» մեթոդներով։ Նրանք աշխատում էին գյուղացիության մեջ վարկաբեկել կոլեկտիվ տնտեսությունների գաղափարը, ստեղծված կոլտնտեսությունների հասցեին տարածել պրովոկացիոն լուրեր և այլն։ Իսկ երբ ամենուրեք կազմակերպվեցին կոլտնտեսություններ, կոլեկտիվացումը ավելի ու ավելի էր մասսայական դառնում և կուլակությունը զգում էր իր մոտալուտ կործանման անխուսափելիությունը, նրա դիմադրությունը ստիճանաբար սկսեց սուր և կատաղի բնույթ ընդունել։

Կոլտնտեսության անդամներին գրավոր և բանավոր ոգեշնչիչներ տալը մասսայական բնույթ էր ստացել։ «Մի տեղ ծեծում են կոլխոզի նախագահին, մյուս տեղում զանազան հակախորհրդային տարրեր դրում են համակներ կոլեկտիվի անդամներին, որպեսզի նրանք կաշառք վերցնելով քայքայեն կոլեկտիվների աշխատանքը։ Ամեն տեղ արտահայտվում է կռիվ, որ տանում է կուլակը մեր կոլեկտիվների դեմ»[1]։

Կուլակները աշխատում էին թափանցել կոլտնտեսությունների, նույնիսկ նրա ղեկավար օրգանների մեջ,—ասված է 1928 թ. նոյեմբերի մի պաշտոնական փաստաթղթում։ Որոշ տեղերում կուլակային տարրերը խցկվել են ղեկավար օրգանների մեջ, ինչպես Իջևանի և Ուզունխայայի (Դիլիջանի դավառ) կոլտնտեսություններում։ Կոլտնտեսությունների դեմ ելնում են դաշնակները, որոնք հենվում են կուլակության ու հոգևորականության վրա և տարածում են պրովոկացիա[2]։

Գյուղի շահագործողների պայքարը նոր ուժով սրվեց 1929 թ. դարնանացանի կամպանիայի ժամանակ։ Կուլակները և մյուս հակասովետական տարրերը, —ասված է ՀԿ(բ)Պ Կենտկոմի ինֆորմացիոն ամփոփագրում,—ակտիվորեն պայքարում և ամեն կերպ ձգտում էին խանգարել մեր աշխատանքները։ Մի շարք գյուղերում փակցվել էին թղթեր, որոնք կոչ էին անում «չընդարձակել ցանքատարածությունները, քանի որ կառավարությունը դա անում է հարկը ավելացնելու համար», «պետք չէ պարարտացնել հողը, քանի որ շուտով ձեզ համձնելու են կոլտնտեսություններին» և այլն։ Համզաշիման գյուղում (Լոռի-Փամբակի դավառ) կուլակները տարածում էին «Կեցցե աջ թեքումը, բոլորս օգնենք աջ թեքմանը» բովանդակությամբ թերթիկներ[3]։

---

1 «Խորհրդային Հայաստան», 20 նոյեմբերի 1928 (Հայաստանի կոլտնտեսությունների առաջին համագումարում ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղարի ճառից)։

2 Տե՛ս Հայկական ՍՍՀ ՀՕՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, գ. 861, թ. 37։

3 Տե՛ս Մի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 267, թ. 17։

1929 թ. կուլակներին հաջողվեց հրահրել մի շարք կոլտնտեսությունների խոտի և հացահատիկի դեղերը, ոչնչացնել անասունները և այլն, ինչպես, օրինակ, Դիլիջանի գավառի Դավեղ գյուղում, Իջևանում, Լոռի-Փամբակի գավառի Դսեղ (Թումանյան), Ղալաչա, Ղուրդուղուլիի շրջանի Մարգարա գյուղերում։ Նրանք հրդեհեցին Սիսիանի շրջանի Շաբի գյուղի կոլտնտեսային կալը, Պառավաքարի (Դիլիջանի գավառ) կոլտնտեսության գոմը, որտեղ վնասվեց 14 գլուխ անասուն։

Դասակարգային թշնամուն հաջողվել էր Սարգարապատի և Խանդամիրի կոլտնտեսությունների մեջ խցկել իր գործակալներին, նպատակ ունենալով քայքայել Արարատյան դաշտավայրի այդ ուժեղ կոլտնտեսությունները։ Սակայն այդ նրան չհաջողվեց։ Դրանից հետո թշնամին փոխեց իր տակտիկան։ Կուլակային տարրերը և տրոցկիստները ցանկություն հայտնեցին «կոլխոզ կազմակերպել», այդ նպատակի համար ցանկանալով հող ստանալ Այղրի լճի շրջակայքում։ Իրենց նպատակին չհասնելով, նրանք մահափորձ կազմակերպեցին այդ կոլտնտեսությունների նախագահների դեմ։ Կեղծ կոլտնտեսություններ կազմակերպելու փորձեր արվեցին նաև այլ տեղերում։

Մի քանի ամիս շարունակ կուլակները և տրոցկիստ-բուխարինականները աշխատում էին ներսից քայքայել Ճաթղռանի և Ղուզիդիդանի (Այդեշատ) կոլտնտեսությունները (Էջմիածնի գավառ)։

Հիշյալ գյուղերի պարտիական և կոմերիտական բջիջները մաքրեցին կոլտնտեսությունները թշնամական ու խորթ տարրերից, ջախջախեցին թշնամուն և ամրապնդեցին կոլտնտեսությունները։

Այն քանից հետո, երբ կուլակները զգալի վնաս հասցրին Դսեղի կոլտնտեսությանը, գումարվեց գյուղի բնակիչների բողոքի ժողով, որտեղ անմիջապես կոլտնտեսություն մտնելու ցանկություն հայտնեցին 24 շքավոր և միջակ տնտեսություններ։

Դեռևս 1928 թ. մերկացվեցին «Խոտուրջուր» կոմունայի

(Ախատայի շրջանի Կորյուխ Գյունեյ գյուղում) վնասարարները։ Այդ կոմունան կազմակերպվել էր 1925—1926 թթ.։ Կոմունայի և նրա ղեկավարության մեջ խցկվել էին մի խումբ ծպտված դաշնակցականներ, որոնք քայքայիչ աշխատանք էին տանում կոմունայի ներսում և նրանից դուրս, վատնելով պետության տրամադրած միջոցները։ 1928 թ. հոկտեմբերին այդ կոմունան ցրվեց և նրա փոխարեն ստեղծվեց նորը՝ «Ծաղկահովիտ» անունով։

1929 թ. սեպտեմբերից մինչև նոյեմբեր ժամանակաշրջանը, ըստ պաշտոնական աղբյուրների, բնորոշվեց կուլակության ակտիվության չտեսնված զարգացմամբ։ Նա հանդես էր գալիս հացամթերումների և կոլտնտեսային շինարարության դեմ։ Աճում էր կուլակային խմբերի թիվը։ Լոռի-Փամբակի դավառի Զայքենդ և Գյոլքենդ գյուղերում կազմվել էր քսան կուլակից բաղկացած մի խումբ, որը հակասովետական ագիտացիա էր մղում։ Խմբի անդամները մեկնում էին հարևան գյուղերը պրոպագանդայի համար։ Նրանք հրավիրում էին գաղտնի ժողովներ և չքավորներին հավաքագրելու փորձեր էին անում[1]։

Չնայած դասակարգային թշնամու փորձերին և համակրիմադրությանը, կոլտնտեսային շարժումը 1929 թ. շարունակվեց չտեսնված տեմպերով։ Գյուղի չքավոր և միջակ տնտեսությունները մասսայաբար ընդգրկվում էին կոլտնտեսությունների մեջ, մեկուսացնելով կուլակներին և ճնշելով նրանց դիմադրությունը։

Կուլակների դիմադրության ակտիվացման հետ կապված գյուղի չքավորների և բատրակների շահերի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով նոր խնդիրներ էին դրվում իշխանության տեղական օրգանների առջև։ ՀԽՍՀ Կենտգործկոմը և ԺողԿոմխորհը 1929 թ. հուլիսի 11-ին ընդունեցին որոշում՝ «Գյուղացիական տնտեսության մեջ վարձու աշխատանքի վերաբերյալ օրենքների գործադրության հսկողությունը ուժե-

---

1 Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀԱՍԾ ՊԿԱ, ֆ. 40/113, գ. 1125, թ. 33։

պայմանելու մասին», որտեղ նշված է, որ երբեմն տեղի են ունենում սովետական օրենքների խախտումներ. ինչպես՝ աշխատանքային պայմանագրերի բացակայությունը, վարձվողների, այսինքն բատրակների, աշխատավարձը ժամանակին չվճարելը, նրանց ոչ պիտանի բնակարան տրամադրելը, սոցիալական ապահովության ոչ լրիվ անցկացումը և այլն:

Հիշյալ խախտումները վերացնելու, բատրակների և շքավորների իրավունքներն ու շահերը լրիվ պաշտպանելու համար ՀԽՍՀ Կենտգործկոմը և Ժողկոմխորհը պարտավորեցրին գավառային գործադիր կոմիտեներին և գյուղական սովետներին խիստ հետևել գյուղում վարձու աշխատանքի վերաբերյալ Սովետական իշխանության օրենքների կենսագործմանը[1]:

Այդ որոշման հիման վրա Հայկական ԽՍՀ Արդարադատության ժողովրդական կոմիսարիատը հրապարակեց հրահանգ «Բատրակության և շքավորության իրավունքները պաշտպանելու ուղղությամբ դատախազության և դատական օրգանների աշխատանքի մասին»[2]:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը իրագործելով շքավորների վրա ամուր հենվելու, միջակների հետ դաշինքն ավելի ամրապնդելու և կուլակության դեմ վճռական պայքար մղելու Լենինյան լոզունգը, կենսագործում էին սոցիալիզմի հաղթական շինարարությունը գյուղում:

1929 թ. վերջին և 1930 թ. սկզբին Սովետական Միության մի շարք շրջաններում, համատարած կոլեկտիվացման սկսվելու կապակցությամբ, գրվեց կուլակության նկատմամբ կիրառվող քաղաքականությունը փոխելու հարցը: Մինչ այդ կուլակության նկատմամբ վարվում էր սահմանափակման և արտամղման, նրա դեմ հարձակումն ուժեղացնելու քաղաքականություն, որը կասեցնում էր կուլակության աճումը և նրա

---

[1] Տե՛ս ЦГАОР и СС СССР, ф. 3316, оп. 22, д. 31, л. 40.

[2] Նույն տեղում, թ. 39։

վերացում չէր նշանակում։ Այժմ Կոմունիստական պարտիան որոշեց անցնել համատարած կոլեկտիվացման հիման վրա, կուլակության, որպես դասակարգի վերացմանը։ Դրա համար արդեն կային համապատասխան սոցիալական և տնտեսական նախադրյալներ։ Ժողովրդական տնտեսության մեջ ամրապնդվել էր սոցիալիստական սեկտորը, ի դեմս կոլտնտեսությունների դյուղում ստեղծվել էր սոցիալիստական ամուր բազա։ Երկրում ստեղծվեց դասակարգային ուժերի նոր հարաբերակցություն հօգուտ սոցիալիզմի՝ ամրապնդվեց բանվոր դասակարգի դաշինքը աշխատավոր գյուղացիության հետ, որոնք մասնայաբար մտնում էին սոցիալիստական տընտեսությունների մեջ և բանվոր դասակարգի հետ միասին վճռականորեն պայքարում էին կուլակ-կապիտալիստների դեմ։ Եվ վերջապես՝ կոլտնտեսությունների ու սովխոզների զարգացման շնորհիվ հնարավոր էր դարձել կուլակային հացի արտադրությունը փոխարինել սոցիալիստական տնտեսությունների հացի արտադրությամբ։

1929 թ. վերջերից Սովետական Միությունը թևակոխեց գյուղի ծավալուն սոցիալիստական վերափոխման ժամանակաշրջանը։ Այս նոր էտապում դասակարգային պայքարը խիստ սրվեց, որը ավարտվեց գյուղական բուրժուազիայի վերացումով և տնտեսության սոցիալիստական սիստեմի հաղթանակով։ Գյուղում «ով-ում» հարցը վճռվեց սոցիալիզմի օգտին։

Սոցիալիստական շինարարության տվյալ էտապում, դասակարգային պայքարի սրման պայմաններում կարևոր նշանակություն ունեցան Կոմունիստական պարտիայի միջոցառումները բյուրոկրատիզմի դեմ հարձակումը ուժեղացնելու, քննադատությունը և ինքնաքննադատությունը ծավալելու, աջ օպորտունիզմը ջախջախելու, գյուղում դասակարգային քաղաքականության աղավաղումները վերացնելու ուղղությամբ։

Բյուրոկրատիզմի դեմ պայքարը վճռական դեր էր ստանում այն պատճառով, որ տվյալ պատմական պայմաններում

այդ պայքարը, ինչպես նշեց պարտիայի 16-րդ կոնֆերենցիան (1929 թ. ապրիլ), «դառնում է դասակարգային պայքարի կարևորագույն ձևերից մեկը»[1]: Կոնֆերանսը պարտիայի ամբողջ ուշադրությունը սրեց բյուրոկրատիզմի տարրերի դեմ ամենավճռական, անձնվեր և հաստատակամ պայքարելու անհրաժեշտության վրա:

Բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի (որը, ինչպես սովորեցնում էր Վ. Ի. Լենինը, լինելու էր համառ և տևական)՝ վճռական մեթոդներից էր քննադատությունը և ինքնաքննադատությունը, որի ծավալման մասին Կենտրոնական Կոմիտեն պարտիայի բոլոր անդամներին և բանվոր դասակարգին զիմել էր դեռևս 1928 թ. հունիսին:

Դասակարգային պայքարի սրումը և երկրի սոցիալիստական վերակառուցման դժվարությունները տատանումներ առաջացրին բնակչության մանրբուրժուական խավերում, որ արտացոլվեց նաև պարտիայի մեջ՝ ի դեմս աջ օպորտունիստների խմբի ստեղծման:

Տրոցկիստական-զինովևական օպոզիցիայի ջախջախումից հետո դլուխ բարձրացրած աջ կապիտուլյանտները փաստորեն ժխտում էին մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը, ձգտում էին համաձայնություն՝ քաղաքի և գյուղի կուլակային—կապիտալիստական տարրերի հետ:

Չդադարեցնելով պայքարը տրոցկիստների և զինովևականների դեմ, Կոմունիստական պարտիան պայքարի սուր ծայրը ուղղեց աջերի և նրանց օպորտունիզմի դեմ, որը 1928—1929 թթ. գլխավոր վտանգն էր պարտիայի մեջ:

Աջ օպորտունիստական իդեոլոգիան և պրակտիկան իր արտահայտությունը գտավ նաև Հայաստանում: Աջերի կողմնակիցները քարոզում էին, թե իբր առանձին տարբերություն չկա շքավորների, միջակների և կուլակների միջև, նրանք բոլորը նույն դասակարգն են, որ, «եթե կուլակին սեղմենք, ա-

---

[1] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 2-րդ մաս, էջ 746։

պա նա այլևս բատրակ չի պահի, իսկ բատրակն էլ սովից կմեռնի» կամ թե՝ «Ինչպե՞ս կարող են չքավորները յոլա գնալ առանց հարուստների, գյուղում պետք է մեկը հարուստ լինի, մյուսը քյասիբ. հարուստը քյասիբին պետք է օգնի, քյասիբը՝ հարուստին, որպեսզի երկուսն էլ ապրեն» և այլն։

Օպորտունիստական վերաբերմունքը և դասակարգային գծի աղավաղումները տեղ գտան գլխավորապես հարկային գործում և վարկավորման ասպարեզում։

ՀԿ(բ)Պ Կենտկոմը 1928 թ. օգոստոսին նման փաստեր բացահայտեց Վարանցովկայի և Ստեփանավանի վարչական ընկերություններին աշխատանքներում, որոնք վարկերը հիմնականում բաշխել էին կուլակներին։ ՀԿ(բ)Պ Կենտկոմը 1929 թ. հոկտեմբերին որոշում ընդունեց Լոռի-Փամբակի գավառային ֆինբաժնի վերաբերյալ, որը աղավաղել էր Սովետական իշխանության հարկային քաղաքականությունը, իջեցնելով կուլակների և նեպմանների հարկի գումարը, կամ ազատելով նրանց հարկից։ Նման փաստեր տեղի էին ունեցել նաև Մեղրու, Էջմիածնի և մյուս գավառներում։ Բավական է ասել, որ եթե 1927/28 թ. անհատական կարգով հարկվող տնտեսությունների թիվը Հայաստանում հասնում էր 2.600-ի, ապա 1928/29 թ. այն իջավ 1759-ի։ «Անցած տարի մենք պրակտիկայում ունեինք խոշոր աղավաղումներ միջակներին անհատական կարգով հարկելու ուղղությամբ։ Այդ աղավաղումները հնարավոր եղավ շտկել միայն առանձին վերանայման, կոմպանիա անցկացնելու միջոցով։ Այս տարի աղավաղումները հակառակ պատկերն են կրում։ Համապատասխան օրգանները չեն կարողացել հայտնաբերել բոլոր կուլակներին և նրանց մի մասին հաջողվել է ազատվել իրենց համար սահմանված հարկային ծանրությունից»[1]։

Առանձին տեղերում աջ և ձախ օպորտունիստները դեմ էին դուրս գալիս կոլեկտիվացմանը, կամ աշխատում էին ցը-

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1 հոկտեմբերի 1929 (առաջնորդող հոդվածը)։

ել եղածները։ Կոպիտ սխալներ հայանպաստվեցին նաև հողաշինարարության ասպարեզում՝ Դիլիջանի և Մեղրու գավառներում։

Հիշյալ և այլ կարգի սխալները և թերությունները ուղղելու համար ընդունվեցին մի շարք որոշումներ։

ՀամԿ(բ)Պ Անդրկովկասի Երկրային Կոմիտեն և ՀԿ(բ)Պ Կենտկոմը 1928 թ. հուլիսին որոշումներ ընդունեցին «ՀԿ(բ)Պ Էջմիածնի պարտիական կազմակերպության դրության մասին»։ 1928 թ. նոյեմբերի սկզբին հրապարակվեց ՀամԿ(բ)Պ Անդրերկոմի որոշումը «ՀԿ(բ)Պ Դիլիջանի կազմակերպության դրության և անելիքների մասին»։ ՀԿ(բ)Պ Կենտկոմը 1929 թ. սեպտեմբերին որոշում կայացրեց Մեղրու պարտիական վերկազմության մասին։

Մասսաների կոմունիստական դաստիարակությունը ուժեղացնելու և հակապարտիական հոսանքների, բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիայի և նացիոնալ-ուկլոնիզմի ջախջախման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀԿ(բ)Պ Կենտկոմի 1928 թ. Նոյեմբերյան պլենումի՝ «Իդեոլոգիական ճակատում Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի խնդիրների մասին» ընդունած որոշումը[1]։

Մերկացնելով և ջախջախելով աջ թեքման և տրոցկիզմի ու նացիոնալիզմի արտահայտությունները, Հայաստանի Կոմունիստական պարտիան ամբողջ համախմբեց ռեսպուբլիկայի պարտիական և աշխատավորական մասսաներին ՀամԿ(բ)Պ Լենինյան Կենտկոմի շուրջը և դյուրավորեց սոցիալիստական շինարարության հաջող զարգացումը։

* *
*

Սովետական երկրի ինդուստրացումը, գյուղի կոլեկտիվացումը և առաջին հնգամյա պլանի կենսագործումը ընթանում էր լարված միջազգային իրադրության պայմաններում։

---

1 Տե՛ս «Հայաստանի Կոմունիստական (բ) կուսակցության խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում», Երևան, 1929։

Այն ժամանակ, երբ Սովետական Միության ժողովրդական տնտեսությունը արագ վերելք էր ապրում, երբ մեր երկրում տեղի էին ունենում տնտեսական և քաղաքական խոշոր փոփոխություններ, կապիտալիստական աշխարհը ընկավ խորը տնտեսական ճգնաժամի մեջ, որը սկսվեց 1929 թ. վերջերին։ Դա ավելի սրեց իմպերիալիզմի հակասությունները, որը կապիտալիստական երկրներն աշխատում էին առաջին հերթին լուծել սոցիալիզմ կառուցող Սովետական Միության հաշվին։ Անգլիայի և Ֆրանսիայի գլխավոր շտաբները պլաններ էին մշակում 1929—1930 թթ. ՍՍՌՄ-ի վրա ինտերվենցիա կազմակերպելու համար։

Միջազգային իմպերիալիզմը փորձում էր մեր երկրի դեմ տեսել «փոքր պատերազմ», այն մեծ պատերազմի վերածելու համար։ 1929 թ. հուլիսին ամերիկյան, ճապոնական, անգլիական և մյուս իմպերիալիստական տերությունների առաջադրանքով չինական միլիտարիստները և ռուսական սպիտակգվարդիականները ռազմական գործողություններ սկսեցին և դավաճանեցին Չին-Արևելյան երկաթուղագիծը։

Սովետական Միության հետևողական խաղաղասիրական քաղաքականության շնորհիվ շուտով սովետա-չինական կոնֆլիկտը լուծվեց։ Հեռավոր-Արևելյան Հատուկ բանակին ուղղված ՍՍՌՄ Ռազմական և Ծովային ժողովրդական կոմիսար և Ռևոլյուցիոն Զինվորական խորհրդի նախագահ Կ. Ե. Վորոշիլովի ողջույնի հրամանում ասված է, որ «հաղթեց չինական ժողովրդի նկատմամբ Սովետական Միության բարեկամական քաղաքականությունը և դաժան պարտություն կրեց չինական կալվածատերերի, գեներալների և նրանց ետևում կանգնած իմպերիալիստների, Չինաստանի թշնամիների ու շահագործողների ավանտյուրիստական, զավթողական քաղաքականությունը»[1]։

Միջազգային իմպերիալիզմի հակասովետական, պատերազմական ավանտյուրան բուռն բողոք առաջացրեց խաղաղ

[1] К. Е. Ворошилов, Статьи и речи, Москва, 1936, стр. 365.

ստեղծագործական աշխատանքով զբաղված Սովետական Միության ժողովուրդների մեջ, որոնք պատրաստ էին խառնվելու Հայաստանի պաշտպանների շարքերը, լիկվիդացնելու իմպերիալիստների պրովոկացիան։

Հայաստանի գործարաններում, հիմնարկություններում և ամենուրեք կայացած միտինգներում աշխատավորները դատապարտում էին իմպերիալիստների պատերազմական քաղաքականությունը, շատերը ցանկություն էին հայտնում համալրել Հեռավոր-Արևելյան Հատուկ բանակ, իսկ բազմաթիվ կոմերիտականներ որոշեցին մտնել Անդրկովկասյան կոմերիտական հատուկ դումարտակը։ Շատ կոլեկտիվներ որոշեցին իրենց մեկ օրվա աշխատավարձը նվիրել Հայաստանի պաշտպանության ֆոնդին։ Նվիրատվությամբ բավականին միջոցներ հավաքվեց «Խորհրդային Հայաստան» անունով ինքնաթիռ և տանկ կառուցելու համար։

Պատերազմ հրահրողների դեմ հայ ժողովրդի բուռն զայրույթը և Հայաստանի նկատմամբ նրա սերն է արտահայտված հետևյալ դիմումի մեջ, որը Լոռի-Փամբակի պարտիական գավառային Կոմիտեին են հանձնել 78 կոմունիստներ, կոմերիտականներ և անպարտիականներ։ «Ի նկատի ունենալով,—գրել են նրանք,—որ միջազգային դրությունը գնալով օրըստօրն ավելի քան բարդանում է, և պատերազմի վտանգի սրվելը, որը վերջին ժամանակներս արտահայտվում է իմպերիալիստների կողմից ռազմական պատրաստությունների, Չին-Արևելյան կոնֆլիկտի մեջ, մենք մի շարք կուսակցական, ԼԿԵՄ անդամներ և անկուսակցականներ պահանջում ենք ամենավճռական հակահարված տալ միջազգային, չինական և սպիտակ գվարդիականների իմպերիալիստական ոտնձգություններին, որոնք ամբողջապես ցանկանում են խանգարել մեր սոցիալիստական շինարարության մեծ գործը։ Հայտնելով մեր պատրաստակամությունը, պահանջում ենք կուսակցության գավառային Կոմիտեից հաշվի առնել մեզ և ուղարկել Հեռավոր Արևելքի Հատուկ բանակ, Խորհրդային երկրի սահմանները պաշտպանելու համար»[1]։

[1] «Խորհրդային Հայաստան», 14 սեպտեմբերի 1929։

Միջազգային դրության լարվածությունը և երկրի ներսում դասակարգային պայքարի սրումը ուրախացնում էր իմպերիալիզմի ռազմակառքին լծված դաշնակցական թափթփուկներին՝ հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներին: Նրանց ուրախություն էր պատճառել սովետա-չինական կոնֆլիկտը, և նրանք գովերգում էին պատերազմը Սովետական Միության դեմ: Պատմության կողմից դատապարտված և Հայաստանից դուրս վռնդված դաշնակ ավանտյուրիստները իրենց փրկությունը որոնում էին պատերազմի մեջ և անհամբերությամբ սպասում էին նրա պայթելուն:

Նա մղելով միջազգային իմպերիալիզմի հարձակումը և ճնշելով դասակարգային թշնամիների դիմադրությունը, մեր երկիրն ամրապնդեց նվաճած հաղթանակները և վստահությամբ շարունակում էր հաղթական սոցիալիստական շինարարությունը:

Սովետական Միության միջազգային հեղինակության բարձրացումը, Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումները հսկայական ներգործություն էին ունենում արտասահմանի հայերի վրա:

Սիլուռքահայ աշխատավորությունը իր հայացքն ուղղել էր դեպի Սովետական Հայաստան և շտապում էր օր առաջ վերադառնալ այնտեղ և իր եղբայրների հետ միասին լծվել խաղաղ ստեղծագործական աշխատանքի: Չնայած դաշնակների ցույց տված կատաղի դիմադրությանը, օտարության մեջ, կապիտալիստական աշխարհում տառապող հաղարավոր հայ ընտանիքներ շարունակում էին վերադառնալ Սովետական հայրենիք: 1929 թ. Ֆրանսիայից և Թուրքիայից Հայաստան ժամանեցին հայ աշխատավորների մի քանի խմբեր: Սովետական կառավարությունը մեծ հոգատարությամբ շրջապատեց հայրենիք վերադարձողներին և նրանց համար կազմակերպեց ամեն տեսակի օգնություն: 1928 թ. ԽՍՀՄ Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը որոշում ընդունեց հայերի հայրենադարձության համար ֆոնդ ստեղծելու մասին:

Արտասահմանի հայ աշխատավորությունը և դեմոկրատական շրջանները հոգով ու սրտով կապված էին Սովետական Հայաստանի հետ և ցանկանում էին նրա ծաղկումն ու բարգավաճումը։

Հայկական Բարեգործական ընկերությունը Փարիզից ուղարկած հեռագրով ջերմ շնորհավորանքներ հայտնելով Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի ոգեւորիչ առիթով, ցանկանում էր «Հարազատ Հայրենիքին ծաղկում և երջանկություն»[1]։ Ջերմագին և եղբայրական ողջույններ, բաղձանքներ ու լավագույն ցանկություններ բովանդակող հեռագրեր են ստացվել Ամերիկայի Հայկական Կարմիր Խաչի Կենտրոնական վարչության, Սուրբ Հովակիմի Ձորի (Կալիֆորնիա) հայ բնակչության դումարած ժողովի, Մարսելի և Բոստոնի հայ աշխատավորների, Ամերիկյան ՀՕԿ-ի (Նյու-Յորք) կողմից և այլն[2]։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման տասնամյակի կապակցությամբ Փարիզից՝ Ֆրանսիայի ՀՕԿ-ի Կենտրոնական վարչությունից ստացված ողջույնի հեռագրում ասված է. «Կենտրոնական վարչությունը 34 մասնաճյուղերով խանդավառորեն կոչջունն Հայաստանի խորհրդայնացման տասնամյակը, հայտնելով հիացում հայ աշխատավորության և վարիչներուն կատարած նվաճումներուն համար՝ առաջին հանգրվանը ավելի մեծ հաղթանակներու։ Կհայտարարե. Ֆրանսահայ աշխատավորությունը անսասան կանգնած է խորհրդային Հայաստանի կողքին։ Կեցցե Հայաստանի խորհրդայնացման տասնամյակը։ Կեցցե խորհրդային Հայաստանի աշխատավորությունը։ Կեցցե խորհրդային Միությունը»[3]։

Արտասահմանի հայ բնակչությունը և նրա հետ միասին տեղական դեմոկրատական շրջանները դասախոսություն-

---

1 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 4, գ. 11528, թ. 37։

2 Նույն տեղում, գ. 11528, թ. 3, 33, 42, 43 և ֆ. 112, ց. 1, գ. 677, թ. 95։

3 Նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 677, թ. 79։

ների, ցուցահանդեսների և այլ միջոցներով ծանոթանում էին վերածնվող Հայաստանի նվաճումների, նրա արվեստի, կուլտուրայի հետ։ Այսպես, 1928 թ. հունվարին Փարիզում կազմակերպվեց ռեսպուբլիկայի ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի գործերի ցուցահանդեսը, որը արժանացավ բարձր գնահատականի։ Հայաստան են այցելում օտարերկրյա բանվորների, գրողների և գիտնականների մի շարք պատվիրակություններ։

Ֆրանսիական նշանավոր կոմունիստ գրող Հանրի Բարբյուսը, որը 1927 թ. հոկտեմբերին եղել էր Սովետական Հայաստանում և սերտ կապերի մեջ էր հայ գրողների և կուլտուրայի մյուս գործիչների հետ, գրող, հրապարակախոս, կոմունիստ Ժան Ռիշար Բլոկը և մի խումբ ուրիշ գրողներ ու հասարակական գործիչներ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի տասներորդ տարեդարձի առթիվ հեռագրել են. «Սովետական Հայաստանի տասներորդ տարեդարձը տոնելու համար մեր կոմիտեն, որին մասնակցում են ֆրանսիական մտավորականության լավագույն ներկայացուցիչները, կոնֆերանսների, ցուցահանդեսների, գրական և արտիստական երեկոների միջոցով ծանոթացնել է տալիս Սովետական Հայաստանի հրաշալի վերելքը։ Մենք հպում ենք մեր եղբայրական նվիրվածության հավատիքը Սովետական Հայաստանի նկատմամբ, մեր բացարձակ վստահությունը նրա բարձր ձգտումներին»[1]։

Սովետական Միության և Սովետական Հայաստանի զարգացման առաջին հնգամյա պլանի կատարման հետ միասին աճում և ամրապնդվում էր մեր երկրի միջազգային հեղինակությունը։

Առաջին հնգամյա պլանի հաջող կենսագործման ընթացքը ուժեղ հարված էր իմպերիալիստներին և նրանց ջինախից դաշնակիներին, որոնք չհավատալով պլանի ռեալու-

---

1 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 677, թ. 54 (թարգմանություն ֆրանսերենից)։

թյանը՝ այն համարում էին «հեռավոր ապագայի երաժշտություն»։

Ներքին և արտաքին թշնամիների դիմադրության հաղթահարումը, որը իրականացվում էր հաջողությամբ, սոցիալիզմի կառուցման կարևոր պայմանը և գրավականն էր։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԶՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ԿՈԼԵԿՏԻՎԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՀԱՄԱՐ

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ սոցիալիզմը լայն հնարավորություններ է ստեղծում արտադրության զարգացման համար, որի գլխավոր նպատակը ամբողջ հասարակության և նրա անդամների նյութական և կուլտուրական պահանջմունքների բավարարումն է։ Բացատրելով սոցիալիստական արտադրության հիմնական նպատակը, Վ. Ի. Լենինը գրել է, որ սոցիալիզմը նշանակում է «հասարակական-արտադրողական պրոցեսի պլանաչափ կազմակերպում հասարակության բոլոր անդամների բարեկեցության ապահովման և համակողմանի զարգացման համար»[1]։ Այստեղ արտահայտված է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի էությունը, նրա բովանդակությունը։ Սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի ընդարձակ դծերն են՝ առաջավոր տեխնիկայի բազայի վրա արտադրության անընդհատ ընդլայնումը և կատարելագործումը՝ հասարակության բոլոր անդամների մշտապես աճող պահանջմունքներն ավելի ու ավելի լրիվ բավարարելու և համակողմանի զարգացնելու համար։ Այս ընդարձման մեջ արտահայտված է ոչ միայն սոցիա-

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 24, էջ 592։

լիստական արտադրության հիմնական նպատակը, այլև այդ նպատակին հասնելու միջոցները և ուղիները։

Սոցիալիստական հասարակության զարգացման յուրաքանչյուր էտապում հասարակության անդամների պահանջմունքների բավարարման աստիճանը կախված է տվյալ ժամանակաշրջանում արտադրության զարգացման մակարդակից, հասարակության արտադրության տակ գտնվող ռեսուրսների չափից։

Սոցիալիստական արտադրության նպատակը սկզբունքորեն տարբերվում է կապիտալիստականից։ Եթե սոցիալիզմի նպատակը մարդկանց պահանջմունքների բավարարումն է, ապա կապիտալիստների համար կարևորը՝ շահույթի ապահովումն է, որը ձեռք է բերվում աշխատավոր մասսաների շահագործումն անընդհատ ուժեղացնելու միջոցով։

Առաջին հնգամյակի սկզբում զգալի չափով բարելավվեց Սովետական Միության աշխատավորների նյութական և կուլտուրական դրությունը։ Սակայն պետք է ասել, որ Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը հարկադրված էին միջոցների և ռեզերվների մեծ մասը տրամադրել հայրենական ինդուստրիայի ստեղծման, սոցիալիստական վերակառուցումները իրականացնելու կարևոր գործին։ Այդ պատճառով սովետական մարդիկ հարկադրված էին կրել ոչ քիչ նյութական դժվարություններ և զոհողություններ[1]։ Այնուամենայնիվ, չնայած դրան, բանվորների և գյուղացիների նյութական և կուլտուրական վերելքը ակնհայտ էր։

Սոցիալիստական ինդուստրացման հետևանքով զարգանում էին քաղաքները, աճում էր նրանց բնակչությունը, բանվորների և ծառայողների թիվը։

Սովետական Հայաստանի բնակչությունը 1926 թ. մարդահամարի տվյալներով կազմում էր 881 հազար, իսկ 1930 թ.

---

1 1928—1929 թթ. Սովետական Միությունում առաջացավ հացի պակաս, որի պատճառով քաղաքներում մտցվեց հացի և պարենային այլ մթերքների բաշխման բարտային սիստեմ, որը պահպանվեց մինչև 1935 թ.։

հունվարի 1-ին՝ մոտ մեկ միլիոն մարդ։ Բնակչության տարեկան միջին աճը չորս տոկոս էր։ Նույն ժամանակամիջոցում քաղաքային բնակչությունը 167 հազարից հասել էր 205 հազար մարդու, միայն վերջին մեկ տարում՝ 1929 թ. աճելով տասը, իսկ նախորդ տարում՝ ութ տոկոսով։ Քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմում էր ռեսպուբլիկայի բնակչության մեկ հինգերորդ մասը[1]։ Սովետական Հայաստանի բնակչության այսպիսի արագ աճը ռեկորդային էր։

Քաղաքային բնակչությունն աճում էր գլխավորապես ի հաշիվ բանվորների թվի ավելացման, որի տարեկան միջին աճը ինդուստրացման ժամանակաշրջանում կազմում էր 17,6 տոկոս։ Բանվորների և ծառայողների թիվը 1928 թ. հասել էր 42 հազարի, իսկ 1929 թ.՝ մոտ 48 հազարի։

Բանվորների և ծառայողների թվի ավելացման հետ միասին աճում էր աշխատավարձի ֆոնդը։ Ընդ որում վերջինիս աճի տեմպերը գերազանցում էին բանվոր-ծառայողների աճի տեմպերին, որը վկայում է միջին աշխատավարձի բարձրացման մասին։ Այսպես, եթե 1926—1928 թթ. աշխատավորների թիվը ավելացել էր 34,7, ապա աշխատավարձի ֆոնդը աճել էր 81,8 տոկոսով, իսկ նախորդ տարվա համեմատությամբ 1929 թ. աճի համապատասխան ցուցանիշներն էին 15,3 և 33,3 տոկոս[2]։

Ինդուստրացման առաջին տարիներին զգալի չափով ավելացավ ապրանքաշրջանառությունը քաղաքի և գյուղի միջև, որը նույնպես վկայում է աշխատավորների նյութական դրության բարելավման մասին։ 1928/29 թ. բոլոր սեկտորների գծով հատավաճառ ապրանքաշրջանառությունը կազ-

---

[1] «Նյութեր ՀԿ(բ)Կ-ի հաշվետվության համար կուսակցության VIII համագումարին», Երևան, 1932, և «Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник», стр. 11.

[2] «ՀՍՍՀ աշխատանքը և արդյունաբերությունը 1926/27—1928/29 թթ.», էջ 51։ «Մեր նվաճումները», Երևան, 1934, 2-րդ բաժնի 6-րդ աղյուսակ, և «Социалистическое строительство Армянской ССР», стр. 13.

մում էր 67,5 միլիոն ռուբլի, նախորդ տարվա 58,7 միլիոնի դիմաց։ Առևտրի ասպարեզից ասոիճանաբար դուրս էր մղվում մասնավորը, որի տեսակարար կշիռը իջնում էր թե հարաբերականորեն, թե բացարձակապես։ 1924/25 թ. հատավաճառ ապրանքաշրջանառության մեջ նա գրավում էր 46,4 տոկոսը, իսկ 1928/29 թ. իջել էր 32,2 տոկոսի։ Նույն ժամանակամիջոցում սոցիալիստական սեկտորը (պետական և կոոպերատիվ առևտուր) 53,6-ից բարձրացավ 67,8 տոկոսի[1]։ Մանածախ առևտրում անբաժան կերպով իշխում էր սոցիալիզմը։

Աշխատավորների դրությունը բարելավելու ուղղությամբ պարտիայի և կառավարության հոգատարության վառ արտահայտությունն էր Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի տասնամյակի կապակցությամբ ԽՍՀՄ Կենտգործկոմի հրելյանական սեսիայի ընդունած որոշումը ութից՝ յոթ և մատամբ վեցժամյա աշխատանքային օրվա անցնելու մասին։ 1929 թ. Հայաստանում վեց կամ յոթժամյա աշխատանքի անցան առաջին արդյունաբերական ձեռնարկությունները[2]։

Ինդուստրացման հետևանքով զարգանում էին ռևոլուցիայի նոր, սոցիալիստական քաղաքները։ Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը կառուցվում էր ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի նախագծով։ Բացվում և սալահատակվում էին նորանոր փողոցներ, կառուցվում էին բազմահարկ բնակելի շենքեր։ 1927 թ. սկսած կառուցվում էր Կառավարական տունը, իսկ 1930 թ. սկսվեց Օպերայի և բալետի շենքի շինարարությունը։ Սովետահայ ճարտարապետության այդ հիանալի կոթողների հեղինակն է Ալ. Թա-

---

1 «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», էջ 189։ «Մեր նվաճումները», 8-րդ բաժնի 3—4-րդ աղյուսակները, և «Социалистическое строительство Армянской ССР», стр. 97.

2 1940 թ. Սովետական կառավարությունը հարկադրված եղավ վերացնել այդ որոշումը՝ մեր հայրենիքի դեմ նախապատրաստվող պատերազմի կապակցությամբ։

մանյանը, որը խոշոր դեր խաղաց սովետահայ ճարտարապետական արվեստի ձևավորման ու զարգացման գործում։ 1929 թ. Երևանում դրվեցին Բաքվի կոմունայի հերոս գործիչներ Ս. Զավարիձեի և Մ. Ազիզբեկովի արձանները։

Լենինականը մեծ չափով վնասվել էր 1926 թ. երկրաշարժից։ Սովետական Միության կառավարության և եղբայրական սովետական ռեսպուբլիկաների օգնությամբ քաղաքը արագորեն վերականգնվում էր։ Զարգանում էին Ալավերդին, Ղափանը։ Արդյունաբերական քաղաք էր դառնում Ղարաքիլիսան և այլն։

Աշխատավոր գյուղացիների նյութական դրության բարելավման ուղղությամբ նույնպես զգալի հաջողություններ էին ձեռք բերվել։ Այդ են ապացուցում ցանքաշրջանառության և գյուղատնտեսական ինվենտար չունեցող տնտեսությունների թվի խիստ կրճատումը, շքավորներին և մասամբ միջակ տնտեսություններին հարկից ազատելը, բազմաթիվ արտոնությունները և այլն։ Հայկական ԽՍՀ Կենտրոնական Վիճակագրական Վարչության տվյալներով 1927 թ. համեմատությամբ 1929 թ. կով չունեցող գյուղացիական տնտեսությունների տեսակարար կշիռը 35,8-ից իջել էր 33,8 տոկոսի, մեկ կով ունեցողների տեսակարար կշիռը 27,6-ից բարձրացել էր 31,0 տոկոսի, երկու կով ունեցողներինը՝ 18,8-ից 21,0 տոկոսի և այլն[1]։ Չնայած հիշյալ նվաճումներին գյուղում շարունակում էր պահպանվել այնպիսի դրություն, երբ շատ ընտանիքներ չունեին ցանք, գյուղատնտեսական գործիքներ, լծկան անասուններ, գոյություն ունեին զգալի թվով բատրակներ և այլն։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, որը ավարտվեց մի քանի տարի անց, վերացրեց գյուղի սոցիալական շերտավորումը, գյուղի շահագործող դասակարգերին, շքավորությունն ու աղքատությունը և պայմաններ ստեղծեց կոլտնտեսականների նյութական և կուլտուրական կյանքի աստիճանական բարելավման համար։

---

1 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 72, թ. 13։

Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում աշխատավորների առողջապահությանը։ Հայաստանում կառուցվել էին բազմաթիվ հիվանդանոցներ, բացվել էին պոլիկլինիկաներ, բուժկայաններ ու դեղատներ։ Նախասովետական ժամանակաշրջանի համեմատությամբ հինգ անգամ ավելացել էր հիվանդանոցային մահճակալների և նույնքան անգամ բժիշկների թիվը։ Լուրջ պայքար էր մղվում մալարիայի դեմ։ Կազմակերպվել էր մոր և մանկան պաշտպանության գործը, որը բացակայում էր հին կարգերի ժամանակ։

Հաղարավոր աշխատավորներ բուժվում և հանգստանում էին միութենական և ռեսպուբլիկական սանատորիաներում ու հանգստյան տներում։ Գործում էին Դիլիջանի և Արզնիի սանատորիաները, Ղարաքիլիսայի, Ծաղկաձորի և Սևթալայի հանգստյան տները և այլն։

Զգալի չափով ավելացել էր բնակչության ձրի բժշկական սպասարկման, սովորողներին տրվող թոշակների, սոցիալական ապահովության և բոլոր տեսակի թոշակների համար պետության կողմից հատկացվող գումարը։

Այսպիսով, առաջին հնգամյակի սկզբում զգալի նվաճումներ ձեռք բերվեցին աշխատավորների տնտեսական, ինչպես նաև կուլտուր-կենցաղային դրության բարելավման գործում։

* * *

Կուլտուրական ռևոլյուցիայի իրականացումը սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի բաղկացուցիչ մասն է։ Վ. Ի. Լենինը սովորեցրել է, որ առանց բավարար կուլտուրական մակարդակի, առանց դրագիտության՝ անհնարին է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, զարգացնել կոոպերացիան, աշխատավորներին լայնորեն ընդգրկել երկրի կառավարման գործի, բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի մեջ։ Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ «անդրադառնալ երկրում կոմունիստական հասարակություն կառուցել չի

կարելի»[1]։ Նա լիակատար վստահություն էր հայտնում, որ մենք կարող ենք և պետք է «անկուլտուրական ու վայրենի կապիտալիստական երկրից կուլտուրական կոմունիստական երկիր շինենք»[2]։

Սովետական իշխանության կարևորագույն նվաճումներից մեկն այն էր, որ նա աշխատավորներին և նախկին շահագործվողներին փաստական հնարավորություն տվեց օգտվելու կուլտուրայի, արվեստի և գիտության բարիքներից, հասնելու բարձր կուլտուրական մակարդակի, դառնալու սոցիալիզմի գրագետ և կուլտուրական կառուցողներ։

Սոցիալիստական ինդուստրացմանը և առաջին հնգամյա պլանի կենսագործմանը անցնելու կապակցությամբ մեր երկրի կուլտուրական զարգացման հարցը առաջ քաշվեց ամբողջ վճռականությամբ։ Առաջավոր տեխնիկայի հիման վրա արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների կառուցումը, նոր տեխնիկայի յուրացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, գյուղատնտեսության մեքենայացումը, նրա բերքատվության ավելացումը և սոցիալիստական վերակառուցման ծավալումը պահանջում էին բարձրացնել բանվորների և գյուղացիների գրագիտությունն ու որակավորումը, նրանց կուլտուրական մակարդակը, ստեղծել որակյալ կադրեր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար։ Անհրաժեշտ էր բարձրացնել բոլոր աշխատավորների քաղաքական և պրոֆեսիոնալ պատրաստությունը։

Կոմունիստական պարտիայի XV համագումարը հատուկ ուշադրություն դարձրեց քաղաքի և գյուղի կուլտուրական հետամնացությունը լիկվիդացնելու անհրաժեշտության վրա, մասնավորապես նշելով, որ զարգացման բարձր տեմպեր պետք է վերցնել ազգային շրջանների համար, որի վերաբերյալ Վ. Ի. Լենինը 1919 թ. ՌԿ(բ)Պ ծրագրի նախագծում առաջարկել է հետևյալը՝ «աջակցություն ոչ միայն փաստա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 362։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 179։

կան իրավահավասարությանը, այլև առաջներում ճնշված ժողովուրդների աշխատավոր մասսաների լեզվի, կուլտուրայի զարգացմանը»[1]։ Ելնելով Վ. Ի. Լենինի ցուցումներից Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ազգային հարցում վարում են ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան զարգացնելու քաղաքականություն։

Լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ Հայաստանում, ինչպես և սովետական բոլոր ռեսպուբլիկաներում, առաջին հնգամյակը սկսվեց մեծ հաջողությունների՝ կուլտուրական ռևոլյուցիայի իրականացման բնագավառում։

Պարտիական, կոմերիտական, արհմիութենական կազմակերպությունները աշխատավորական մասսաների օգնությամբ մեծ թափ հաղորդեցին կուլտուրական շինարարությանը, որպես առաջին հնգամյա պլանը կենսագործելու կարևոր պայմանի։ Մասսայական շարժման բնույթ ստացավ բնակչության անգրագիտությունը վերացնելու աշխատանքը։ Կենսագործվեցին մի շարք միջոցառումներ ժողովրդական տնտեսության կադրերի պատրաստման գործը բարելավելու և ծավալելու ուղղությամբ։

Հնգամյակի առաջին իսկ ամսից սկսած, հետևելով Սարատովի նահանգի կոմերիտականների նախաձեռնությանը, Հայաստանի կոմերիտական և հասարակական կազմակերպությունները կազմակերպեցին «կուլտարշավ» անգրագիտությունը վերացնելու համար, որը կուլտուրական շինարարության դժվարին, բայց կարևոր բնագավառներից մեկն էր։ Շաբաթօրյակների և կամավոր նվիրատվությունների միջոցով զգալի գումար հավաքվեց այդ նպատակի համար։ Դա մեծ օգնություն էր պետությանը, որը դեռևս անհրաժեշտ չափով նյութական և ֆինանսական միջոցներ չուներ երկրի կուլտուրական կարիքները բավարար չափով հոգալու համար։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 140։

ՀԼԿԵՄ ԿԿ-ին կից կազմակերպվեց «Կուլտարշավի» Կենտրոնական շտաբ, որը «Կորչի անգրագիտությանը ընկերության» («ԿԱՆԸ») հետ միասին հսկայական աշխատանք տարավ միջոցների հավաքման և լիկկեզանների կազմակերպման ուղղությամբ[1]։ Կոմերիտականների ուժերով շաբաթօրյակի դուրս եկան Լենինականի տեքստիլ կոմբինատի յոթ հարյուր երիտասարդներ և նրանց հետ միասին երեք հարյուր կարմիրբանակայիններ, իսկ ամբողջ կոմբինատը մի օր երկու ժամ ավել աշխատեց և վաստակած գումարը տրամադրեց «ԿԱՆԸ»-ին։ Ալավերդու կոմերիտականները միայն մեկ շաբաթօրյակից ստացան 680 ռ., ապրանքանական տեխնիկումի 70 երիտասարդներ՝ 120 ռ., Երևանի Ձեթ-օճառ գործարանի 130 աշխատողներ՝ 250 ռ., «Արարատ» տրեստի կոմերիտականները՝ 200 ռ. և այլն։ Լենինականի Տեքստիլ կոմբինատի կոմերիտական բջիջը Թուխաչի գյուղին նվիրեց 150 դասագիրք, մոտ հարյուր տետր, մատիտներ և այլն։ Միայն դպրոցական կոմերիտական բջիջները անգրագիտությունը վերացնելու համար տրամադրեցին 628 ռ., չհաշված կոնկուրսով հավաքված գումարը։

«Կուլտարշավի» կամպանիայի ժամանակ զգալի աշխատանք կատարեցին կոոպերատիվ կազմակերպությունները։ Հայկոոպի գծով նախատեսված 75-ի փոխարեն կազմակերպվեց 120 լիկկեզան, որտեղ ընդգրկվեցին 7.200 անգրագետ և կիսագրագետ։ Հայգյուղկոոպը և Հայտնարկոոպը ապահովեցին մի քանի տասնյակ լիկկեզանի գործունեությունը։ Նույն ժամանակաշրջանում տեղերն ուղարկվեցին 10.000 դասագիրք և այլ գրականություն, մեծ քանակությամբ գրենական պիտույքներ և այլն։

ՀԱՄԽ-ի Հողանտառ միությունը իր վրա վերցրեց հաղար բատրակների անգրագիտությունը վերացնելու շեֆությունը։

---

[1] «Կուլտարշավի» մասին տե՛ս Մշի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, ց. 3, գ. 1066, թ. 138—141։

Կոմերիտականների և ուսուցիչների ամենաակտիվ մասնակցությամբ անցկացվեց անգրագիտների և կիսագրագետների ցուցակագրություն և 1928 թ. նոյեմբերին պարապմունքներն սկսվեցին 1209 (ոչ լրիվ ավյալներով) լիկբեզներում։ 1929 թ. հրատարակվեց նոր դասագիրք։

«Կուլտարշավի» առաջին գրոհը ավելի փայլուն արդյունքներ։ 1929 թ. գրագիտություն ձեռք բերեցին ավելի քան 30 հազար անգրագետներ և կիսագրագետներ, որի կեսից ավելին հասարակական կարգով, մինչդեռ սովետական իշխանության անցած ութ տարվա ընթացքում գրագետ էին դարձել մոտ 100 հազար մարդ[1]։

Սովետական Միության կոմերիտմիությունը ապացուցեց, որ նա կենսագործում է մեծ ուսուցիչ Վ. Ի. Լենինի կողմից դրված խնդիրները։ «Կոմունիզմն այն է,— ասել է Վ. Ի. Լենինը կոմերիտմիության 3-րդ համագումարում արտասանած հայտնի ճառում,— որ երիտասարդության միության մեջ եղած երիտասարդությունը, պատանիներն ու աղջիկները ասեն՝ դա մեր գործն է, մենք կմիավորվենք ու կգնանք գյուղերը, որպեսզի անգրագիտությունը վերացնենք, որպեսզի մեր աճող սերնդի մեջ անգրագետներ չլինեն։ Մենք ձգտում ենք, որ աճող երիտասարդության ինքնագործունեությունը նվիրված լինի այդ գործին»[2]։

1929 թ. սեպտեմբերի 16—17-ը տեղի ունեցավ անգրագիտության վերացման աշխատողների և «Կորչի անգրագիտությունը ընկերության» ռեսպուբլիկական առաջին համագումարը։ Բացելով համագումարը, Հայկական ԽՍՀ Լուսժողկոմ Ա. Մառվյանն ասաց. «Մինչև այժմ այդ տեմպը (անգրագիտության վերացման—Վ. Ղ.) թույլ է եղել, հարկավոր էր բեկում մտցնել նրա մեջ։ Այդ բեկումը մտցված է անցյալ տարվանից, երբ կոմերիտմիության ձեռներեցությամբ բոլոր հասարակական կազմակերպությունները լծվեցին այդ գոր-

---

1 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 357, թ. 20։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 362։

ծին»[1]: Համագումարը քննարկեց Հայաստանի ժողովրդական անտեսության վերակառուցման և կուլտուրական ռևոլյուցիայի հարցը, անգրագիտության վերացման հնգամյա պլանը և «Կարճի անգրագիտությունը ընկերության» Կենտխորհրդի հաշվեհավությունը: Համագումարն անցավ անգրագիտության վերացման աշխատանքների մասին ՀամԿ(բ)Պ Կենտկոմի ընդունած որոշման իրականացման նշանաբանով և նշեց անհրաժեշտ միջոցառումներ: Կոմունիստական պարտիան գտնում էր, որ անգրագիտության դեմ պայքարը արտակարգ կարևոր քաղաքական խնդիր է, որ առանց անգրագիտությունը վերացնելու խիստ դժվար է մասսաներին ընդգրկել պետության ղեկավարման և սոցիալիստական շինարարության մեջ:

1929 թ. վերջերից անգրագիտության դեմ պայքարը նոր թափ ընդունեց: «ԿԱՆԸ»-ի շարքերը համալրվեցին հազարավոր նոր անդամներով, որոնք իրենց սրբազան խնդիրն էին համարում ռեսպուբլիկայի աշխատունակ բնակչության 75 տոկոսի[2] անգրագիտության՝ որպես սոցիալիստական շինարարության ընթացքի առաջ կանգնած «վտանգարգուն մի խոչընդոտի» վերացումը: Նոյեմբերի 24—31-ը հայտարարվեց անգրագիտության վերացման շաբաթ, որի նպատակն էր նոր միջոցների հայթայթումը: Հայկական ԽՍՀ Կենտվիճակագրության տվյալներով 1929 թ. դեկտեմբերին ռեսպուբլիկայի լիկբեզներում սովորում էին մոտ 32 հազար տղամարդ և կին[3]:

Անգրագիտության վերացման ուղիներից մեկը տարրական պարտադիր կրթության կենսագործումն էր: Հայաստանի քաղաքներում տարրական պարտադիր կրթությունը իրագործվեց հնգամյակի առաջին տարում, իսկ գյուղական շրջաններում՝ մեկ-երկու տարի հետո[4]: Դա կուլտուրական ռևոլյու-

---

1 «Խորհրդային Հայաստան», 17 սեպտեմբերի 1929:

2 «Խորհրդային Հայաստան», 22 նոյեմբերի 1929:

3 Հայկական ՍՍՌ ՀՈՒՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 1154, թ.1:

4 ՀՍԽՀ Կառավարության հաշվեհավության նյութեր (1929—1931) Խորհուրդների VIII համագումարի առթիվ, Երևան, 1935, էջ 119:

ցիայի կենսագործման ուղղությամբ առաջին հնգամյակում ձեռք բերած խոշորագույն հաղթանակներից մեկն էր։

1928/29 ուսումնական տարում տարրական (առաջին աստիճանի) դպրոցների թիվը ամբողջ ռեսպուբլիկայում հասել էր 752-ի, մոտ 70.600 աշակերտներով։ 3-ամյա և 9-ամյա դպրոցների թիվը դեռևս շատ չէր։ Նրանք հիմնականում ունեին մանկավարժական թեքում և կադրեր էին պատրաստում դպրոցների համար։ Գյուղական երիտասարդական դպրոցները, որոնց թիվը 40-ից անցնում էր, նպատակ ունեին գյուղի համար պատրաստել կուլտուրական բնագավառի և այլ աշխատողներ։ Նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ Հայաստանում հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը ավելացել էր մոտ երկու և կես անգամ։

Սոցիալիստական ինդուստրացման կապակցությամբ քաղաքային 9-ամյա դպրոցների մի մասին տրվեց ինդուստրիալ-տեխնիկական թեքում։

Հանրակրթական դպրոցական սիստեմի գլխավոր խոչընդոտներից էին դպրոցական շենքերի և ուսուցչական կադրերի խիստ պակասը։ Դժվարություններ կային նաև դասագրքերի, ուսումնական ծրագրերի և գրենական պիտույքների հայթայթման գործում։

Ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի համար բարձրագույն և միջնակարգ մասնագիտության կադրեր էին պատրաստում Երևանի Պետական համալսարանը, Անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտը, Կոնսերվատորիան և 12 տեխնիկումներ։

Երևանի Պետական համալսարանը ուներ հինգ ֆակուլտետ՝ մանկավարժական, բժշկական, գյուղատնտեսական, տեխնիկական և սոցիալ-տնտեսական, որոնցում 1928/29 ուսումնական տարում սովորում էին 1250 ուսանողներ։ 1929/30 ուսումնական տարում տեխնիկական ֆակուլտետին կից, որը պատրաստում էր հիմնականում շինարար-ինժեներներ, բացվեց քիմիական բաժանմունք՝ Հայաստանում հիմնադրվող

քիմիական արդյունաբերությունը ինժեներական կադրերով ապահովելու համար։ Համալսարանը առաջին շրջանավարտները տվեց 1925 թ.։ Մինչև 1930 թ. համալսարանն ավարտեցին 934, այդ թվում միայն 1929 թ.՝ 233 հոգի։[1] Բանվորներից և գյուղացիներից բարձրագույն ուսումնական հիմնարկներն ընդունելու գործում մեծ դեր էին խաղում Երևանում և Լենինականում գործող երկու բանվորական ֆակուլտետները, որոնցում 1928/29 ուսումնական տարում սովորում էին 659 մարդ։

Անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտը, որը սկսեց գործել 1928/29 ուսումնական տարվանից, պետք է կադրեր պատրաստեր Անդրկովկասի և մյուս սովետական ռեսպուբլիկաների համար։

Երևանի Պետական համալսարանի բազայի վրա 1930 թ. կազմակերպվեցին Բժշկական, Գյուղատնտեսական, Շինարարական (հետագայում Կարլ Մարքսի անվան Պոլիտեխնիկական), Տնտեսական-ֆինանսական ինստիտուտները։

Երևանում և Լենինականում գործում էին երկու ինդուստրիալ և երկու գյուղատնտեսական տեխնիկում։ Դպրոցների համար ուսուցչական կադրեր էին պատրաստում Երևանի, Լենինականի, Վաղարշապատի, Ստեփանավանի և Գորիսի մանկավարժական տեխնիկումները։ Առաջին հնգամյակի հետագա տարիների ընթացքում կազմակերպվեցին մի քանի տասնյակ տեխնիկումներ։

Տարեցտարի ավելանում էր բուհերում և տեխնիկումներում սովորող բանվորների և գյուղացիների երեխաների թիվը, որոնց մեծ մասին պետությունը ապահովում էր թոշակով։

Ինդուստրացման առաջին տարիներին վերակառուցվեց նաև մասսայական պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության սիստեմը։ Պրոֆտեխնիկական կրթության ցանցը կոչված էր

---

1 ՀՍԽՀ Կառավարության հաշվետվության նյութեր (1929—1934 թթ.) Խորհուրդների VIII համագումարի առթիվ, Երևան, 1935, էջ 117։

սրակյալ բանվորական կադրեր պատրաստել արդյունաբերական ձեռնարկությունների և շինարարության համար։ 1929 թ. գործում էին 21 ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններ և համապատասխան տիպի այլ դասընթացներ, ավելի քան երկու հազար աշակերտներով։ Նույն թվականին ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններ կազմակերպվեցին Լենինականի տեքստիլ կոմբինատին և Ալավերդու կոմբինատին կից։

Ընդլայնած կադրերի պատրաստման բնագավառում, ինչպես տեսանք, զգալի հաջողություններ էին ձեռք բերվել, այնուամենայնիվ ինչպես ինժեներա-տեխնիկական, այնպես էլ բանվորական կադրերի պրոբլեմը շարունակում էր մնալ երկրի սոցիալիստական վերակառուցման նեղ տեղերից մեկը։ Բավական է ասել, որ 1929 թ. Դանդեզուրի կոմբինատում յուրաքանչյուր 115 բանվոր-ծառայողին ընկնում էր մեկ ինժեներ և մեկ տեխնիկ։ Լավ չէր դրությունը նաև մյուս ձեռնարկություններում։ Բանվորությունը, որի կազմը խիստ հասուն էր, հիմնականում մասնագիտական պատրաստություն չուներ, ավելին, նրա մեծամասնությունը անգրագետ էր։ Նման պայմաններում կադրերի պրոբլեմի լուծումը, իր բոլոր կողմերով, պահանջում էր երկարատև և համառ աշխատանք։

Կուլտուրական ռևոլյուցիայի իրականացման բնագավառում կարևոր դեր ունեին կատարելու կուլտուրական-լուսավորական հիմնարկները։ Բացվում են բազմաթիվ ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ։ Ծավալվում էր «Գրագարանային արշավը», որի բովանդակությունը արտահայտվում էր «Գիրքը մասսաներին» լոզունգով։ Ավելանում էր ռադիոյի և շրջիկ կինոների թիվը։ Սկսվել էին ռադիոֆիկացման աշխատանքները։ Զարգանում էր տպագրության գործը։ Միայն 1929 թ. լույս տեսավ 1,4 միլիոն տպաքանակով 457 անուն գիրք, նախորդ տարվա 372-ի դիմաց։ Նույն թվականին Հայպետհրատը հրատարակեց իր հազարերորդ գիրքը։ Լույս էր տեսնում տասը անուն թերթ, այդ թվում ինը հայերեն («Խորհրդային Հայաստան», «Ավանդարդ», «Բան-

վոր», «Մաճկալ», «Պիոներ կանչ» և այլն) և 22 ամսագիր («Լենինյան ուղի», «Նոր ուղի», «Երիտասարդ բոլշևիկ», «Գյուղի կոմունիստ», «Հայաստանի աշխատավորուհի», «Գրական դիրքերում», «Աշխատանք», «Հոկտեմբերիկ» և այլն)։

Սովետական Հայաստանում առաջին քայլերն էին կատարվել գիտությունը և արվեստը զարգացնելու ուղղությամբ։ Գիտահետազոտական աշխատանքի հիմնական կենտրոնը Երևանի Պետական համալսարանը և Գիտության ու Արվեստի ինստիտուտն էին, որոնք զբաղվում էին գլխավորապես հայագիտությամբ։ Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի օգնությամբ և ակադեմիկոս Լեվինսոնի նախաձեռնությամբ Սևանա լճի ավազանում կատարվում էին հիդրոլոգիական, երկրաբանական և այլ հետազոտություններ՝ լճի ջուրը էլեկտրական էներգիա ստանալու և առոգման նպատակներով օգտագործելու համար։ Այդ ուսումնասիրությունները սկսվել էին 1927 թ. և շարունակվեցին մի քանի տարի։ Հայաստանի պղնձահանքերի, տուֆի և մյուս քարերի հանքային պաշարները պարզելու գործում բեղմնավոր աշխատանք էր կատարում անվանի երկրաբան-ինժեներ Հ. Կարապետյանը։

Մանկավարժական և գիտական մեծ աշխատանք էին կատարում Հ. Մանանդյանը, Լեոն, Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանը, Սմբատյանը, Հ. Ազատյանը, Գր. Ղափանցյանը, Ս. Ղամբարյանը և ուրիշներ։ Սակայն գիտությունը դեռևս լայն զարգացում չէր ստացել համապատասխան կադրերի պակասության և նյութական-տեխնիկական բավարար բազայի բացակայության պատճառով։

Սովետահայ արվեստի ճյուղերից զգալի հաջողություններ էին ձեռք բերել թատրոնը, կինոն, երաժշտությունը, նկարչությունը և այլն։ 1929 թ. նոյեմբերին ռեսպուբլիկան հարստացավ արվեստի նոր օջախով՝ սկսեց աշխատել Պատանի հանդիսատեսի Պետական թատրոնը։ Երևանի և Լենինականի թատրոններում աճում էին շնորհալի ստեղծագործական կոլեկտիվներ։ Բեմական գործունեության 30-ամյակի

կապակցությամբ և բեղմնավոր աշխատանքի համար 1929 թ. Երևանի Պետական թատրոնի դերասանուհի Օլգա Գուլազյանին շնորհվեց Հայկական ԽՍՀ վաստակավոր դերասանուհու կոչում։ Վերջին տարիների ընթացքում Հայկինոն թողարկեց իր առաջին հաջող կինոֆիլմերը։

Իր կյանքի վերջին տարիները անցկացնելով Սովետական Հայաստանում, ստեղծագործական մեծ աշխատանք կատարեց հայկական կլասիկ երաժշտության ամենապայծառ դեմքերից մեկը՝ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը (մահացավ 1928 թ.)։ Բարձր գնահատելով Ա. Սպենդիարյանի ծառայությունները հայ երաժշտական կուլտուրայի զարգացման գործում, երաժշտական գործունեության 25-ամյակի կապակցությամբ 1926 թ. ՀԽՍՀ Կենտգործկոմը նրան շնորհեց ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստի կոչում։ Վերջին տարիներին նա ավարտեց հայրենասիրական «Ալմաստ» օպերան և սքանչելի «Երևանյան էսյուդներ» սիմֆոնիկ երկը։ 1929 թ. հունիսի 27-ին Մոսկվայի Մեծ թատրոնում կայացավ «Ալմաստ» օպերայի փորձնական բեմադրությունը։ 20-ական թվականներին բավականին աշխատանք կատարեցին նշանավոր կոմպոզիտորներ Արմեն և Նիկողայոս Տիգրանյանները, Ռոմանոս և Սպիրիդոն Մելիքյանները։ Նկարչական արվեստի ասպարեզում արժեքավոր գործեր էին ստեղծում Մարտիրոս Սարյանը, Սեդրակ Աղաջանյանը և ուրիշներ։ Այդ ժամանակաշրջանի գործերից հիշատակության արժանի են Մարտիրոս Սարյանի Ալավերդու պղնձաձուլական գործարանը պատկերող և այլ նկարներ։ 1926 թ. ՀԽՍՀ Կենտգործկոմը Մ. Սարյանին շնորհեց ռեսպուբլիկայի ժողովրդական նկարչի կոչում (1960 թ. նրան շնորհվեց ՍՍՌՄ ժողովրդական նկարչի կոչում, իսկ 1961 թ.՝ Լենինյան մրցանակ)։ Քանդակագործ Արա Սարգսյանը կերտեց Ս. Սպանդարյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի կիսանդրի-հուշարձանները։

Գաղափարական անհաշտ պայքարի պայմաններում զարգանում էր սովետահայ գրականությունը։ Սովետահայ

գրականությունը, ինչպես ամբողջ սովետական գրականությունը, ձևավորվեց և զարգանում էր Կոմունիստական պարտիայի որոշումների, գրականության վերաբերյալ Լենինյան սկզբունքների հիման վրա։

1929 թ. «ուղեկից» և պրոլետար գրողները միավորվեցին «Հայաստանի սովետական գրողների ֆեդերացիայի» մեջ։ Ֆեդերացիան անվերապահորեն ընդունելով ՌԿ(բ)Պ Կենտկոմի 1925 թ. «Պարտիայի քաղաքականությունը գեղարվեստական գրականության բնագավառում» պատմական բանաձևը, որը որոշում էր սովետական գրականության զարգացման ուղին և խնդիրները, ընդունեց դեկլարացիա։ Դեկլարացիան Հայաստանի սովետական գրողների ֆեդերացիայի նպատակն էր համարում մեր ռեսպուբլիկայի գրողների կենտրոնակ ուժերի համախմբումը, նրանց դաստիարակումը մարքս-լենինյան աշխարհայացքով, գրողների գրական-կուլտուրական մակարդակի բարձրացումը, գրականության և գրողների սերտ կապը մասսաների հետ, անխնա պայքարը բուրժուական և ազգայնական գաղափարախոսության բոլոր արտահայտությունների դեմ։ Գրողների ստեղծագործական մեթոդը, ինչպես սովորեցնում էր Կոմունիստական պարտիան, սոցիալիստական ռեալիզմն է, սոցիալիզմ կառուցող մարդու աշխատանքի ու պայքարի գեղարվեստական վերարտադրումը[1]։

Ինդուստրացման տարիներին ստեղծագործում էին հայ պրոլետարական-սոցիալիստական գրականության ակտիվ գործիչներ Հ. Հակոբյանը, Ե. Չարենցը, Արազին, երիտասարդ գրողներ Ա. Բակունցը, Ն. Զարյանը, Ա. Վշտունին, Հր. Քոչարը, Ալազանը, Գ. Մահարին, Գ. Սարյանը, Սիրասը, Վ. Նորենցը, Արաքսը, Սարմենը և ուրիշներ։ Գրական լայն գործունեություն ծավալեցին հին սերնդի ներկայացուցիչներ Ավ. Իսահակյանը, Շիրվանզադեն, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Միր. Մանվելյանը, Աթ. Խնկոյանը, Հ. Հայրապետյանը և մի շարք այլ գրողներ։

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1 մայիսի 1929։

Ռեսպուբլիկայի կուլտուրական և գրական կյանքում խոշորագույն իրադարձություն էր 1928 թ. պրոլետարական գրականության մեծագույն ներկայացուցիչ Մաքսիմ Գորկու ժամանումը Հայաստան, որը նույն թվականին արտասահմանից վերադարձել էր Սովետական Միություն։

Սովետահայ գրականության թեմատիկան նվիրված էր Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի և քաղաքացիական կռիվների հերոսներին ու մարտիկներին, սոցիալիստական կյանք կառուցող մարդկանց, նրանց աշխատանքին ու պայքարին։

Առաջին հնգամյակի սկզբում սոցիալիստական շինարարության մեջ կատարված բեկումը իր արտահայտությունը գտավ նաև գրականության մեջ։ Սովետահայ գրողների մոտ սկսեց իշխող տեղ գրավել սոցիալիստական շինարարության հերոիկան, ինդուստրացման և գյուղի սոցիալիստական վերափոխման համար մղած պայքարը։

1929 թ. լույս տեսան Հ. Հակոբյանի «Վեներդրադյան պոեմ»-ը առաջին հատվածները։ Սովետական մարդկանց պայքարին նվիրված Հ. Հակոբյանի գործերի մեջ հատուկ տեղ են գրավում «Բոլշևիկ է Շիրկանալը», «Վոլխովստրոյ» գործերը և Զորագէսի ու Ռիոնդէսի շինարարներին գովերգող բանաստեղծությունները։

Գրական հարուստ արտադրանք ավելց տաղանդավոր բանաստեղծ Եղիշե Չարենցը։ Նա պատկերում էր Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, Սովետական իշխանության հաստատման համար Հայաստանի աշխատավորների մղած հերոսական պայքարը։ Ե. Չարենցը իր տաղանդի ամբողջ ուժով մի շարք գործերով գովերգեց մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինին։

Ստ. Զորյանի «Վարդաձորի կոմունը» և Դ. Դեմիրճյանի «Ռաշիդ» վիպակները, որոնք լույս տեսան 1929 թ., նվիրված են գյուղում ծավալված դասակարգային պայքարի, գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման պատկերմա-

նը։ Այդ ժամանակ լույս տեսան նաև Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»-ը, Արազու մի շարք պատմվածքները և այլն։

Սովետահայ գրողները գեղարվեստական խոսքի ուժով օգնում էին Կոմունիստական պարտիային՝ աշխատավոր մասսաներին կոմունիզմի ոգով դաստիարակելու գործում։

Հայաստանի Կոմունիստական պարտիան և կառավարությունը, ղեկավարվելով Լենինյան ազգային քաղաքականությամբ, մեծ օգնություն էին ցույց տալիս ռեսպուբլիկայի ազգային փոքրամասնություններին՝ նրանց սոցիալիստական շինարարությանը մասնակից դարձնելու, կուլտուրական և տնտեսական հետամնացությունը վերացնելու համար։ Աղբրբեջանցիների, քրդերի, ռուսների և մյուս ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքը ուներ կարևոր նշանակություն։

1927/28 ուսումնական տարում Հայաստանում գործում էր մոտ հարյուր աղրբեջանական դպրոց, հիմնականում տարրական, որտեղ սովորում էին 4437 տղաներ և աղջիկներ։ 1925 թ. Երևանում գործում էր աղրբեջանական մանկավարժական տեխնիկումը, դրամատիկական թատրոնը։ Աղրբեջանական բաժիններ էին բացվել նաև Երևանի բանվորական ֆակուլտետում, գյուղատնտեսական տեխնիկումում, պարտիական դպրոցում և այլն։

Աղրբեջաներեն լեզվով լույս էին տեսնում «Կզել շեֆակ» («Կարմիր արշալույս») թերթը և «Խալք մարիֆի» («Ժողովրդական լուսավորություն») ամսագիրը։

Հայաստանի կառավարության ջանքերով քուրդ ժողովրդի համար ստեղծվեց այբուբեն, որը հիմք ծառայեց քրդերի կուլտուրական զարգացման համար։ 1929/30 ուսումնական տարում քրդական դպրոցների թիվը հասնում էր 18-ի, 500 նաշակերտով։ Տասնյակ քրդեր սովորում էին Լենինգրադի Ազգային փոքրամասնությունների համալսարանում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Աղրբեջանական, ռուսական, քրդական, ասորական և հունական դպրոցների թիվը 1927/28 ուսումնական տարում հասնում էր 150-ի, մոտ 7400 աշակերտներով։

Ազգային փոքրամասնությունների զգալի թվով ներկայացուցիչներ 1928—1929 թթ. ընտրվեցին տեղական սովետների, գավառային և գավառակային գործադիր կոմիտեների անդամներ։

1929 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանում ազգային փոքրամասնությունների 39 գյուղերում կազմակերպվել էին կոլտնտեսություններ։

* * *

Ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանի հաջող կենսագործման հիման վրա առաջին քայլերը կատարվեցին աշխատավորների նյութական դրությունը բարելավելու և կուլտուրական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։ Այդ բնագավառներում կային շատ դժվարություններ, որոնք հաղթահարվում էին աստիճանաբար։ Պետությունը զգալի միջոցներ էր տրամադրում կուլտուրական շինարարության զարգացմանը։ Ժողովրդական լուսավորության զարգացման, անգրագիտության վերացման բնագավառում ձեռք բերվեցին առաջին լուրջ հաջողությունները, որոնք հիմք էին ստեղծում կուլտուրական շինարարության հնգամյա պլանը կատարելու համար։

Սովետական Հայաստանում զարգանում էր ձևով ազգային բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, որը իդեոլոգիական սուր պայքարի պայմաններում ճանապարհ էր հարթում իր հետագա վերելքի համար։

ՎԵՐՋԱԲԱՆ

Մեր երկրի սոցիալիստական շինարարության առաջին հնգամյակի առաջին տարին մեծ բեկման տարի հանդիսացավ ինչպես ՍՍՌՄ, այնպես էլ Սովետական Հայաստանի համար։ Արմատական տեղաշարժեր կատարվեցին սոցիալիստական շինարարությունն բոլոր բնագավառներում։ Բանվոր դասակարգը, ծավալելով սոցիալիստական մրցումը, մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղավ սոցիալիզմի նյութատեխնիկական հիմքի ստեղծման հնգամյա պլանի կենսագործմանը։ Սոցիալիստական մրցության և հարվածայնության շնորհիվ մեծ հաջողություններ ձեռք բերվեցին աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու բնագավառում, ավելի հեշտությամբ էին հաղթահարվում ինդուստրացման հետ կապված դժվարությունները, վերացվում էին արտադրության մեջ գոյություն ունեցող թերությունները։

Քաղաքի աշխատավորներից ետ չմնացին աշխատավոր գյուղացիները։ Զարգանում էր գյուղատնտեսական արտադրական կոոպերացիան, գյուղի աշխատավորները մասսայաբար շրջադարձ կատարեցին դեպի սոցիալիստական շինարարությունը, կազմակերպելով կոլեկտիվ տնտեսություններ։ Դա արմատական բեկում էր սովետական գյուղի զարգացման մեջ։

Վերելք ապրեց նաև կուլտուրական շինարարությունը։ Անգրագիտության վերացման գործի մեջ մասսաների ներ-

գրավումը մեծ բեկման տարվա կարևոր նվաճումներից էր, կուլտուրական ռևոլյուցիայի ապահովման երաշխիքը։

Առաջին հնգամյա պլանի իրագործումը ընթանում էր սուր դասակարգային պայքարի պայմաններում, որը անխուսափելի էր, քանի դեռ սոցիալիստական շինարարության որոշ բնագավառներում լուծված չէր «ով-ում» հարցը։ Այդ պայքարում ավելի էր ամրապնդվում բանվորների և գյուղացիների դաշինքը՝ սովետական իշխանության քաղաքական հիմքը։

Հայաստանի տնտեսական և կուլտուրական հետամնացության լիկվիդացիայի ուղղությամբ առաջին խոշոր քայլերն էին արվել։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Հայաստանի բանվորների և գյուղացիների նվաճած հաղթանակները լենինյան ազգային քաղաքականության կենսագործման արդյունքն էին։

1929 թ. հաջողությունները վկայում էին այն մասին, որ հնգամյա պլանը կկատարվի ժամկետից շուտ։ Այդ հողի վրա ծագեց «Հնգամյակը չորս տարում» լոզունգը։

Այդ բոլորի շնորհիվ ՀԿ(բ)Պ VII համագումարը (1930 թ. մայիս) արձանագրեց, որ «Գյուղատնտեսական հետամնաց երկրից Հայաստանը դառնում է գյուղատնտեսական-ինդուստրիալ երկիր»[1]։

Ոգեշնչելով Հայաստանի բանվորներին, գյուղացիներին և բոլոր աշխատավորներին սովետական կարգերի հաղթանակի 10-րդ տարեդարձի առթիվ, Սովետական Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն գրել է. «Խորհրդային Հայաստանը արդեն տվել է սոցիալիստական շինարարության մի օրինակ, որից կարող են դաս վերցնել Արևելքի ճնշված ժողովուրդները և սովորել, թե ինչպես պետք է կառուցել և զարգացնել սեփական էկոնոմիկան ու կուլտուրան»[2]։

Զարգացնելով հնգամյակի սկզբում ծնված սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունը, այն դարձնելով

---

[1] Հայաստանի Կոմունիստական (բ) Կուսակցության VII համագումարի որոշումները, էջ 4։

[2] «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1930։

իրենց աշխատանքի հիմնական մեթոդը, Հայաստանի աշխատավորները Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին ժամկետից շուտ կատարեցին առաջին հնգամյա պլանը։ Այդ տարիներին մեր ռեսպուբլիկայում գործարկվեցին կամ կառուցվում էին մի շարք խոշոր ինդուստրիալ օբյեկտներ, ինչպես Զորագեսը և Քանաքեռդեսը, Երևանի և Լենինականի էլեկտրակայանների երկրորդ հերթերը, Ալավերդու պղնձաձուլարանը և Ղափանի ֆլոտացիոն գործարանը, Ղարաքիլիսայի և Ալավերդու քիմիական կոմբինատները, Արարատի ցեմենտի կոմբինատը, Երևանի Կիրովի անվան գործարանը, որը արհեստական կաուչուկի արտադրության առաջին գործարանն է Սովետական Միությունում և այլն։ Հնգամյակի ընթացքում արդյունաբերության համախառն արտադրանքն ավելացավ 2,3 անգամ, այդ թվում խոշոր արդյունաբերության արտադրանքը՝ 4,3 անգամ[1]։ Արդյունաբերության տեսակարար կշիռը ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ 1928 թ. 21,7 տոկոսի դիմաց 1932 թ. բարձրացավ 57,2 տոկոսի[2]։ Ռեալ դյուցիոն վերափոխումներ կատարվեցին գյուղում։ Կոլտնտեսությունների թիվը 1932 թ. հասավ 893-ի՝ 1928 թ. 55-ի դիմաց, իսկ գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման տոկոսը նույն ժամանակամիջոցում 0,7-ից բարձրացավ 37,9 տոկոսի[3]։

Հայաստանը ագրարային երկրից դարձավ ինդուստրիալ-կոլտնտեսային ռեսպուբլիկա։ Սոցիալիստական ինդուստրացման շնորհիվ իսպառ վերացավ գործազրկությունը։ Համատարած կոլեկտիվացման հիման վրա գյուղում վերացվեց կուլակությունը։ Զգալի չափով բարելավվեց աշխատավորների նյութական-կուլտուրական դրությունը։ Կոլտնտեսային կարգերի շնորհիվ գյուղում վերացավ աղքատությունն

[1] Советская Армения за 40 лет, статистический сборник, Ереван, 1960, стр. 46.

[2] Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, էջ 2։

[3] Советская Армения за 40 лет, статистический сборник, стр. 84—85.

ու շքավորությունը, ստեղծվեցին պայմաններ կոլտնտեսականների ունևոր կյանքի համար։

Հնգամյա պլանը ամբողջ երկրում կատարվեց չորս տարի երեք ամսում։ Առաջին հնգամյակը Սովետական Միության համար վիթխարի շինարարության ժամանակաշրջան էր։ Այդ ժամանակ յուրաքանչյուր օր շարք էր մտնում մեկ արդյունաբերական ձեռնարկություն, ստեղծվում էր երկու սովխոզ. 1—2 ՄՏԿ, մոտ 115 կոլտնտեսություն։ «Դա արտասովոր շինարարություն էր։ Կառուցում էին ո՛չ թե սոսկ գործարաններ և հողագործական տնտեսություններ, այլ սոցիալիստական տիպի ձեռնարկություններ։ Յուրաքանչյուր նոր գործարան, կոլտնտեսություն, մեքենա-տրակտորային կայան սոցիալիզմի նոր ամրոց էր»[1]։

Սովետական Միությունում իրագործվեց վիթխարի տեխնիկական վերափոխում, որի հետևանքով նա տեխնիկական տեսակետից դուրս եկավ աշխարհի ամենաառաջավոր երկրների շարքը։

Սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության մեջ արմատական ռևոլյուցիոն վերափոխումների, կուլտուրական ռևոլյուցիայի հաջողությունների, սովետական ժողովուրդների եռանդուն գործունեության հետևանքով Սովետական Միությունում կառուցվեց սոցիալիզմի հիմքը։ Առաջին հնգամյա պլանի հիմնական խնդիրը կատարված էր։

* * *

Անճանաչելիորեն փոխվել է Սովետական Հայաստանը անցած 40 տարվա ընթացքում։ Յարիզմի դաղութային հետամնաց անկյունը դարձել է սոցիալիստական ծաղկուն ռեսպուբլիկա, բազմաճյուղ զարգացած ինդուստրիայով, խոշոր սոցիալիստական գյուղատնտեսությամբ, առաջավոր կուլտուրայով և գիտությամբ։ Հայաստանում կառուցվել է ավելի

---

1 Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմություն, Հայպետհրատ, 1959, էջ 533։

քան 1500 արդյունաբերական ձեռնարկություն։ 1960 թ. արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. մակարդակը գերազանցեց 70 անգամ։ Նրա արտադրանքի բազմաթիվ տեսակներ արտահանվում են ոչ միայն սոցիալական մյուս ռեսպուբլիկաները, այլև արտասահմանյան տասնյակ երկրներ։ 1958 թ. համախառն արտադրանքի միայն տարեկան աճը հինգ անգամ ավելի էր, քան 1913 թ. ամբողջ արտադրանքը։ Իսկ էլեկտրակայանները յուրաքանչյուր օրում մոտ 1,5 անգամ ավելի էներգիա են արտադրում՝ ամբողջ 1913 թ. համեմատությամբ[1]։ Յուրաքանչյուր բնակչին ընկնող էլեկտրաէներգիայի չափով Հայաստանը առաջ է անցել կապիտալիստական շատ երկրներից, իսկ Թուրքիայի և Իրանի համեմատությամբ Հայաստանի ամեն մի բնակչին մի քանի տասնյակ անգամ ավելի էներգիա է ընկնում։ Էլեկտրամեքենաշինությունը, կռուչուկի արտադրությունը, պղնձի, մոլիբդենի, քիմիական, սննդի արդյունաբերությունը և այլն, որոնք ռեսպուբլիկայում առաջատար ճյուղերից են, կարևոր տեղ են գրավում Սովետական Միության արդյունաբերության մեջ։ Հայաստանը տալիս է արդյունաբերության արտադրանքի այնպիսի կարևորագույն տեսակներ, ինչպիսիք են պղինձը և մոլիբդենը, շարժական էլեկտրակայանները և տրանսֆորմատորները, հաստոցները և էլեկտրաճշգրիտ մեքենաները, սինթետիկ կաուչուկը և քիմիական պարարտանյութերը, պահածոները, խմիչքները և արտադրանքի տասնյակ այլ տեսակներ։

Զգալի վերելք է ապրել գյուղատնտեսությունը։ Կոլտնտեսային կարգերի շնորհիվ գյուղատնտեսության համախառն արտադրանքն ավելացել է զգալի չափով։ Գյուղատնտեսությունը հատկապես արագ է զարգանում 1953 թ. սկսած՝ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, գյուղատնտե-

[1] А. Кочинян, Армения в семилетке, Госполитиздат, 1960, стр. 6—7.

սության շեշտակի վերելքի պլանին համաձայն, Ռեսպուբլիկայի սոցիալիստական գյուղատնտեսության աշխատողները 1958 թ. ստացան բարձր արդյունքներ։ Այդ թվականին ստացվեց բամբակի ռեկորդային բերք, 1953 թ. համեմատությամբ շաքարի ճակնդեղի արտադրությունն ավելացավ 39,6 տոկոսով, բարձրացավ ծխախոտի բերքատվությունը և այլն։

Բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող գյուղատնտեսական մթերքների քանակով ԱՄՆ-ին հասնելու և անցնելու մրցության մեջ մեծ հաջողություններ են ձեռք բերել Հայաստանի կոլտնտեսությունների և սովխոզների աշխատողները։

Գյուղատնտեսական մթերքների արտադրությունը ավելացնելու և դրանք պետությանը վաճառելու պլանները կատարելու և գերակատարելու համար 1958 թ. Հայկական ՍՍՌ-ն արժանացավ բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի։

Ուրախ ու երջանիկ է դարձել հայ ժողովրդի կյանքը։ Հոգատարությունը աշխատավորների նյութական և կուլտուրական անընդհատ վերելքի նկատմամբ պարտիայի և կառավարության գործունեության գլխավոր օրենքն է։ Մի քանի անգամ աճել են աղգային եկամուտը, բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձը և կոլտնտեսականների եկամուտները։ Հայաստանը պատված է կուլտուրայի, լուսավորության և գիտական հիմնարկների լայն ցանցով։ Մեր ռեսպուբլիկայի շատ գիտնականների անունները հայտնի են ոչ միայն Սովետական Միությունում, այլև նրա սահմաններից դուրս։

Սովետական Միության, և ոչ միայն նրա, պատմության մեջ խոշորագույն իրադարձություն էր Կոմունիստական պարտիայի XXI համագումարը (1959), որը նշանավորեց մեր երկրի թևակոխումը պատմական նոր ժամանակաշրջան՝ կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանը։ Մարդկության վաղեմի երազանքը՝ կոմունիզմը սովետական ժողովուրդների աշխատանքով այժմ դառնում է իրականություն։ Համագումարի կողմից ընդունված մեր երկրի զարգացման յոթնամյա

(1959—1965 թթ.) պլանը վճռական քայլ է Սովետական Միությունում կոմունիզմի կառուցման ճանապարհին և ԱՄՆ-ի հետ խաղաղ տնտեսական մրցության մեջ, ՍՍՌՄ-ի հիմնական տնտեսական խնդիրը իրականացնելու բնագավառում։

Յոթնամյա պլանը աշխատանքային չտեսնված խանդավառություն առաջացրեց մեր Հայրենիքի բոլոր աշխատավորների՝ բանվորների և կոլտնտեսականների շրջանում։ Դրա փայլուն վկայությունն է պլանը ժամանակից շուտ կատարելու համար և կոմունիստական աշխատանքի բրիգադի և կոմունիստական հարվածային կոչման համար ծավալված պայքարը, որը նշանավորում է սոցիալիստական մրցության պատմության նոր էտապի սկիզբը։

ՀԱՄԽ-ի տվյալներով մինչև 1960 թ. ապրիլը Հայաստանում կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի կոչման համար պայքարում էին 1334 բրիգադ և արտադրական տեղամաս, որոնցում ընդգրկված են 17.441 բանվորներ[1]։ Մինչև 1961 թ. ապրիլը 545 բրիգադ, հերթափոխություն, աշխատամաս և ցեխ արդեն արժանացել էին այդ բարձր կոչմանը։ 2.700 մարդու շնորհվել էր կոմունիստական աշխատանքի հարվածային կոչում[2]։ Հայ ժողովուրդը քաղաքական բարձր ոգևորությամբ և արտադրական մեծ նվաճումներով տոնեց Հայաստանում սովետական իշխանության հաստատման 40-րդ տարեդարձը։ Պատմական կարճ ժամանակամիջոցում հայ ժողովուրդը սովետական բազմազգ ժողովուրդների ընտանիքում հասել է վիթխարի հաջողություններ, որի մասին նա նախկինում երազել նույնիսկ չէր կարող։ Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի ստեղծման 40-րդ տարեդարձի առթիվ Երևանում 1961 թ. մայիսի 6-ին կայացած հանդիսավոր նիս-

---

1 «Սովետական Հայաստան», 16 ապրիլի 1960 (ՀԱՄԽ-ի հաշվավությունը Հայաստանի արհմիությունների IX համագումարին)։

2 «Սովետական Հայաստան», 27 ապրիլի 1961։

տում ընկ. Խրուշչովն ասաց. «Հայաստանի բազմադարյան պատմության մեջ քառասուն տարին շատ փոքր ժամանակամիջոց է, բայց հենց այդ տարիները նշանավորում են հայ ժողովրդի նոր կյանքի սկիզբը։ Սոցիալիզմի կենարար ուժը հայ ժողովրդին բերեց մեծ վերածնունդ, նրա դիրքության ու կուլտուրայի, բարեկեցության վերելք, նրա տաղանդների ու ձիրքերի ծաղկում։ Սովետական Հայաստանը արժանավոր տեղ է գրավում մեր Հայրենիքի ռեսպուբլիկաների համատեղության մեջ»[1]։

Սովետական կառավարությունը և Կոմունիստական պարտիան իրականացնում են արմատական միջոցառումներ, որոնք էլ ավելի են բարելավում ժողովրդի նյութական և կուլտուրական դրությունը։ Աշխատավարձի կարգավորման հետ միասին իրականացվում է ցածր աշխատավարձերի բարձրացում, 1960 թ. ավարտվեց անցումը ութ ժամից՝ յոթժամյա և մասամբ վեցժամյա աշխատանքային օրվա, ծավալվում է բնակարանային շինարարությունը, 1960 թ. հոկտեմբերից սկսած վերացվում են բանվորներից և ծառայողներից գանձվող հարկերը և այլն։ Սովետական կառավարությունը և Կոմունիստական պարտիան միջոցառումներ են մշակել բոլոր տեսակի սպառման առարկաներով ամենամոտ ապագայում կապիտալիստական ամենահարուստ երկրի՝ ԱՄՆ-ի արտադրության և սպառման մակարդակին հասնելու համար։ Այդ ամենը վառ կերպով ցույց է տալիս, որ ժողովրդի բարօրության նկատմամբ հոգատարությունը Սովետական պետության գործունեության բարձրագույն օրենքն է։

Սովետական երկիրը գտնվում է իր ուժերի ծաղկման շրջանում։ Ընթանալով ինդուստրացման լենինյան ուղիով, սովետական ժողովուրդը մեր երկիրը հասցրեց չտեսնված

---

1 Ն. Ս. Խրուշչով. Ճառ Երևան քաղաքում տեղի ունեցած հանդիսավոր նիստում՝ նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակին։ Հայպետհրատ, 1961, էջ 3։

քարձրության։ Պատմական կարճ ժամանակամիջոցում լիկվիդացնելով իր տնտեսական-տեխնիկական հետամնացությունը, մեր Հայրենիքը առաջ անցավ զարգացած կապիտալիստական երկրներից և տնտեսական տեսակետից գրավեց երկրորդ տեղը աշխարհում և այժմ հաջողությամբ կենսագործում է արդյունաբերական արտադրությամբ ԱՄՆ-ին հասնելու և նրանից անցնելու խնդիրը։ Գյուղատնտեսական արտադրության մի շարք ճյուղերում մենք արդեն հասել ենք ԱՄՆ-ին։ Մեր երկիրը այժմ աշխարհում առաջին տեղն է գրավում ժողովրդական կրթության և դիտության զարգացման մակարդակով, մի շարք բնագավառներում՝ տեխնիկական առաջադիմությամբ։

Սովետական ժողովուրդը իրականացրել է սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակը։ Սոցիալիզմի հաղթանակը ձեռք է բերվել մեր ժողովրդի հերոսական աշխատանքով, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելու և մեծագույն զոհողությունների գնով։ «Ի վնաս սպառման, ի վնաս շատ ամենակենսական բաների, խնայողություն անելով նույնիսկ դպրոցների ասպարեզում,—ասել է ընկ. Խրուշչովը ՍՍՌՄ Գերագույն Սովետի սեսիայում 1960 թ. մայիսի 5-ին տված զեկուցման մեջ,—սովետական մարդիկ ստեղծեցին իրենց հայրենական ծանր ինդուստրիան, գիտակցորեն զոհաբերություններ կրեցին, բայց համառորեն կառուցեցին գործարաններ և ֆաբրիկաներ։ Եվ դա տվեց իր հիանալի պտուղները»[1]։

Այդ բոլորի շնորհիվ սովետական ժողովուրդը հնարավորություն է ստեղծել իրականություն դարձնելու մարդկության վաղեմի երազանքը՝ կոմունիզմը։ Կոմունիզմի կառուցման պայքարի ծրագիրը տվեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXII համագումարը, որը կայացավ 1961 թ. հոկտեմբերին։ Համագումարի որոշումները համաշխարհային պատմական նշանակություն ունեն Սովետական Միության, սոցիալիստական լագերի երկրների ժողովուրդնե-

---

1 «Սովետական Հայաստան», 7 մայիսի 1960։

րի և աշխարհի ամբողջ առաջադեմ մարդկության համար: Նա ընդունեց մեր երկրում կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, Սովետական Միության ժողովուրդների աշխատանքային ծրագիրը առաջիկա քսանամյակում: Համագումարը հաստատեց ՍՄԿՊ ծրագիրը, որն իրավամբ անվանում են XX դարի Կոմունիստական մանիֆեստ:

ՍՄԿՊ XXII համագումարի՝ կոմունիզմի կառուցման համագումարի որոշումները քաղաքական և արտադրական մեծագույն խանդավառություն են առաջացրել Հայաստանի աշխատավորների մեջ: Նրանք մեծ ոգևորությամբ ուսումնասիրում են համագումարի նյութերը, որոնք նոր ուժով են ոգեշնչում ստեղծագործելու, բազմապատկելու երկրի նյութական հարստությունները՝ հանուն սովետական մարդկանց բարգավաճության, հանուն լավագույն կյանքի, որպիսին կվիճակվի նրանց ոչ այնքան հեռու ապագայում: Սովետական Հայաստանը առաջիկա քսանամյակում կկատարի վիթխարի թռիչք՝ էկոնոմիկայի, կուլտուրայի և գիտության զարգացման ճանապարհին: Դրա հիմքերը մեր Հայրենիքի հզորությունն է, սովետական ժողովրդի աշխատանքային բարձր խանդավառությունը: Առաջին հնգամյակի սկզբին՝ մեծ բեկման տարում, սովետական բանվոր դասակարգի ծավալած և զարգացրած սոցիալիստական մրցումը, որը անցած պատմական ժամանակաշրջանում հարստացել է բազմաթիվ նոր ձևերով, հզոր զենք է մեր աշխատավորների ձեռքին՝ կոմունիզմը՝ ամենաարդարացի հասարակարգը, իրականություն դարձնելու պայքարում:

Սովետական Միության Կոմունիստական պարտիան անշեղորեն ղեկավարվելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով, սովետական ժողովրդին առաջնորդում է դեպի կոմունիզմի հաղթանակը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Գլուխ առաջին—Հայաստանի առաջին հեղափոխ պլանը։ Ռեսպուբլիկայի Սովետների վերերորդ համագումարը 15

Գլուխ երկրորդ—Սոցիալիստական մրցության ծավալումը . . 45

Գլուխ երրորդ—Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նախապատրաստումը։ Մասսայական կոլտնտեսային շարժման սկիզբը 98

Գլուխ չորրորդ—Դասակարգային պայքարը և սոցիալիզմի հակառակորդների դիմադրության ճնշումը 134

Գլուխ հինգերորդ—Աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացումը և պայքարը կուլտուրական վերելքի համար . 155

Վերջաբան 175

ՀԱՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱՀԱՊԵՏԻ ԳԱԶԱԽԵՑՅԱՆ
ВЛАДИМИР НАГАПЕТОВИЧ КАЗАХЕЦЯН

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՆՔ ԲԵԿՄԱՆ ՏԱՐՈՒՄ

Պատ. խմբագիր՝ Հ. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Ռ. Խ. ՄԱՆՈՅԱՆ
Նկարչական ձևավորումը՝ Կ. Հ. ՅՈՒԹՈՒՆՋՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Փ. Հ. ՄԱԴԱՆՅԱՆ

ՎՖ 60424, պատվեր 339, հրատ. 2001. Եշ 696, տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 28/VII 1961 թ., ստորագրված է տպագրության 16/II 1962 թ., տպագր 11 63 մամուլ, հրատ. 7,75 մամուլ, թուղթ 84×108¹/₃₂,
Գինը 22 կոպ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան,
Երևան, Բաբեկյանության 24

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0011217

Գինը 22 կ.

ЦЕНА
II
15129

ԵՐԵՎԱՆ 1962